ARMECONOMBANK
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

կողմից թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ
օրը 18 ամիսը 05 տարին 2018

Գրանցված է ՀՀ ԿԲ վարչության
N 1/347Ա որոշմամբ:

Երևան 2018թ.

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1, հեռ. (+374 10) 510 910, ֆաքս (+374 10) 538 904, էլ. փոստ bank@aeb.am

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր տեղաբաշխողի ֆիրմային անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1, հեռ. (+374 10) 510 910, ֆաքս (+374 10) 538 904, էլ. փոստ bank@aeb.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթի տեսակը՝	Անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	100,000 (մեկ հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով, 50,000 (հիսուն հազար) հատ ՀՀ դրամով
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար, 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը՝	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝	Համապատասխան յուրաքանչյուր տրանշի ծավալի և անվանական արժեքի
Արժեկտրոնը՝	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից
Շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝	Եռամսյակային
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		Էջ
	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	**4**
Բաժին 1.	**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**	**6**
1	Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ	6
2	Բանկին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը	12
3	Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	14
4	Բանկի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ	15
5	Բանկի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը	15
6	Բանկի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ	17
7	Առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները	17
8	Պարտատոմսերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համառոտ նկարագիրը	18
9	Ամփոփ ֆինանսական տվյալներ	19
Բաժին 2.	**ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**	**20**
1	Ռիսկային գործոններ	20
2	Հիմնական տեղեկատվություն	21
3	Տեղեկատվություն կապված առաջարկվող (կարգավորվող շուկայում առևտրին թույլատրվող) պարտատոմսերի հետ	22
4	Առաջարկի ժամկետները և պայմանները	29
5	Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	34
6	Լրացուցիչ տեղեկատվություն	35
Բաժին 3.	**ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**	**36**
1	Անկախ աուդիտորները	36
2	Ռիսկային գործոններ	36
3	Տեղեկատվություն Բանկի մասին	44
4	Բիզնեսի նկարագիրը	52
5	Բանկի խմբի կառուցվածքը	61
6	Զարգացման վերջին միտումները	63
7	Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը	64
8	Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	66
9	Հսկող անձինք	80
10	Տեղեկատվություն Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	81
11	Էական պայմանագրերը	82
12	Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	82
13	Այլ տեղեկատվություն	82
14	Հավելվածներ	84
14.1	Հավելված 1. Թողարկման վերջնական պայմաններ	84
14.2	Հավելված 2. <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ կողմից թողարկված արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ /իրավաբանական անձ /	91
14.3	Հավելված 3. <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ կողմից թողարկված արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ /ֆիզ. անձ կամ անհատ ձեռնարկատեր/	93
14.4	Հավելված 4. Բանկի կազմակերպչական կառուցվածքը	95
14.5	Հավելված 5. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևեր	96
14.6	Հավելված 6. Ֆինանսական հաշվետվություններ	97

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ծրագրային ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ծրագրային ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք՝

(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սարիբեկ Սուքիասյան	*Խորհրդի նախագահ*		
Արմեն Նալչյան	*Խորհրդի անդամ, Խորհրդի նախագահի տեղակալ*		
Արամ Մելիքյան	*Խորհրդի անդամ*		
Լուիզա Պետրոսյան	*Խորհրդի անդամ, խորհրդի քարտուղար*		
Իննա Յաբբարովա	*Խորհրդի անդամ*		
Ռուբեն Հայրապետյան	*Խորհրդի անդամ*		
Արամ Խաչատրյան	*Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն*		
Ռուբեն Բաղալյան	*Վարչության նախագահի տեղակալ, Գործառնական գծով տնօրենի տեղակալ*		
Արտակ Առաքելյան	*Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ*		
Օնիկ Չիչյան	*Վարչության նախագահի տեղակալ, Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ*		

Աստղիկ Մանրիկյան	*Վարչության նախագահի տեղակալ, Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արփինե Փիլոսյան	*Վարչության նախագահի տեղակալ, Տեխնոլոգիաների և անվտանգության գծով տնօրենի տեղակալ*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միքայել Պողոսյան	*Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն-Գլխավոր հաշվապահ*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հայկ Ավետիսյան	*Վարչության անդամ, Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վրեժ Ջհանգիրյան	*Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վարդան Սարգսյան	Վարչության անդամ, Վարկավորման վարչության պետ		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Արամ Խաչատրյան	*Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն*		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը դիտվում է որպես Ծրագրային ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող պարտատոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ծրագրային ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ծրագրային ազդագիրը և ծրագրային ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Բանկի գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում՝ www.aeb.am:

1. **Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ**

1.1. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

անգլերեն՝ «ARMENIAN ECONOMY DEVELOPMENT BANK» OPEN JOINT STOCK COMPANY

ռուսերեն՝ «БАНК РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ АРМЕНИИ» ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

անգլերեն՝ «ARMECONOMBANK» OJSC

ռուսերեն՝ «АРМЭКОНОМБАНК» ОАО

1.2. Բանկի կազմակերպական-իրավական ձևը՝ բաց բաժնետրիրական ընկերություն:

1.3. Բանկի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1, գրանցման համարը՝ 1:

1.4. Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1,

1.5. Կապի միջոցները՝

հեռ. (+374 10) 510 910

ֆաքս (+374 10) 538 904

էլ. փոստ bank@aeb.am

ինտերնետային կայք www.aeb.am

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

1.6. Բանկին առնչվող և պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապնվել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ <<Դիլինգ կենտրոն>> վարչության պետ Ա. Հարությունյանի կամ նույն վարչության Արժեթղթերով գործառնությունների բաժնի որևէ աշխատակցի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 510 909:

1.7. Թողարկողի համառոտ պատմությունը.

Բանկը (նախկին ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական հանրապետական բանկ) Հայաստանի Հանրապետության պետական բանկերից առաջինն է վերակազմավորվել բաժնետիրական բանկի:

1991թ. փետրվարի 14-ի ՀՀ Մինիստրների խորհրդի №115 որոշմամբ ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական հանրապետական բանկի հիման վրա ստեղծվել է Հայաստանի Հանրապետության պետական ակցիոներական կոմերցիոն բանկը (Հայպետկոմբանկ):

1991թ. օգոստոսի 9-ի ՀՀ Մինիստրների խորհրդի №509 որոշմամբ բանկը վերակազմավորվել է Հայաստանի Հանրապետության պետական կոմերցիոն բանկ (Հայպետկոմբանկ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ գրանցվելով ՀՀ Կենտրոնական բանկում 1991թ. օգոստոսի 26-ին (գրանցում Թիվ 1):

1992թ. նոյեմբերի 16-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործառնություններ իրականացնելու №1 լիցենզիա:

1992թ. դեկտեմբերի 4-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր լիցենզիա №13:

1993թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ ԿԲ վարչության նսիտի որոշմամբ (արձանագրություն №40) Հայպետկոմբանկը վերագրանցվել է Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բաժնետիրական բանկի (Հայէկոնոմբանկ) (գրանցում՝ Թիվ 1/35)՝ ստանալով Թիվ 1/35 բանկային գործառնությունների իրականացման Արտոնագիր:

1994թ. հունվարի 21-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր լիցենզիա №13:

1995թ. ապրիլի 6-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է Թիվ 1 արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր արտոնագիր:

1996թ. հոկտեմբերի 31-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա Թիվ 1:

1998թ. հունիսի 8-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա Թիվ 1:

2001թ. նոյեմբերի 14-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա Թիվ 1:

2002թ. Բանկի բաժնետոմսերը ցուցակվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «B» հարթակում, կանոնադրական հիմնադրամը համալրվել է 300 մլն դրամով:

2003թ. Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 200 մլն դրամով:

2004թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի ու Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) միջև կնքվեց պայմանագիր, որով սկսվեց Բանկի կանոնադրական կապիտալում ՎԶԵԲ-ի մասնակցության գործընթացը, որի արդյունքում ՎԶԵԲ-ի մասնակցությունը Բանկի կանոնադրական կապիտալում կազմել է 25%+1 բաժնետոմս:

2005թ. Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 633.3 մլն դրամով:

2007թ. Փետրվարին Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը ՀՀ բանկային համակարգում առաջին անգամ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն շնորհեց ֆինանսական կայունության E+ և երկարաժամկետ ՀՀ դրամով ու արտարժույթով ավանդների B1 վարկանիշներ, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար): Ապրիլին, վերանայելով շնորհված վարկանիշները, Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը Բանկին արժանացրել է ավելի բարձր՝ ֆինանսական կայունության D- և ՀՀ դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների Ba3 վարկանիշների, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար):

2009թ. Բանկը դարձել է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի անդամ:

2011թ. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկն իրենց գործառույթներով հնարավոր առավելագույն ժամկետով (ևս երեք տարով) երկարաձգեց իր մասնակցությունը (25% +1 բաժնետոմս) «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կանոնադրական կապիտալում: Բանկը դարձել է "VISA" միջազգային վճարահաշվարկային համակարգի անդամ:

2013թ. Բանկը ստացել է ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագիր: «MoneyGram» վճարահաշվարկային համակարգը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհեց «Գերազանցության որակ» երկարաժամկետ և արդյունավետ համագործակցության հավաստագիր: Գերմանական Commerzbank AG-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհեց «Որակի գերազանցության» մրցանակ՝ 2013թ. միջազգային փոխանցումների բարձր որակ ապահովելու, ինչպես նաև անթերի և արագ իրականացնելու համար:

2014թ. Ասիական Զարգացման Բանկը Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհեց «Հայաստանում առաջատար գործընկեր բանկ» մրցանակ:

2014 թվականի դեկտեմբերի 3-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ), պարոն Սարիբեկ Սուքիասյանը, պարոն Ռոբերտ Սուքիասյանը, պարոն Խաչատուր Սուքիասյանը և «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն կնքել են բաժնետոմսերի գնման պայմանագիր, որով ՎԶԵԲ-ը համաձայնել է վաճառել իր 233,335 սովորական բաժնետոմսերը հինգ հավասար մասնաբաժիններով (46,667 ամեն տրանշ) հինգ տարվա ընթացքում՝ սկսած 2014 թվականի դեկտեմբերից մինչև 2019-ի մարտի 2-ը: Ծրագրային ազդագրի հրապարակման պահի դրությամբ ՎԶԵԲ-ը վաճառել է 140,001 հատ բաժնետոմս, որի արդյունքում վերջինիս մասնակցությունը Բանկի կանոնադրական կապիտալում կազմում է 5.04% (93,334 հատ բաժնետոմս):

2015թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն դարձել է արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ: «MoneyGram» վճարահաշվարկային համակարգը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհել է «Պրոֆեսիոնալիզմի և Հայաստանում փոխանցման ծառայությունների զարգացմանը նպաստելու համար» հավաստագիր: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և Ղազախստանի «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի ղեկավարների միջև ստորագրվեց երկու բանկերի միացման հուշագիր՝ ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու նպատակով:

2016թ. ՀՀ ԿԲ որոշման համաձայն «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ն միացավ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին, որի արդյունքում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կապիտալն ավելացավ 5,294,232 հազ. դրամով: Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 2,297,995 հազ ՀՀ դրամով:

2017թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի էմիսիոն եկամուտներից՝ 9,077,411,700 ՀՀ դրամ ուղղվեց կանոնադրական կապիտալի ավելացմանը, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 13,708,744,200 ՀՀ դրամ և դրա հաշվին 4,900 ՀՀ դրամի չափով մեծացավ մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը՝ 2,500 ՀՀ դրամից դառնալով 7,400 ՀՀ դրամ: 2017 թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդգրկվեց ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2018թ. համար հաստատած «Պետական պարտքի կառավարման գործակալների» ցանկում և 2018թ.-ից հանդես կգա որպես Պետական պարտքի կառավարման գործակալ:

Բանկին տրված լիցենզիաները և արտոնագրերն անժամկետ են:

1.8. Բանկի ռազմավարությունը

Բանկի ռազմավարական թիրախը՝ որպես ունիվերսալ կառույց շարունակական զարգացման ապահովումն է՝ մատուցելով հաճախորդներին միջազգային չափանիշներին

համապատասխան բանկային ծառայություններ, ապահովելով Բանկի հաճախորդների և բաժնետերերի շահերի պաշտպանվածությունը:

Բանկի գերակա նպատակը հաճախորդներին բազմաբնույթ և որակյալ ծառայությունների ամբողջական փաթեթի մատուցումն է՝ տարածաշրջանային ներկայացվածության ընդլայնման, բիզնեսի կառավարման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների արդի ձեռքբերումների կիրառման միջոցով առավելագույնս նպաստելով տնտեսության զարգացմանը, ապահովելով Բանկի շահութաբեր գործունեությունը և համապատասխան զարգացումն ու աճը:

Բանկի՝ որպես կայացած և հեռանկարային ֆինանսական կառույցի, գնահատականը պետք է համարել նաև «Moody's Investors Service» ընկերության կողմից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին ռեյտինգների շնորհման (2016թ. սեպտեմբերին Բանկը «Moody's Investors Service» միջազգային կազմակերպության կողմից ստացել է ֆինանսական կայունության "E+" և դրամով ու այլ արժույթներով երկարաժամկետ ավանդների ընդունման "B1" վարկանիշ՝ կայուն հեռանկարով), ինչպես նաև ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագրի ստացման փաստը, որը մեծ հեռանկարներ է բացում բանկի միջազգային ճանաչման, միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության էլ ավելի խորացման և բանկի հետագա զարգացման տեսանկյունից:

Նախատեսելով զարգացման բոլոր ոլորտների թե՛ քանակական, թե՛ որակական աճ, շարունակվելու է մեծ ուշադրություն դարձվել ռիսկերի կառավարման համակարգի, ներքին հսկողության համակարգի, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, կորպորատիվ կառավարման արժեքների զարգացմանը, բանկային ծառայությունների մատուցման տեխնոլոգիաների կատարելագործմանը, միջազգային գործառնությունների, ինչպես նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության ընդլայնմանը:

Բանկի ռազմավարության հիմնական խնդիրները բխում են բանկի ֆինանսական քաղաքականության գլխավոր խնդիրներից՝ պահպանել և ավելացնել բանկի ընդհանուր կապիտալը, ապահովել բանկի կայուն իրացվելիությունը, արդյունավետ կառավարելով բանկի ֆինանսական միջոցները, ապահովել եկամուտների այնպիսի մակարդակ, որը թույլ կտա ոչ միայն փոխհատուցել անհրաժեշտ ծախսերը, այլ նաև ձևավորել բավարար պահուստներ՝ լուծելով բանկի կապիտալիզացիայի խնդիրները:

Բանկն իր առաքելությունը տեսնում է որպես միջազգային չափանիշներով ռիսկերի կառավարման գործուն համակարգով, առաջընթաց տեխնոլոգիաներով զարգացող, օրինապաշտ, թափանցիկ կառույցի զարգացում, որը իր գործունեությամբ նպաստում է ոչ միայն ՀՀ բանկային համակարգի կայունությանը, այլև երկրի տնտեսության զարգացմանը:

Որպես ունիվերսալ բանկային կառույց՝ փոխշահավետ պայմաններով, օգտագործելով իր լայն մասնաճյուղային ցանցը, ստանձնած բոլոր պարտավորությունների կատարում թե՛ հաճախորդների, թե՛ գործընկերների /ներքին, միջազգային/ նկատմամբ՝ մատուցելով բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ, վերջինիս մշտական ընդլայնմամբ և բազմազանմամբ, միջազգային չափանիշներին մոտեցմամբ:

Որպես գործատու՝ արդյունավետ կադրային քաղաքականության վարմամբ, ապահովել իր աշխատակիցների մասնագիտական առաջընթացը և բարեկեցությունը՝ նրանց աշխատանքային գործունեության և ունակությունների համաձայն:

1.9. Բանկի կանոնադրական կապիտալը

Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի չափը կազմում է 13,708,744,200 ՀՀ դրամ, որը ներառում է 1,852,533 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 7,400 ՀՀ դրամ անվանական արժեքով:

31.12.2017թ. դրությամբ բաժնետերերի կողմից վճարված է կանոնադրական կապիտալի 100%-ը, իսկ Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատերերի քանակը կազմում է 3,310 բաժնետեր:

1.10. Բանկի բիզնեսի նկարագիրը (մատուցված ծառայությունները)

<u>Համաձայն Բանկի կանոնադրության.</u>

1.Բանկը ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.

ա/ ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.

բ/ տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

գ/ տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).

դ/ բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.

ե/ մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.

զ/ թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել.

է/ ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել.

ը/ մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).

թ/ գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.

ժ/ գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.

ժա/ իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ժբ/ ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժգ/ մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

ժդ/ ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

ժզ/ իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ,

ժէ/ իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ գործառնություններ:

2. Բանկը նշված գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

3. ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությամբ Բանկը կարող է իրականացնել նաև այնպիսի գործունեություն կամ գործառնություններ, որոնք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության հետ:

4. Նշված գործառնությունները Բանկը կատարում է պայմանագրերի հիման վրա, որոնցում սահմանվում են կողմերի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, տոկոսադրույքները, արտոնությունները, տույժերը, պարտավորությունների ապահովման ձևերը, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:
5. Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր և պատասխանող դատարանում:
6. Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը՝

ա/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4.99 տոկոս և ավելին է,

բ/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15%-ը,

գ/ բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35%-ը :

Սույն կետով նախատեսվածը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով:

7. Բանկն իրավունք ունի թղթակցային հաշիվներ բացել այլ բանկերում:

31.12.17թ. դրությամբ Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային 18 բանկերում:

Կարևորելով դրամական փոխանցումների համակարգի ընդլայնման դերը՝ Բանկն անդամակցում է հետևյալ միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերին. «MoneyGram», «Ria Money Transfers», «Sigue Money Transfer», «IntelExpress», «Unistream», «Converse Transfer», «Golden Money Transfer», «MoneyTun» և «Faster» համակարգերով՝ իր հաճախորդին տալով ընտրության լայն հնարավորություն:

1.11. Բանկի կազմակերպչական կառուցվածքը ներկայացվում է Հավելված 4-ում.

Ծրագրային ազդագրի նեկայացման պահի դրությամբ Բանկն ունի 49 մասնաճյուղ, որոնցից 48-ը՝ ՀՀ տարածքում և 1-ը՝ ԼՂՀ-ում՝ Ստեփանակերտ քաղաքում:

1.12. Բանկի տրամադրության տակ եղած ակտիվների համարժեքությունը և պիտանելիությունը.

հազ. դրամ

№	Ցուցանիշի անվանումը	31.12.2017	31.12.2016	31.12.2015	31.12.2014
1	Ակտիվներ, այդ թվում՝	190,802,799	146,182,358	108,395,188	91,919,011
2	Եկամտաբեր ակտիվներ	169,592,352	127,146,220	94,418,175	81,910,484
3	Հաճախորդներին տրված վարկեր	104,216,558	75,047,659	59,175,240	52,057,388
4	Պահանջներ ֆինանսական կազմակեր-պությունների նկատմամբ	13,036,368	8,253,897	7,128,134	5,147,575
5	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	21,655,188	16,048,860	8,866,001	6,168,289
6	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,824,831	32,059,829	27,550,590	22,354,455
7	Կանխիկ դրամական միջոցներ	9,437,455	8,818,128	9,133,956	5,392,027
8	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	0	1,676	0	54,263

9	Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,296,862	4,552,427	832,166	1,255,797
10	Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	0	0	0	194,991
11	Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը (%)	88.88%	86.98%	87.11%	89.11%

Արժեզրկված (չաշխատող) վարկերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Բանկի հրապարակվող հաշվետվություններին կից ծանոթագրություններում (Ծանոթագրություն 16 Հաճախորդներին տրված վարկեր):

2. Բանկին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

2.1. Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝ Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի նույնականացում, գնահատում, հսկողություն, հաղորդակցում-հաշվետվություն և գնահատված ռիսկերին արձագանքում: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով: Տնտեսամաթեմատիկական մոդելավորման գործիքների կիրառման, գործընթացների կանոնակարգման, վերլուծության, կանխատեսման և ներքին հսկողության համակարգի մշտական կատարելագործման արդյունքում՝ Բանկը հնարավորություն է ստանում ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը՝ Բանկի զարգացման կշռադատված ռազմավարության պայմաններում բացառելով կամ նվազագույնի հասցնելով Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստները և ապահովելով գործող նորմատիվային դաշտի պահանջները: Բանկի ռիսկերի կառավարման համակարգը ներքին և արտաքին միջավայրերում տեղի ունեցող փոփոխություններին, բանկի ռազմավարական խնդիրներին և իրականացվող գործառնությունների ծավալային և որակական բնութագրերին համապատասխանեցնելու նպատակով ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերը պարբերաբար վերանայվում են:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում մշակվել և ներդրվել են հետևյալ հիմնական ռիսկերի տեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- վարկային ռիսկ,
- շուկայական ռիսկ
  - ✓ տոկոսադրույքների փոփոխման ռիսկ,
  - ✓ արտարժութային ռիսկ,
  - ✓ գնային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- գործառնական ռիսկ,
- Հեղինակության ռիսկ,
- Վարակի ռիսկ,
- Ռազմավարական ռիսկ,
- Օրենսդրական, նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկ,

- Երկրի ընդհանուր և տնտեսական միջավայրի ռիսկ:

Բանկին առնչվող ռիսկերի վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է սույն Ծրագրային ազդագրի Բաժին 3-ի («Պարտատոմսեր թողարկողի մասին տեղեկատվություն») 2-րդ կետում («Ռիսկային գործոններ»):

2.2. Պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ծրագրային ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ծրագրային ազդագրում ներկայացված հնարավոր ռիսկերի ցանկը սպառիչ չէ, և հավանական է նաև անկանխատեսելի բնույթի որոշակի այլ ռիսկերի առաջացումը, և հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով և սպասումներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով շուկայում պարտատոմսերի շրջանառելիության՝ իրացվելիության անկմանը: Բանկի կողմից որպես առավել էական ռիսկեր դիտարկվում են.

ա) Պարտատոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով, որի արդյունքում, պարտատոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը՝ հանգեցնելով դրանց գնի անկմանը: Ներդրողը կարող է շուկայական տվյալ իրավիճակում առկա պարտատոմսերի ցածր իրացվելիության պատճառով հնարավորություն չունենալ վաճառելու պարտատոմսերը առանց էական կորուստների կամ ընդհանրապես հնարավորություն չունենալ դրանք վաճառելու:

բ) Արտարժութային ռիսկը, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Բանկի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա: Առաջին տրանշի պարտատոմսերը գնանշվելու և վճարվելու են ԱՄՆ դոլարով, իսկ երկրորդ տրանշի պարտատոմսերը՝ ՀՀ դրամով, ուստի, այն ներդրողների համար, որոնց ֆինանսական հոսքերն այլ արժույթով են, տվյալ պարտատոմսերը պարունակում են զգալի արտարժութային ռիսկեր:

գ) Տոկոսադրույքի ռիսկը, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, ինչը որպես այլընտրանքային ներդրման ուղղություն, անուղղակիորեն ազդում է պարտատոմսերի գների վրա:

դ) Բանկի հեղինակության ռիսկը, որը անմիջական ազդեցություն ունի պարտատոմսերի գրավչության և գնի վրա:

ե) Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը:

զ) Վարկանիշի փոփոխության ռիսկ: Այլ հավասար պայմաններում պարտատոմսի գինը սովորաբար ուղղակի կախվածության մեջ է գտնվում Թողարկողի վարկային ռիսկը նկարագրող վարկանիշից/վարկանիշներից: Վարկանիշի իջեցման արդյունքում սովորաբար պարտատոմսի գինն ընկնում է կամ նույն է, որ պարտատոմսի եկամտաբերության աճի վերաբերյալ սպասումներ են ձևավորվում: 2016թ. սեպտեմբերին Բանկը «Moody’s Investors

Service» միջազգային կազմակերպության կողմից ստացել է ֆինանսական կայունության “E+” և դրամով ու այլ արժույթներով երկարաժամկետ ավանդների ընդունման “B1” վարկանիշ՝ կայուն հեռանկարով: Թողարկվող արժեթղթերին առնչվող ռիսկերի վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է սույն Ծրագրային ազդագրի Բաժին 2-ի («Թողարկվող պարտատոմսերի մասին տեղեկատվություն») 1-ին կետում («Ռիսկային գործոններ»):

3. Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Բանկն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված հեռանկարային զարգացման ծրագրերի՝ դրանցում սահմանված նպատակների, սկզբունքների, գործունեության հիմնական ուղղությունների և խնդիրների լուծման ուղիների: Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է խորհրդի և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են ներքին գործոնների, արտաքին միջավայրի և շուկայական իրավիճակների փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի կողմից առաջարկվող ծառայությունները և դրանց սակագները շուկայի պահանջներին, Բանկի կողմից իրականացվող գործառնությունների հսկողական մեխանիզմները գործող օրենսդրական դաշտի պահանջներին:

Բանկի՝ որպես կայացած և հեռանկարային ֆինանսական կառույցի, գնահատականը պետք է համարել նաև ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագրի ստացման փաստը, որը մեծ հեռանկարներ է բացում բանկի միջազգային ճանաչման, միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության էլ ավելի խորացման և բանկի հետագա զարգացման տեսանկյունից:

Բանկի գործունեության կարևորագույն գնահատականներից է 2017թ.-ի արդյունքներով ապահոված 1,550,397 հազ. դրամ շահույթը:

2017թ.-ի վերջին ապահովվեց կապիտալի 29.03 մլրդ դրամ մակարդակ՝ հիմնականում ձևավորված շահույթի և վերագնահատման պահուստների հաշվին:

2017թ., նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվներն աճել են 44.62 մլրդ դրամով կամ մոտ 30.52%-ով՝ կազմելով մոտ 190.80 մլրդ դրամ, ընդ որում՝ եկամտաբեր ակտիվներից հաճախորդներին տրված վարկերն աճել են 29.17 մլրդ դրամով կամ մոտ 38.87%-ով՝ կազմելով 104.22 մլրդ դրամ, իսկ հաճախորդների նկատմամբ պարտավորությունները՝ 24.91 մլրդ դրամով կամ 37.29%-ով՝ կազմելով մոտ 91.70 մլրդ դրամ, ինչը վկայում է բանկի նկատմամբ հաճախորդների վստահության շարունակական աճի մասին:

2016թ.-ի արդյունքներով Բանկն ապահովել է 590,371 հազ. դրամ շահույթ:

2016թ.-ի վերջին ապահովվեց կապիտալի 27.57 մլրդ դրամ մակարդակ՝ հիմնականում կանոնադրական կապիտալի ավելացման, ձևավորված շահույթի և վերագնահատման պահուստների հաշվին:

2016թ., նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվներն աճել են 37.7 մլրդ դրամով կամ մոտ 34.86%-ով՝ կազմելով մոտ 146.2 մլրդ դրամ, ընդ որում՝ եկամտաբեր ակտիվներից հաճախորդներին տրված վարկերն աճել են 15.9 մլրդ դրամով կամ մոտ 26.8%-ով՝ կազմելով 75.05 մլրդ դրամ, իսկ հաճախորդների նկատմամբ պարտավորությունները՝ 4.8 մլրդ դրամով կամ 7.8%-ով՝ կազմելով մոտ 66.8 մլրդ դրամ, ինչը վկայում է բանկի նկատմամբ հաճախորդների վստահության շարունակական աճի մասին:

«ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու նպատակով 2015թ. ստորագրված հուշագրի համաձայն՝ 2016թ. մարտի 18-ին կայացած «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և «ԲՏԱ բանկ» ՓԲԸ բաժնետերերի ժողովներում որոշում կայացվեց «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին միացնելու վերաբերյալ: 2016թ.-ին ՀՀ Կենտրոնական բանկի որոշման համաձայն «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ը միացավ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին, որի արդյունքում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կապիտալն ավելացավ 5,294,232 հազ. դրամով:

2015թ.-ի արդյունքներով Բանկն ապահովել է 449,266 հազ. դրամ շահույթ:

2015թ.-ի վերջին ապահովվեց կապիտալի 11.0 մլրդ դրամ մակարդակ՝ հիմնականում ձևավորված շահույթի հաշվին՝ վերագնահատման պահուստների զգալի նվազման պայմաններում:

2015թ., նախորդ տարվա համեմատ, բանկի ակտիվներն աճել են 16.5 մլրդ դրամով կամ մոտ 18.0%-ով՝ կազմելով մոտ 108.4 մլրդ դրամ, ընդ որում՝ եկամտաբեր ակտիվներից հաճախորդներին տրված վարկերն աճել են 7.2 մլրդ դրամով կամ մոտ 13.8%-ով՝ կազմելով 59.2 մլրդ դրամ, իսկ հաճախորդների նկատմամբ պարտավորությունները՝ 4.4 մլրդ դրամով կամ 7.7%-ով՝ կազմելով մոտ 62.0 մլրդ դրամ, ինչը վկայում է բանկի նկատմամբ հաճախորդների վստահության շարունակական աճի մասին:

Նախատեսելով զարգացման բոլոր ոլորտների թե՛ քանակական, թե՛ որակական աճ, շարունակվելու է մեծ ուշադրություն դարձվել ռիսկերի կառավարման համակարգի, ներքին հսկողության համակարգի, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, կորպորատիվ կառավարման արժեքների զարգացմանը, բանկային ծառայությունների մատուցման տեխնոլոգիաների կատարելագործմանը, միջազգային գործառնությունների, ինչպես նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության ընդլայնմանը:

31.12.2017թ. դրությամբ Բանկի կապիտալը կազմել է մոտ 29.03 մլրդ դրամ՝ աճելով 2016թ.-ի վերջի համեմատ 5.29%-ով: Այլ ցուցանիշների գծով 2017թ. ընթացքում՝ (մինչև Ծրագրային ազդագրի գրանցման ներկայացման օրը) Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել և Բանկը պահպանում է ակտիվների և այլ հիմնական ցուցանիշների աճի միտումները:

Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, դատական հայցեր, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ ունենալու Բանկի ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա առկա չեն, կազմակերպական էական փոփոխություններ չեն սպասվում:

4. Բանկի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ

Բանկի 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ. և 2017թ. աուդիտն իրականացրել է «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն, որի գտնվելու վայրը և կապի միջոցներն են.

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Սրբուհի Հակոբյան

ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան 4/6, հեռ. +374(10) 52 65 20, ֆաքս +374 (10) 52 75 20, www.deloitte.am:

5. Բանկի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

5.1. Թողարկողի կառավարման մարմնի անդամները.

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները.

- Բաժնետերերի ընդհանուր ժողով (այսուհետ՝ Ընդհանուր ժողով), որը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է,
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), որն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- Բանկի գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե վարչության նախագահն է,
- Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Բանկի խորհուրդը կազմված է վեց անդամներից.

№	անունը, ազգանունը	զբաղեցրած պաշտոնը	փորձառությունը
1	Սարիբեկ Սուքիասյան	Խորհրդի նախագահ	26 տարի
2	Արմեն Նալչյան	Խորհրդի անդամ, Խորհրդի նախագահի տեղակալ	32 տարի
3	Արամ Մելիքյան	Խորհրդի անդամ	30 տարի
4	Լուիզա Պետրոսյան	Խորհրդի անդամ, խորհրդի քարտուղար	12 տարի
5	Իննա Յաբբարովա	Խորհրդի անդամ	34 տարի
6	Ռուբեն Հայրապետյան	Խորհրդի անդամ	15 տարի

Բանկի վարչությունը կազմված է 10 անդամներից.

№	անունը, ազգանունը	զբաղեցրած պաշտոնը	փորձառությունը
1	Արամ Խաչատրյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն	11 տարի
2	Ռուբեն Բաղալյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի գործառնական գծով տեղակալ	15 տարի
3	Օնիկ Չիչյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տեղակալ	16 տարի
4	Արտակ Առաքելյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ	13 տարի
5	Աստղիկ Մանրիկյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի միջազգային և զարգացման գծով տեղակալ	12 տարի
6	Արփինե Փիլոսյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործառնական գծով տնօրենի տեղակալ	11 տարի
7	Միքայել Պողոսյան	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն-	31 տարի

		Գլխավոր հաշվապահ	
8	Հայկ Ավետիսյան	Վարչության անդամ, Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ	13 տարի
9	Վրեժ Ջհանգիրյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ	11տարի
10	Վարդան Սարգսյան	Վարչության անդամ, Վարկավորման վարչության պետ	13 տարի

5.2. Բանկի աշխատակիցները.

Բանկի աշխատակիցների ընդհանուր թիվը 31.12.2017թ. դրությամբ կազմում է 865 աշխատակից:

5.3. Բանկի խոշոր բաժնետերերը.

№	ազգանունը, անունը, հայրանունը	մասնակցություն
1	Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	28.32%
2	Սուքիասյան Խաչատուր Ալբերտի	16.29%
3	Սուքիասյան Ռոբերտ Ալբերտի	14.29%
4	Սուքիասյան Էդուարդ Ալբերտի	10.66%
5	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	2.52%

6. Բանկի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ի կողմից մինչ այժմ թողարկվել և տեղաբաշխվել է 1,852,533 (մեկ միլիոն ութ հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր երեսուներեք) հատ հասարակ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 7,400 (յոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են բանկի կանոնադրական կապիտալը: Թողարկված պարտատոմսերը շրջանառվում են <<ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա>> ԲԲԸ-ում և ցուցակված են B ցուցակում:

Ինչպես նաև Բանկի կողմից 2017թ. ընթացքում թողարկվել և տեղաբաշխվել են 2,000,00 (երկու միլիոն) ԱՄՆ դոլար ծավալով՝100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 20,000 (քսան հազար) հատ, 27 ամիս շրջանառության ժամկետով դոլարային պարտատոմսեր (ISIN - AMHEZBB23ER4) և 100,000,000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ծավալով՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 10,000 (տասը հազար) հատ, 27 ամիս շրջանառության ժամկետով դրամային պարտատոմսեր (ISIN - AMHEZBB22ER6), որոնք ցուցակված են <<ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա>> ԲԲԸ-ում՝ համապատասխանաբար B և C ցուցակներում, իսկ պարտատոմսերի շուկա ստեղծող (մարքեթ-մեյքեր) է հանդիսանում <<Կապիտալ Ինվեստմընթս>> ՓԲԸ-ն:

7. Առաջարկվող պարտատոմսերի վերաբերյալ հիմնական տվյալները.

Թողարկվող պարտատոմսերն անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, միջնաժամկետ պարտատոմսեր են և պետք է տեղաբաշխվեն մեկից ավելի տրանշով:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են՝ ԱՄՆ դոլարով թողարկվածները՝ ԱՄՆ դոլարով, ՀՀ դրամով թողարկվածները՝ ՀՀ դրամով: Ե՛վ ԱՄՆ դոլարով, և՛

ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

Արժեթղթի տեսակը՝	Անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	100,000 (մեկ հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով, 50,000 (հիսուն հազար) հատ ՀՀ դրամով
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար, 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը՝	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝	Համապատասխան յուրաքանչյուր տրանշի ծավալի և անվանական արժեքի
Արժեկտրոնը՝	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից
Շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Թողարկողի գործադիր մարմնի (Վարչության) կողմից
Արժեկտրոնների ճարման հաճախականությունը՝	Եռամսյակային
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում Բանկի ինտերնետային կայքում՝ www.aeb.am տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ:

Պարտատոմսերի վերջին տրանշի տեղաբաշխումն ավարտվում է ոչ ուշ, քան ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի Ծրագրային ազդագիրը հաստատելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

Միջոցների օգտագործման նախատեսվող ուղիները՝ Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները հիմնականում ուղղվելու են փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորմանը, սպառողական վարկերի տրամադրմանը:

Նպատակը՝ Բանկն այս թողարկմամբ նպատակ ունի հասնելու հաշվեկշռի պասիվային մասի կառավարման արդյունավետության բարձրացմանը, հնարավոր ավանդատուների բազայի ընդլայնմանը և տարատեսականացմանը (դիվերսիֆիկացիա):

8. Պարտատոմսերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համառոտ նկարագիրը

Թողարկողի պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Բանկի վարչության կողմից: Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտը, պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան

վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը: Պարտատոմսերը տեղաբաշխումից հետո ցուցակվելու են <<ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա>> ԲԲԸ-ում և ունենալու են շուկա ստեղծող:

9. Ամփոփ ֆինանսական տվյալներ

հազ. դրամ

№	Ցուցանիշի անվանումը	31.12.2017	31.12.2016	31.12.2015	31.12.2014
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,550,397	590,371	449,266	816,796
	Սեփական կապիտալի միջին մեծություն*	28,205,528	22,440,746	11,868,510	11,075,369
	Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	5.50%	2.63%	3.79%	7.37%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,550,397	590,371	449,266	816,796
	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն*	167,249,185	124,162,992	98,438,680	84,528,828
	Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.93%	0.48%	0.46%	0.97%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,550,397	590,371	449,266	816,796
	Գործառնական եկամուտ	10,227,491	7,539,829	6,304,775	6,785,457
	Զուտ շահույթի մարժա (NPM), %	15.16%	7.83%	7.13%	12.04%
	Գործառնական եկամուտ	10,227,491	7,539,829	6,304,775	6,785,457
	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն*	167,249,185	124,162,992	98,438,680	84,528,828
	Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	6.07%	6.07%	6.40%	8.03%
	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	167,249,185	124,162,992	98,438,680	84,528,828
	Սեփական կապիտալի միջին մեծություն*	28,205,524	22,440,746	11,868,510	11,075,369
	Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.93	5.53	8.29	7.63
	Զուտ տոկոսային եկամուտ	6,840,338	5,503,870	4,540,923	4,249,360
	Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	152,719,037	107,062,092	86,711,786	71,793,014
	Զուտ տոկոսային մարժա (NIM)	4.48%	5.14%	5.24%	5.92%
	Տոկոսային եկամուտ	14,121,975	11,359,949	9,858,009	8,342,889
	Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն*	152,719,037	107,062,092	86,711,786	71,793,014
	Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	9.25%	10.61%	11.37%	11.62%
	Տոկոսային ծախսեր	7,281,637	5,856,079	5,317,086	4,093,529

	Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր*	123,341,259	86,677,966	81,036,954	72,584,134
	Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	5.90%	6.76%	6.56%	5.64%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,550,397	590,371	449,266	816,796
	Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	1,852,533	1,852,533	933,335	933,335
	Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	0.84	0.32	0.48	0.88
	Սպրեդ	3.34%	3.85%	4.81%	5.98%

*միջին եռամսյակային
Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են հավելված 5-ում:

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ծրագրային ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ծրագրային ազդագրում ներկայացված հնարավոր ռիսկերի ցանկը սպառիչ չէ, և հավանական է նաև անկանխատեսելի բնույթի որոշակի այլ ռիսկերի առաջացումը, և հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով և սպասումներով:

Բանկը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի նվազեցնի ստորև նշված ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Բանկի հսկողությունից դուրս են, ապա այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Բանկի կողմից:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով շուկայում պարտատոմսերի շրջանառելիության՝ իրացվելիության անկմանը, Բանկի եկամուտների կրճատմանը և ծախսերի ավելացմանը, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել պարտատոմսերի գների իջեցմանը: Բանկի կողմից որպես առավել էական ռիսկեր դիտարկվում են.

ա) Թողարկողը պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով (պարբերական արժեկտրոնային վճարումներ, մրցակցային եկամտաբերություն, ցուցակում և առևտրին թույլտվություն

ԲԱԺԻՆ 3. ՊԱՐՏԱՏՈՒՄԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԸ

1) Բանկի 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ. և 2017թ.-ի աուդիտն իրականացրել է «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն, որի գտնվելու վայրը և կապի միջոցներն են.
«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ Սրբուհի Հակոբյան
ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան 4/6, հեռ. +374(10) 52 65 20, ֆաքս +374 (10) 52 75 20, www.deloitte.am:

«Դելոյթը» ապրանքանիշ է, որը համախմբում է ավելի քան 200,000 մասնագետների աշխարհի ավելի քան 151 երկրներում գործող անկախ ընկերություններում, ովքեր, համագործակցելով միմյանց հետ, տրամադրում են աուդիտի, ձեռնարկության ռիսկերի կառավարման, ֆինանսական, հարկային և իրավաբանական խորհրդատվական ծառայություններ իրենց հաճախորդներին:

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է «Դելոյթ ԱՊՀ Հոլդինգ Լիմիթեդ»-ի մասը, որն իր հերթին մտնում է «Դելոյթ Տուշ Տոմացու Լիմիթեդ»-ի կազմի մեջ:

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանում բանկի աուդիտորները չեն փոփոխվել :

2. ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Բանկում ներդրված ռիսկերի կառավարման ճկուն համակարգը ենթարկվում է շարունակական կատարելագործման՝ ելնելով կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով գործունեության ծավալման նպատակներից: Բանկում ձևավորված ռիսկերի կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման հերթական փուլը Բանկի գործունեության և այն կանոնակարգող ներքին իրավական ակտերի համապատասխանեցումն էր ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ) միջազգային ստանդարտի պահանջներին:

Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝ Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի նույնականացում, գնահատում, հսկողություն, հաղորդակցում-հաշվետվություն և գնահատված ռիսկերին արձագանքում: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով: Ակտիվների և պասիվների կառավարման գործընթացի հիմքում ընկած են մշակված և շարունակաբար կատարելագործվող մաթեմատիկական մոդելների միջոցով իրականացվող վերլուծությունները՝ ուղղված կառավարման արդյունավետության բարձրացմանը և ռիսկերի զսպման մեխանիզմների կիրառմանը: Տնտեսամաթեմատիկական մոդելավորման գործիքների կիրառման, գործընթացների կանոնակարգման, վերլուծության, կանխատեսման և ներքին հսկողության համակարգի մշտական կատարելագործման արդյունքում Բանկը հնարավորություն է ստանում ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը՝ Բանկի զարգացման կշռադատված ռազմավարության պայմաններում բացառելով կամ նվազագույնի հասցնելով Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստները և ապահովելով գործող նորմատիվային դաշտի պահանջները: Ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքները, առանձին ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոտեցումները, մեթոդաբանությունները և մոդելները

Վարկերն ըստ ոլորտների	31.12.2016թ. մնացորդ (հազ. դրամ)	31.12.2017թ. մնացորդ (հազ. դրամ)
Սպառողական	**23,870,621.00**	**39,931,510.00**
Ոչ ժամկետանց	23,053,833.00	39,566,982.00
Ժամկետանց	816,788.00	364,528.00
Առևտուր	**11,343,639.00**	**31,065,800.00**
Ոչ ժամկետանց	10,504,517.00	30,192,722.00
Ժամկետանց	839,122.00	873,078.00
Արդյունաբերություն	**9,622,131.00**	**14,183,657.00**
Ոչ ժամկետանց	9,606,897.00	14,183,657.00
Ժամկետանց	15,234.00	-
Շինարարություն	**4,866,215.00**	**6,149,163.00**
Ոչ ժամկետանց	4,866,215.00	6,149,163.00
Ժամկետանց	-	-
Հիփոթեքային	**4,161,999.00**	**5,841,516.00**
Ոչ ժամկետանց	4,102,821.00	5,743,500.00
Ժամկետանց	59,178.00	98,016.00
Գյուղատնտեսություն	**1,381,248.00**	**947,885.00**
Ոչ ժամկետանց	1,381,248.00	947,681.00
Ժամկետանց	-	204.00
Այլ ճյուղեր	**21,348,289.00**	**7,702,147.00**
Ոչ ժամկետանց	21,185,869.00	7,646,388.00
Ժամկետանց	162,420.00	55,759.00

Տոկոսադրույքների փոփոխության ռիսկը գնահատվում է միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած «GAP մոդելի» միջոցով՝ տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դիսբալանսի և ժամկետայնության ճեղքվածքների վերլուծության հիման վրա: «Դյուրացիայի մոդելի» հիման վրա տոկոսադրույքի փոփոխման ռիսկը գնահատվում է ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ցուցանիշների կիրառմամբ՝ դիտարկելով դյուրացիան որպես տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքների զգայունության գնահատման գործիք: Իրականացվում է նաև առանձին արժույթներով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքների վերլուծություն՝ զուտ տոկոսային եկամտի վրա դրանց տոկոսադրույքների փոփոխության ազդեցության տեսանկյունից: Նշված մոդելները հնարավորություն են տալիս իրականացնել ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կառավարում՝ հեջավորելով տոկոսադրույքի ռիսկը:

Ստորև ներկայացված է 31.12.2017թ. դրությամբ բանկի փոփոխվող տոկոսադրույքով ակտիվների և պարտավորությունների ժամկետային և արժութային կառուցվածքը.

կենտրոնացումների մակարդակները՝ կիրառելով մշակված կենտրոնացումների գործակիցները և հաճախորդների միջև ավանդների բաշխվածության վերլուծական գրաֆիկները:

Ստորև ներկայացված է իրացվելիության ճեղքվածքի վերլուծությունը 31.12.2017թ. դրությամբ.

Հոդվածի անվանումը	Չաշխատող		Մարմանը մնացել է						Անժամկետ	Ընդամենը
	ժամկետային	Ժամկետանց	Ցպահանջ	մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6 ամսից մինչ 12 ամիս	1-ից մինչև 5 տարի	5 տարուց ավելի		
Զուտ իրացվելիության ճեղքվածք	898,069	188,363	(3,808,765)	(11,690,283)	1,539,267	(17,006,856)	22,693,269	23,640,620	2,24,16	18,477,700
Այդ թվում										-
I խմբի արտարժույթով	505,836	128,805	2,985,058	(318,845)	2,304,714	(17,612,554)	6,852,828	5,830,319	123,395	799,556
II խմբիարտարժույթով	1,174	283	673,900	(69,736)	(229,155)	(407,969)	(33,676)		-	(65,179)
Փոփոխվող տոկոսադրույքների համար	-	-	369,500	(357,824)	(2,791,308)	-	-	-	-	(2,779,632)
Ֆիքսված տոկոսադրույքների համար	898,069	188,363	(3,880,167)	(11,730,992)	4,329,304	(16,993,939)	22,277,618	30,002,646	291,536	25,382,438
Կուտակայինիրացվելիության ճեղքվածք	898,069	1,086,432	(2,722,333)	(14,412,616)	(12,873,349)	(29,880,205)	(7,186,936)	16,453,684	18,477,700	(30,159,554)

Բանկում **արտարժութային ռիսկի** կառավարումն իրականացվում է կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև սթրես թեստերի սցենարային վերլուծության մեթոդները: Սթրես թեստերի սցենարային վերլուծություններում դիտարկվում է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանման ազդեցությունը նորմատիվների վրա: Բանկի արտարժութային քաղաքականությունը միտված է արտարժութային դիրքերի արդյունավետ կառավարման ապահովմանը՝ զուգակցելով այն արդարացված ռիսկի մակարդակի հետ:

Ստորև ներկայացվում է 31.12.2017թ. դրությամբ բանկի արտարժութային ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների.

հազ. դրամ

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ Կենտրոնական բանկում	28,901,286	6,165,247	758,298	35,824,831
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,296,862	-	-	4,296,862
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ	1,685,883	11,198,366	152,119	13,036,368
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	-	-		-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	53,384,410	50,830,469	1,679	104,216,558
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվներ	1,937,530	98,561	-	2,036,091
Ներդրումներ վերահսկվող անձանց	-	-	-	-

կանոնադրական կապիտալում				
Հետգնման պայմանագրով գրավադրված արժեթղթեր	19,619,097	-	-	19,619,097
Այլ ակտիվներ	138,742	-	-	138,742
Ընդամենը ակտիվներ	**109,963,810**	**68,752,541**	**452,198**	**179,168,549**
Պարտավորություններ				
Հետգնման պայմանագրեր	7,706	-	-	7,706
Թողարկված պարտքային արժեթղթեր	100,100	968,664	-	1,068,764
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	4,411,627	-	-	4,411,627
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպություններինկատմամբ	14,822,737	-	-	14,822,737
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր	-	20,296,754	-	20,296,754
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	91,205,090	256,434	242,374	91,703,898
Այլ ֆինանսական պարտավորություններ	315,404	-	-	315,404
Ստորադաս փոխառություններ	3,747,051	2,662,550	-	6,409,601
Ընդամենը պարտավորություններ	**114,609,715**	**24,184,402**	**242,374**	**139,036,491**
Զուտ դիրք	**-4,656,150**	**44,568,139**	**209,824**	**40,132,058**

* «I խմբի արտարժույթի» կազմը հետևյալն է. ԱՄՆ դոլար, Անգլիական ֆունտ ստեռլինգ, Եվրո, Շվեյցարական ֆրանկ, Ռսկու ստանդարտացված ձուլակտոր և Մետաղական հաշիվ
** «II խմբի արտարժույթի» կազմը հետևյալն է. ՌԴ ռուբլի, Վրացական լարի, ՄԱԷ դիրհամ:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում.

- ✓ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում,
- ✓ հնարավոր կորուստների գնահատում,
- ✓ հեջավորման գործիքների կիրառում,
- ✓ ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ կապիտալի գործիքներով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի, stop-loss) սահմանում,
- ✓ կապիտալի գործիքների փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

(հազ. դրամ)

Տոկոսային եկամուտ		31.12.2014	Տեսակ արար կշիռը (%)	31.12.2015	Տեսակ արար կշիռը (%)	31.12.2016	Տեսակ արար կշիռը (%)	31.12.2017	Տեսակա ր կշիռը (%)
1	Վարկեր հաճախորդներին	7,253,122	86.93	8,248,220	83.67	9,408,361	82.82	11,310,262	80.14
2	Վաճառքի համար մատ-չելի ֆինանսական ակտիվներ	791,400	9.49	1,068,268	10.83	1,463,126	12.88	2,109,590	14.95
3	Պահանջներ ֆինանսական կազմակեր-պությունների նկատմամբ	97,842	1.17	128,183	1.3	139,121	1.22	354,394	2.51
4	Հակադարձ հետգնման պայմանագրեր	200,269	2.4	413,252	4.19	337,872	2.97	307,528	2.18
5	Այլ տոկոսային եկամուտ	256	0.01	86	0.01	11,469	0.1	31,608	0.22
Ընդամենը		**8,342,889**	**100**	**9,858,009**	**100**	**11,359,949**	**100**	**14,113,382**	**100**

(հազ. դրամ)

Ոչ տոկոսային եկամուտ		31.12.2014	Տեսակ արար կշիռը (%)	31.12.2015	Տեսակ արար կշիռը (%)	31.12.2016	Տեսակ արար կշիռը (%)	31.12.2017	Տեսակ արար կշիռը (%)
1	Կոմիսիոն եկամուտներ	1,508,982	52.46	1,460,908	58.24	1,479,985	46.14	2,040,668	48.01%
2	Զուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից	130,157	4.52	-242,318	-9.66	(150,259)	-4.68	(231,661)	-5.45%
3	Վաճառքի համար մատչելի ֆինանսական	171,314	5.96	6,347	0.25	330,885	10.32	533,283	12.55%

	ակտիվների գծով զուտ օգուտ								
4	Արտարժութային զուտ եկամուտ	747,117	25.97	885,591	35.3	601,945	18.77	1,046,286	24.62%
5	Ստացված տույժեր և տուգանքներ	176,364	6.13	290,758	11.59	404,075	12.60	365,300	8.59%
6	Թանկարժեք մետաղների վաճառքից և վերագնահատումից օգուտ	37,804	1.31	1,969	0.08	33	0.001	17,711	0.42%
7	Եկամուտ շնորհներից	507	0.02	507	0.02	507	0.02	507	0.01%
8	Այլ եկամուտներ	104,260	3.62	104,762	4.16	540,480	16.85	478,068	11.25%
Ընդամենը		**2,876,505**	**100**	**2,508,524**	**100**	**3,207,651**	**100**	**4,288,071**	**100**

2017թ. ընթացքում բանկը շարունակել է իր որդեգրած քաղաքականությունը հաճախորդների բնագավառում՝ պահպանելով փոխշահավետության սկզբունքը՝ հաճախորդներին առաջարկել բանկային ծառայությունների ընդգրկուն փաթեթ, մշտապես նորացնելով և բազմազանելով այն, բարելավելով ծառայությունների մատուցման որակը:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակեց ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, ինչի շնորհիվ խորացվեց ու ընդլայնվեց համագործակցության շրջանակները, գործող ծրագրերը, ինչպես նաև ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում:

- Բանկի էմիսիոն եկամուտներից՝ 9,077,411,700 ՀՀ դրամ ուղղվեց կանոնադրական կապիտալի ավելացմանը, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 13,708,744,200 ՀՀ դրամ և դրա հաշվին 4,900 ՀՀ դրամի չափով մեծացավ մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը՝ 2,500 ՀՀ դրամից դառնալով 7,400 ՀՀ դրամ:
- «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և շվեյցարական SYMBIOTICS SA ընկերության կողմից կառավարվող Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում գտնվող SYMBIOTICS – SEB IV MICROFINANCE FUND ներդրումային հիմնադրամի միջև կնքվեց 1,94 մլրդ ՀՀ դրամի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվելու են միկրո բիզնեսի վարկավորմանը:
- «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և շվեյցարական SYMBIOTICS SA ընկերության կողմից կառավարվող Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում գտնվող SYMBIOTICS – GLOBAL FINANCIAL INCLUSION FUND ներդրումային հիմնադրամի միջև կնքվեց 486 մլն ՀՀ դրամի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվելու են միկրո բիզնեսի վարկավորմանը:
- «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ և գերմանական FRANKFURT SCHOOL FINANCIAL SERVICES GMBH ընկերության կողմից կառավարվող Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում գտնվող GLS ALTERNATIVE INVESTMENTS – MIKROFINANZFONDS ներդրումային հիմնադրամի

6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Բանկի մատուցած ծառայությունների ծավալների աճի կամ նվազման միտումները և ծառայությունների սակագների միտումները վերջին հաշվետու ֆինանսական տարվա ավարտից մինչև Ծրագրային ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածի համար: Ներկայացվում են միայն այն միտումները, որոնք ըստ բանկի էական են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Նախորդ հաշվետու տարվա վերջի համեմատ, Բանկի կողմից մատուցված ծառայությունների ծավալների և ծառայությունների սակագների փոփոխությունները պայմանավորված են տնտեսության ներքին և արտաքին հատվածներում ընթացող փոփոխություններով, մրցակիցների կողմից համանման պորդուկտների գծով առաջարկվող սակագներով, ինչպես նաև Բանկի մրցակցային դիրքի ամրապնդման և առաջխաղացման հնարավորություններով: Մասնավորապես վերանայվել են՝ դրամական փոխանցումների իրականացման և չեկերի սպասարկման պայմանները, սոցիալական փաթեթի սպասարկման նպատակով բացված հաշվի միջոցների դիմաց վճարվող տարեկան տոկոսադրույքը (սահմանվել է 0.1%), հնամաշ և վնասված դրամանիշերի փոխանակման սակագինը (ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ և ՌԴ ռուբլու համար սահմանվել է 5%), արտարժույթի դրամանիշերի համար հնամաշության չափանիշները, պլաստիկ քարտերի տրամադրման և սպասարկման պայմանները, քարտային հաշվի դրական մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույքի կիրառման պայմանները (կիրառվում է եթե վճարային քարտի միջին ամսական մեծությունը գերազանցում է 1,000,000 ՀՀ դրամը, հաշվարկվում է մինչև վճարային պլաստիկ քարտի գործողության ժամկետի ավարտը), արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում մատուցվող ծառայությունների սակագները և այլն:

Ներդրումային ծառայությունների մատուցման համար սակագները սահմանվել են. պետական պարտատոսերով գործարքների համար՝ մինչև 100մլն. ՀՀ դրամը 0.05% գործարքի ծավալից, նվազագույնը 5,000 ՀՀ դրամ, 100մլն. ՀՀ դրամ և ավել ծավալի դեպքում 0.04%: Կորպորատիվ արժեթղթերով գործարքների դեպքում՝ մինչև 100մլն. ՀՀ դրամը՝ 0.2% գործարքի ծավալից, նվազագույնը 5,000 ՀՀ դրամ, իսկ 100մլն. ՀՀ դրամ և ավել ծավալի դեպքում 0.1%:

Ողջամիտ ներդրողի ներդրումային որոշման կայացման նպատակով՝ Բանկը ներկայացնում է հաշվետու տարվա ակտիվապասիվային ցուցանիշների և շահույթի ծավալային աճը, որոնք արտացոլում են Բանկի կառավարման մարմինների կողմից ռազմավարության իրականացման արդյունավետությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են Բանկի ակտիվապասիվային հիմնական ցուցանիշները և շահույթը.

(հազ. դրամ)

Միջոցների ներգրավում	31.12.2014	31.12.2015	31.12.2016	31.12.2017
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22,314,296	26,052,003	44,301,222	59,150,215
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	57,525,303	61,973,987	66,795,292	91,703,898
Ստորադաս փոխառություն	-	4,425,604	5,400,172	6,409,601

(հազ. դրամ)

Միջոցների տեղաբաշխում	31.12.2015	31.12.2015	31.12.2016	31.12.2017
Հաճախորդներին տրված վարկեր	59,175,240	59,175,240	75,047,659	104,216,558
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	8,866,001	8,866,001	16,048,860	21,655,188

(հազ. դրամ)

	31.12.2014	31.12.2015	31.12.2016	31.12.2017
Շահույթ	816,796	449,266	590,371	1,550,397

Բացի վերը բերված ֆինանսական ցուցանիշները, Բանկը որպես հաշվետու թողարկող, իր արժեթղթերի սեփականատերերին է ներկայացնում նաև եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, որոնք տեղադրված են բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am՝ <<Բաժնետերեր և ներդրողներ>> բաժնում:

7. ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԿԱՄ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1) այն հիմնական սկզբունքների կամ վարկածների նկարագիրը, որոնց հիման վրա իրականացվել է շահույթի կանխատեսումը կամ գնահատումը: Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը պետք է համադրելի լինի բանկի պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հետ.

Սույն կետում նշված տեղեկությունները ընդամենը կանխատեսումներ են և ներդրումային որոշումներ կայացնելիս չպետք է հիմնվել դրանց վրա:

Ընթացիկ տարվա՝ 2018թ., համար բանկը պլանավորել է ստանալ 1,75 մլրդ. դրամի զուտ շահույթ : Շահույթի կանխատեսումը (պլանավորումը) իրականացնելիս բանկը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

1. Բանկի ակտիվների կայուն աճի ապահովում, հիմնականում եկամտաբեր ակտիվների՝ վարկերի և արժեթղթերի աճի հաշվին: Վարկային ներդրումների աճը ապահովվելու է նոր վարկատեսակների առաջարկի, տնտեսության նոր հեռանկարային ոլորտների վարկավորման, սպառողական և հիփոթեքային վարկավորման, միջազգային կառույցների հետ իրականացվող վարկային ծրագրերի բազմազանման և ավելացման հաշվին:
2. Բանկի պարտավորությունների, ըստ այդմ ցպահանջ և ժամկետային ռեսուրսների կայուն աճի ապահովում՝ միջազգային ծրագրերով և միջազգային կառույցներից նոր ռեսուրսների ներգրավում և ներքին շուկայից ներգրավված ռեսուրսների ծավալների կայուն աճի ապահովում:
3. Բանկի ռեսուրսների տեղաբաշխում բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում (վարկեր հաճախորդներին)՝ ընդունելի մակարդակի վրա պահելով բանկի ռիսկերը, պահպանելով բանկային գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները:

	միջազգային և զարգացման գծով տեղակալ)	
Արփինե Փիլոսյան	Տեխնոլոգիաների և անվտանգության գծով տնօրենի տեղակալ Վարչության նախագահի Տեխնոլոգիաների և անվտանգության գծով տեղակալ	-
Պողոսյան Միքայել Յուրիկի	Ֆինանսական տնօրեն-Գլխավոր հաշվապահ	-
Ավետիսյան Հայկ Միշայի	Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ Վարչության անդամ	21.01.2009թ.- առ այսօր «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, Խորհրդի անդամ
Ջհանգիրյան Վրեժ Գագիկի	Իրավաբանական վարչության պետ Վարչության անդամ	-
Սարգսյան Վարդան Մարտիկի	Վարչության անդամ, Վարկավորման վարչության պետ	-

3) այն մասնաճյուղերի կառավարիչների անունը, ազգանունը, բնակության վայրը, զբաղեցրած պաշտոնը, իրավասություններն ու պարտականությունները, որոնցում կենտրոնացված է բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը,

Առկա չեն:

4) արդյո՞ք հնարավոր է շահերի բախում որպես բանկի կառավարման մարմնի անդամ բանկի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև: Եթե այո, ապա պարզ ձևով նկարագրել այդ: Շահերի բախման բացակայության դեպքում՝ նշել առանձին դրույթ այդ մասին,

Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև Ծրագրային ազդագրի ներկայացման պահի դրությամբ շահերի բախում չկա:

9. ՀՍԿՈՂ ԱՆՁԻՆՔ

այնքանով, որքանով հայտնի է բանկին, տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք բանկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն գտնվում է հսկողության տակ: Եթե այո, ապա նշել հսկողների անվանումը (անունը, ազգանունը) և նույնականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն, հսկողության բնույթը (ինչի հիման վրա է այդ անձը (անձինք) հսկում բանկին):

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն գտնվում է.

1. Սուքիասյանների ընտանիքի ուղղակի հսկողության տակ, քանի որ նրանք հանդիսանում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի 69.56%-ի սեփականատեր.

Սուքիասյան Սարիբեկ՝ 28.32% (ք. Երևան, Զավարյան 6, բն. 1-5),

Սուքիասյան Խաչատուր՝ 16.29% (ք. Երևան, Զավարյան 6, բն. 1-5),

Սուքիասյան Ռոբերտ՝ 14.29%, (ք. Երևան, Զավարյան 6, բն. 1-5),

Սուքիասյան Էդուարդ՝ 10.66%, (ք. Երևան, Զավարյան 6, բն. 1-5):

2. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (European Bank for Reconstruction and Development Անգլիա, 2JN, EC2A, Լոնդոն, Իքսչեյնջ Սքուեր մեկ) ուղղակի հսկողության տակ, քանի որ այն հանդիսանում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի 2.52% բաժնետոմսի սեփականատեր, և համաձայն 08.12.2004թ. կնքված <<Բաժնետիրական պայմանագրի>> պետք է ունենա իր ներկայացուցիչը Բանկի Խորհրդի կազմում, ինչպես նաև բանկի կառավարման մարմնի (վարչության անդամ, տնօրեն) ընտրության կամ փոփոխության, կազմակերպության միացման, լուծարման, կապիտալ համալրելու, խոշոր փոխառություններ ներգրավելու, տրամադրելու և մի շարք այլ դեպքերում պետք է տա իր նախնական համաձայնությունը:

10. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

1) Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անկախ աուդիտորական եզրակացության բովանդակությունն ամբողջությամբ.

Ներկայացված են Ծրագրային ազդագրին կից Հավելված 6-ում:

2) Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Եթե ազդագիրը գրանցման է ներկայացվում վերջին հաշվետու տարվա (որի համար ներկայացվել են անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվություններ) վերջին օրվանից սկսած 9 ամիս հետո, ապա ազդագրում ներկայացվում են միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (եռամսյակային կամ կիսամյակային՝ կախված թողարկողի ցանկությունից), որոնք ծածկում են տարվա սկզբից առնվազն 6 ամիս ժամանակաշրջան: Այս միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել առանց աուդիտորական եզրակացության: Ֆինանսական հաշվետվությունների կազմում բանկն իր հայեցողությամբ կարող է չներառել սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը: Բացի այդ, ֆինանսական հաշվետվությունների կազմում բանկն իր հայեցողությամբ կարող է չներառել նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, բացառությամբ, եթե ազդագրով հայցվում է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն:

Բանկի 2017 թվականի տարեկան հաշվետվությունը՝ անկախ աուդիտորի եզրակացությամբ, ներկայացված է սույն Ծրագրային ազդագրի Հավելված 6-ում:

3) Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները.

(հազ. դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ		31.12.2015	31.12.2016	31.12.2017
1	Ընդհանուր ակտիվներ	106,660,749	146,182,358	190,802,799
2	Ընդհանուր պարտավորություններ	88,192,761	118,612,940	161,774,191
3	Սեփական կապիտալ	18,467,988	27,569,418	29,028,608
4	Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	135,467	775,912	2,035,656
5	Զուտ տոկոսային եկամուտ (տոկոսային եկամուտ-տոկոսային ծախս)	1,189,917	5,503,870	6,840,338

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի
եզրակացություն 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Բովանդակություն

Էջ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2017 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2017 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ 6

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 7

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 8

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 9

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 11

1. Բանկը 11
2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 11
3. Կարևոր հաշվապահական դատողությունների և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները 23
4. Ֆինանսական հաշվետվությունների նոր և վերանայված միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ների) կիրառումը 24
5. Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստները 28
6. Կոմիսիոն եկամուտներ և ծախսեր 29
7. Զուտ արտարժութային եկամուտ 29
8. Այլ եկամուտ 29
9. Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ 29
10. Անձնակազմի գծով ծախսեր 29
11. Այլ ծախսեր 30
12. Շահութահարկի գծով ծախսեր 30
13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 31
14. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 32
15. Հաճախորդներին տրված վարկեր 32
16. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ 38
17. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ 38
18. Հիմնական միջոցներ 39
19. Ոչ նյութական ակտիվներ 40
20. Այլ ակտիվներ 41
21. ՀՀ կենտրոնական բանկից և կառավարությունից ստացված վարկեր 41
22. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 42
23. Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ 42
24. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ 44
25. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ 44
26. Ստորադաս փոխառություն 45
27. Այլ պարտավորություններ 45
28. Սեփական կապիտալ 45
29. Թողարկված արժեթղթեր 46
30. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ 46
31. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ 48
32. Ֆինանսական գործիքների իրական արժեքը 51
33. Կապիտալի ռիսկի կառավարում 53
34. Ռիսկի կառավարում 54

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2017 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Բանկի ֆինանսական վիճակի և կատարողականի վրա որոշակի գործարքների, այլ իրադարձությունների և պայմանների ունեցած ազդեցության մասին
- Բանկի գործունեության անընդհատության ապահովման կարողությունը գնահատելու համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Բանկի ներքին վերահսկողության արդյունավետ համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Բանկի գործառնություններն արտացոլելու և ներկայացնելու, և ցանկացած ժամանակ ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու Բանկի ֆինանսական վիճակը, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ Բանկի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Բանկի ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են Բանկի ղեկավարության կողմից 2018 թ. ապրիլի 27-ին:

Ստորագրված է ղեկավարության կողմից:

Արամ Խաչատրյան
Գործադիր տնօրեն

Միքայել Պողոսյան
Ֆինանսական տնօրեն/գլխավոր հաշվապահ

Ապրիլի 27, 2018 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում պլազա» բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ

Հեռ.՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20
www.deloitte.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Տնօրենների խորհրդին՝

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2017 թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված՝ *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Առանցքային աուդիտորական հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ֆիրմաների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ»-ի, նրա անդամ ֆիրմաների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:
© 2018 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ինչու է հարցը սահմանվել աուդիտի առումով առանցքային	Ինչպես է հարցը հաշվի առնվել աուդիտի ընթացքում
Վարկային ռիսկ և հաճախորդներին տրված վարկերի արժեզրկում Բանկի կողմից հաճախորդներին տրված վարկերը 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 104,216,558 հազար ՀՀ դրամ: Միևնույն բնույթի վարկային պորտֆելների համար արժեզրկման գծով պահուստները հաշվարկվում են հավաքական հիմունքով, իսկ նշանակալի վարկերի համար՝ անհատական հիմունքով : Հավաքական հիմունքով արժեզրկման գծով պահուստները հաշվարկվում են միգրացիոն մոդելների օգնությամբ, որոնք ներառում են հավաքագրման պատմական գործակիցները և ներկա տնտեսական և վարկային պայմանների ազդեցությունը վարկային խոշոր պորտֆելների վրա: Այս մոդելներում օգտագործվող տվյալները ենթակա են ղեկավարության դատողությանը: Առանձին արժեզրկումների դեպքում անհրաժեշտ է սահմանել, թե որ պահին է արժեզրկումը տեղի ունեցել և, ըստ այդմ, հաշվարկել վարկի հետ կապված ակնկալվող դրամական հոսքերը: Մնացորդի էական լինելու հանգամանքի և հաշվարկման սուբյեկտիվ բնույթի պատճառով սույն հանգամանքը սահմանվել է որպես աուդիտի առումով առանցքային հարց: Տես՝ ծան. 3-ը և 15-ը:	Իրականացվել են հետևյալ ընթացակարգերը՝ • Մենք ստուգել ենք վարկի հաստատման, վարչարարության և մոնիտորինգի նկատմամբ կիրառվող հիմնական վերահսկողությունների կառուցվածքը, իրականացումը և գործառնական արդյունավետությունը, ինչպես նաև վարկի արժեզրկման պահուստների բացահայտման և գրանցման գործընթացները: • Մենք ստուգել ենք դեֆոլտի հավանականության գնահատումը Բանկի կողմից՝ հիմնված 2014 թվականի դեկտեմբերից մինչև 2017 թվականի նոյեմբերն ընկած ժամանակահատվածում ժամկետանց խմբերում վարկային գումարների շարժերի տվյալների վրա: Ստուգումները ներառել են ամսական վարկային շարժի կշռված միջինների (յուրաքանչյուր խմբից 180 և ավել ժամկետանց օրեր ունեցող վարկերի խումբ տեղափոխվելու հաճախականությունը) և յուրաքանչյուր խմբում գումարների հաշվարկները: • Մենք դիտարկել ենք Բանկի կողմից օգտագործվող՝ վարկային պորտֆելների արժեզրկումից կորուստների հաշվարկման մոդելները՝ ուսումնասիրելով վարկերի միգրացիան ժամկետանց օրերի խմբերի միջև: Մենք նաև ստուգել ենք մոդելներում կիրառված ընտրանքային տվյալներ, ինչպիսիք են միգրացիոն մոդելներում օգտագործված ժամկետանց օրերը: • Մենք գնահատել ենք, թե արդյոք մոդելավորման մեջ կիրառված ենթադրությունները հաշվի են առնում բոլոր առնչվող ռիսկերը, և թե արդյոք չմոդելավորված ռիսկերը ներկայացնելու նպատակով կիրառված հավելյալ ճշգրտումները հիմնավորված են: Եթե պահուստի գնահատման ժամանակ, մեր կարծիքով, հնարավոր էր կիրառել առավել համապատասխան ենթադրություն կամ տվյալ, ապա պահուստը վերահաշվարկել ենք ըստ այդմ և համեմատել դրանք ղեկավարության հաշվարկների հետ, որպեսզի հավաստիանանք, որ ղեկավարության կատարած հաշվարկներում չկա կողմնակալություն: • Մենք գնահատել են բացահայտումների համապատասխանությունը և ամբողջականությունը:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Բանկի ֆինանսական ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրման ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված

հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզնից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան ապացույցներ Բանկի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Բանկի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արփինե Ղևոնդյան
Աուդիտի տնօրեն

Ապրիլի 27, 2018 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ՝			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	35,824,831	32,059,829
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	25	-	1,676
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	13,036,368	8,253,897
Հակադարձ հետգնման պայմանագրեր	17	4,296,862	4,552,427
Հաճախորդներին տրված վարկեր և կանխավճարներ	15	104,216,558	75,047,659
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	16,17		
- Բանկի կողմից պահվող		2,036,091	2,879,255
- Հետգնման պայմանագրերով գրավադրված		19,619,097	13,169,605
Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ		49,618	-
Շահութահարկի գծով կանխավճար		-	38,826
Հիմնական միջոցներ	18	9,304,697	8,437,062
Ոչ նյութական ակտիվներ	19	321,118	231,262
Այլ ակտիվներ	20	2,097,559	1,510,860
Ընդամենը ակտիվներ		**190,802,799**	**146,182,358**
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ՝			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	25	7,706	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	29	1,068,764	-
Հետգնման պայմանագրեր	17	20,511,989	13,224,755
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	21	4,411,627	2,989,000
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	14,822,737	14,006,062
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	23	20,296,754	14,087,891
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	91,703,898	66,795,292
Շահութահարկի գծով ստացվելիք գումարներ		373,239	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	1,096,006	1,025,222
Ստորադաս վարկեր	26	6,409,601	5,400,172
Այլ պարտավորություններ	27	1,071,870	1,084,546
Ընդամենը պարտավորություններ		**161,774,191**	**118,612,940**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	28	13,708,745	4,631,333
Էմիսիոն եկամուտ	28	33,438	9,110,850
Վերագնահատման հավելաճ	18	3,157,777	3,264,437
Գլխավոր պահուստ	28	6,000,000	6,000,000
Այլ պահուստներ		1,531,277	1,251,977
Չբաշխված շահույթ		4,597,371	3,310,821
Ընդամենը սեփական կապիտալ		**29,028,608**	**27,569,418**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**190,802,799**	**146,182,358**

Ֆինանսական հաշվետվությունները ղեկավարության կողմից ստորագրվել են 2018 թ. ապրիլի 27-ին:

Արամ Խաչատրյան
Գործադիր տնօրեն

Միքայել Պողոսյան
Ֆինանսական տնօրեն/գլխավոր հաշվապահ

Ապրիլի 27, 2018 թ.
Երևան

11 - 71 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2017 թ.	2016 թ.
Տոկոսային եկամուտ	5	14,121,975	11,359,949
Տոկոսային ծախս	5	(7,281,637)	(5,856,079)
Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստները		**6,840,338**	**5,503,870**
Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ	9	(155,678)	(564,262)
Զուտ տոկոսային եկամուտ		**6,684,660**	**4,939,608**
Զուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից		(231,661)	12,582
Զուտ օգուտ արտարժույթով առևտրից	7	1,046,286	601,945
Վճարներ և կոմիսիոն եկամուտներ	6	2,040,668	1,479,985
Վճարներ և կոմիսիոն ծախսեր	6	(391,986)	(365,689)
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով		533,283	330,885
Այլ եկամուտ	8	478,068	540,513
Զուտ ոչ տոկոսային եկամուտ		**3,474,658**	**2,600,221**
Գործառնական եկամուտ		**10,159,318**	**7,539,829**
Անձնակազմի գծով ծախսեր	10	(3,815,344)	(3,511,314)
Հիմնական միջոցների մաշվածություն	18	(575,634)	(484,897)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	19	(38,902)	(20,694)
Այլ ծախսեր	11	(3,693,782)	(2,750,562)
Արժեզրկումից հակադարձումներ այլ ակտիվների գծով	21	-	3,550
Գործառնական ծախսեր		**(8,123,662)**	**(6,763,917)**
Շահույթը նախքան շահութահարկով հարկումը		**2,035,656**	**775,912**
Շահութահարկի գծով ծախս	12	(485,259)	(185,541)
Տարվա շահույթ		**1,550,397**	**590,371**
Այլ համապարփակ եկամուտ			
Շահույթում կամ վնասում վերադասակարգման ոչ ենթակա հոդվածներ			
Հիմնական միջոցների վերագնահատում		-	4,137,161
Վերագնահատմանը վերաբերող շահութահարկ		-	(827,432)
Շահույթում կամ վնասում վերադասակարգման ենթակա հոդվածներ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ օգուտ տարվա համար		912,045	1,895,215
Տարվա ընթացքում իրացված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերադասակարգումից ճշգրտում		(563,536)	(209,881)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներին վերաբերող շահութահարկ		(69,209)	(337,062)
Ասոցացված կազմակերպության՝ այլ համապարփակ եկամուտի բաժինը			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ վնաս տարվա համար, առանց շահութահարկի		-	-
Տարվա այլ համապարփակ եկամուտ՝ առանց շահութահարկի		**279,300**	**4,658,001**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**1,829,697**	**5,248,372**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Բազային		0.84	0.32
Նոսրացված		0.84	0.32

11 - 71 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	Բաժնե-տիրական կապիտալ	Բաժնետոմ-սերի թողարկման համար ստացված կանխա-վճարներ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Հիմնական միջոցների վերագն. պահուստ	Վաճառքի համար մատչելի ֆինանս. ակտիվ-ների պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ		**2,333,338**	**4,001,688**	**-**	**6,000,000**	-	**(96,295)**	**2,761,345**	**15,000,076**
Տարվա շահույթ		**-**	**-**	**-**	**-**	-	-	590,371	**590,371**
Տարվա այլ համապարփակ եկամուտ									
Վերագնահատման պահուստի մաշվածության փոխանցում, առանց հարկի, 11,313-ի չափով						(45,292)		45,292	**-**
Տարվա այլ համապարփակ եկամուտ՝ շահութահարկով հարկումից հետո		**-**	**-**	**-**	**-**	3,309,729	1,348,272	-	**4,658,001**
Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ		**-**	**-**	**-**	**-**	**3,264,437**	**1,348,272**	**-**	**4,658,001**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**-**	**-**	**-**	**-**	**3,264,437**	**1,348,272**	**590,371**	**5,248,372**
Հայտարարագրված շահաբաժիններ		-	-	-	-	-	**-**	(443,023)	**(443,023)**
Սովորական բաժնետոմսերի թողարկում		1,195,030	(4,001,688)	4,919,583	-	-	**-**	-	**2,112,925**
Ձեռքբերում՝ միացման միջոցով (Ծան. 30)		1,102,965	-	4,191,267	-	-	**-**	356,836	**5,651,068**
Մնացորդը 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**4,631,333**	**-**	**9,110,850**	**6,000,000**	**3,264,437**	**1,251,977**	**3,310,821**	**27,569,418**
Տարվա շահույթ		**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**1,550,397**	**1,550,397**
Տարվա այլ համապարփակ եկամուտ									
Վերագնահատման պահուստի մաշվածության փոխանցում, առանց հարկի, 26,910-ի չափով		-	**-**	**-**	**-**	(106,660)	-	106,660	**-**
Տարվա այլ համապարփակ եկամուտ՝ շահութահարկով հարկումից հետո		**-**	**-**	**-**	**-**	**-**	279,300	**-**	**279,300**
Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ		**-**	**-**	**-**	**-**	**-**	**279,300**	**-**	**279,300**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		**-**	**-**	**-**	**-**	**-**	**279,300**	**1,550,397**	**1,829,697**
Հայտարարագրված շահաբաժիններ		-	**-**	**-**	**-**	**-**	**-**	(370,507)	**(370,507)**
Էմիսիոն եկամտի փոխանցում բաժնետիրական կապիտալին		9,077,412	-	(9,077,412)	**-**	**-**	**-**	**-**	**-**
Մնացորդը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**13,708,745**		**33,438**	**6,000,000**	**3,157,777**	**1,531,277**	**4,597,371**	**29,028,608**

11 - 71 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2017 թ.	2016 թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Տարվա շահույթ		1,550,397	590,371
Ճշգրտումներ՝			
Շահութահարկի գծով ծախս		485,259	185,541
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից վնաս		155,678	564,262
Մաշվածություն և ամորտիզացիա		614,535	505,591
Հիմնական միջոցների օտարումից օգուտ/(վնաս)		17,969	(82,573)
Եկամուտ դրամաշնորհներից		(240)	(507)
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ		(276,643)	(659,504)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		(533,283)	(330,885)
Այլ եկամուտ		-	(2,369)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական ներհոսք՝ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները		**2,013,672**	**769,927**
Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ			
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում.			
Պահանջներ ֆինանսական կազմակերպություններից		(5,319,747)	(1,125,763)
Հակադարձ հետգնման պայմանագրեր		255,565	(3,720,261)
Հաճախորդներին տրված վարկեր		(28,720,245)	(16,416,511)
Այլ ակտիվներ		(596,946)	(1,034,484)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում).			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		816,675	2,820,460
Հետգնման պայմանագրեր		7,287,234	4,120,077
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		25,071,374	4,821,305
Այլ պարտավորություններ		(44,802)	141,721
Գործառնական գործունեությունում օգտագործված դրամական միջոցներ՝ նախքան հարկումը		**762,780**	**(9,623,529)**
Վճարված շահութահարկ		(71,619)	(161,097)
Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		**691,161**	**(9,784,626)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Միացումից ստացված դրամական միջոցներ		-	3,186,727
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների ձեռքբերում		(10,783,114)	(4,403,264)
Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանս. ակտիվների ձեռքբերում		(50,169)	
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների իրացումից մուտքեր		6,192,862	1,717,360
Հիմնական միջոցների ձեռքբերում		(1,533,327)	(1,124,354)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		72,089	1,046,797
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(128,757)	(52,005)
Ներդրումային գործունեությունում (օգտագործված) /(գործունեությունից ստացված) զուտ դրամական միջոցներ		**(6,230,416)**	**371,261**

11 - 71 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2017 թ.	2016 թ.
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից վարկերի ստացում		1,422,627	224,827
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերից մուտքեր		7,222,776	15,164,652
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի մարում		-	(4,074,311)
Ստորադաս պարտքից մուտքեր		1,009,429	974,568
Թողարկված բաժնետոմս		-	2,112,925
Վճարված շահաբաժիններ		(338,365)	(423,057)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**9,316,467**	**13,979,604**
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա		(12,210)	(57,000)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**3,765,002**	**4,509, 239**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեսկզբի դրությամբ	13	**32,059,829**	**27,550,590**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեվերջի դրությամբ	13	**35,824,831**	**32,059,829**

11 - 71 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Բանկը

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (Այսուհետ՝ «Բանկ») հիմնվել է 1991 թ. Հայաստանի Հանրապետությունում ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական Հանրապետական բանկի (1991-1993 թ.-ին «Հայպետբանկ» ՓԲԸ) հիման վրա և 1995 թ.-ին վերակազմավորվել որպես բաց բաժնետիրական ընկերության: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ և այն գործում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրամադրված թիվ 1 արտոնագրի հիման վրա:

Բանկն ընդունում է ավանդներ, տրամադրում վարկեր, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց մատուցում է այլ բանկային ծառայություններ:

Բանկի գլխամասային գրասենյակը և թվով 26 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 20 մասնաճյուղեր՝ ՀՀ տարբեր մարզերում և 1 մասնաճյուղ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Ամիրյան 23/1:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

Համապատասխանության մասին հայտարարություն. սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության վրա, որ Բանկը գործում է անընդհատության սկզբունքով և կշարունակի գործել տեսանելի ապագայում: Բանկը չունի իր բիզնես գործառնություններն էականորեն կրճատելու որևէ մտադրություն կամ անհրաժեշտություն:

Բանկի ղեկավարությունը և բաժնետերերը մտադիր են շարունակել Բանկի հետագա գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Ղեկավարությունը համոզված է, որ Բանկի գործունեության անընդհատության սկզբունքի վերաբերյալ ենթադրությունը համապատասխանում է իրականությանը՝ հիմնվելով Բանկի կապիտալի համապատասխանության բավարար գործակցի և պատմական փորձառության վրա, ըստ որի՝ կարճաժամկետ պարտավորությունները կվերաֆինանսավորվեն Բանկի բնականոն գործունեության ընթացքում: Տես՝ ծան. 34-ը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ շահույթի և կորուստի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների, իրական արժեքով նշված վաճառքի համար մատչելի ակտիվների, ինչպես նաև վերագնահատված գումարով նշված հիմնական միջոցների: Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք այդ գինն ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով գնահատման այլ մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս Բանկը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության այնպիսի բնութագրերը, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս:

Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ վարձակալության գործարքներից, որոնք նկարագրված են ՀՀՄՍ 17-ում և չափումներից, որոնք թեև համանման են իրական արժեքին, սակայն իրական արժեքով չեն, մասնավորապես օգտագործման արժեքը՝ ըստ ՀՀՄՍ 36-ի:

Ի լրումն, ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները նկարագրվում են հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում ելակետային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք Բանկին հասանելի են չափման ամսաթվի դրությամբ.
- Մակարդակ 2-ի ելակետային տվյալները իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով.
- Մակարդակ 3-ի ելակետային տվյալներն իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի ելակետային տվյալներ:

Բանկն, ընդհանուր առմամբ, ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են ծանոթագրություն 35-ում:

Գործառնական արժույթ. Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Բանկն իրականացում է իր գործունեությունը («գործառութային արժույթ»): Բանկի գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետև՝ դրամ): Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Բոլոր արժեքները կլորացված են հազար ՀՀ դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

Հաշվանցում. Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ, և հստակ բացահայտված չէ Բանկի հաշվապահական քաղաքականության մեջ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր. Ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտները ճանաչվում են, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և եկամտի գումարը կարող է արժանահավատորեն չափվել: Տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային ծախսի և եկամտի բաշխման մեթոդն է:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը պարտքային գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ՝ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը՝ նախնական ճանաչման պահին:

Այն դեպքերում, երբ տեղի է ունենում ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ակտիվների խմբի արժեքի նվազում (մասնակի նվազում) արժեզրկումից կորստի հետևանքով, տոկոսային եկամուտն այնուհետև ճանաչվում է՝ կիրառելով այն տոկոսադրույքը, որը կիրառվել էր արժեզրկումից կորուստը չափելու նպատակով ապագա դրամական հոսքերը զեղչելիս:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերից եկամուտ. վերը նշված գործիքների վաճառքից օգուտը/վնասը ճանաչվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս՝ շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում՝ հիմնվելով հետևյալ երկու մեծությունների տարբերության վրա՝ հետգնման արժեքի, որը կուտակվել է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և վաճառքի գնի, երբ այդ գործիքները վաճառվում են երրորդ անձանց: Երբ հակադարձ հետգնումը/հետգնումը տեղի է ունենում իր սկզբնական պայմաններով, վաճառքի և պայմանագրի սկզբնական փուլում բանակցված հետգնման գնի միջև արդյունավետ օգուտը/տոկոսը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Կոմիսիոն եկամուտ. վարկի տրամադրման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և ճանաչվում որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի պայմաններով վարկային համաձայնության, վարկային պարտավորության ստանձնման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և հետագայում ճանաչվում որպես տրամադրված վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ քիչ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի վարկային համաձայնագրի, վարկ տրամադրելու պարտավորության ստանձնման վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ վարկի տրամադրման պարտավորության մնացած ժամանակահատվածի ընթացքում: Այն դեպքում, երբ վարկ տրամադրելու պարտավորությունն ավարտվում է առանց վարկի տրամադրման, ապա վարկ տրամադրելու պարտավորության վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքում՝ պարտավորության ավարտի պահին: Վարկի սպասարկման վճարները ճանաչվում են որպես եկամուտ, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են: Բոլոր այլ միջնորդավճարները ճանաչվում են այն ժամանակ, երբ ծառայությունները մատուցվում են:

Ֆինանսական գործիքներ

Բանկը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր կերպով գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ. ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, գ) տրամադրված վարկեր և դեբիտորական պարտքեր, դ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից ու նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

<u>ա) Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.</u>
Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար կամ նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում մոտ ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Բանկի կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- եթե նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Բանկի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են շահույթում կամ վնասում ճանաչվող վերաչափման արդյունքում: Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտվի գծով վաստակած բոլոր շահաբաժինները և տոկոսները և ներառվում են «այլ օգուտներ և վնասներ» և «տոկոսային եկամուտ» տողում, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

<u>բ) Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ.</u> մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով Բանկն ունի մինչ մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը:

Եթե Բանկը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը (բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության), ողջ դասը կորակազրկվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, Բանկը ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու ֆինանսական տարիների ընթացքում հնարավորություն չէր ունենա որևէ ֆինանսական ակտիվ դասակարգել որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

<u>գ) Վարկեր և դեբիտորական պարտքեր.</u> առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում (ներառյալ բանկերից ստացվելիք միջոցներ, հաճախորդներին տրված վարկեր և այլ ֆինանսական ակտիվներ) դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

<u>դ) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ.</u> վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես (ա) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով ճանաչվող ֆինանսական ակտիվներ, (բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ (գ) վարկեր և դեբիտորական պարտքեր:

Վաճառքի համար մատչելի՝ կապիտալ ներդրումները, որոնք չունեն գնանշված շուկայական արժեք և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

<u>Ֆինանսական ակտիվների արժեզրկում.</u> շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին գնահատվում են արժեզրկման հայտանիշների առկայությունը որոշելու նպատակով: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է օբյեկտիվ վկայություն այն մասին, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքեր կարող են ազդեցություն ունենալ ներդրման գծով գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Որպես վաճառքի համար մատչելի դասակարգված՝ գնանշված կամ չգնանշված կապիտալ ներդրումներում արժեթղթի իրական արժեքի զգալի կամ տևական անկումն ինքնարժեքից համարվում է արժեզրկման օբյեկտիվ վկայություն: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող են համարվել հետևյալ հայտանիշները՝

- թողարկողի կամ կոնտրագենտի զգալի ֆինանսական դժվարությունները, կամ
- պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- փոխառուի կողմից սնանկության կամ ֆինանսական վերակազմակերպման գործընթացի նախաձեռնումը, կամ
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը:

Ֆինանսական ակտիվների որոշ կատեգորիաների համար, ինչպիսիք են՝ վարկերը և դեբիտորական պարտքերը, ակտիվները, որոնք, ըստ գնահատականների, առանձին արժեզրկված չեն, ի լրումն՝ գնահատվում են նաև խմբային արժեզրկման տեսանկյունից: Վարկային պորտֆելի արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող է համարվել Բանկի նախկին փորձը վճարումների հավաքագրման գծով, հետաձգված վճարումների թվի աճը պորտֆելում, ինչպես նաև ազգային կամ տեղական մակարդակում դիտարկելի փոփոխությունները, որոնք կարող են հանգեցնել դեբիտորական պարտքի անհավաքագրելիության:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման գծով ծախսի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի տարբերությունը՝ զեղչված ֆինանսական ակտիվի համար սկզբնապես սահմանված արդյունավետ տոկոսադրույքով:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով անմիջականորեն բոլոր ակտիվների գծով, բացառությամբ վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստային հաշվի միջոցով: Երբ ակտիվը կամ դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի, այն դուրս է գրվում պահուստային հաշվի միջոցով: Հետագայում դուրս գրված գումարների վերականգնումը կատարվում է դրանք պահուստային հաշվին կրեդիտագրելու միջոցով: Պահուստային հաշվի հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են եկամուտներում կամ ծախսերում:

Երբ վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես տվյալ ժամանակաշրջանի շահույթ կամ վնաս:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար այն դեպքում, եթե հաջորդող ժամանակաշրջանում արժեզրկումից կորուստի գումարը նվազում է, և նվազեցումը կարող է օբյեկտիվորեն վերագրվել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցող դեպքերի, նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով այնքանով, որքանով արժեզրկման ամսաթվի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ամորտիզացված արժեքն այն դեպքում, եթե այդ արժեզրկումը ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերին, ապա նախկինում շահույթում կամ վնասում հաշվառված արժեզրկումից վնասները չեն հակադարձվում շահույթի կամ վնասի միջոցով: Իրական արժեքի ցանկացած փոփոխություն, որը տեղի է ունենում արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվում է ներդրումների վերագնահատման պահուստի տակ:

<u>Վարկերի դուրսգրում.</u> վարկերի արժեզրկումից կորուստները վերագրվում են պահուստներին, երբ համարվում են անհավաքագրելի: Վարկերը դուրս են գրվում Բանկի ղեկավարության կողմից գումարների հավաքագրման ուղղությամբ իրականացված բոլոր հնարավորություններն օգտագործելուց և գրավները վաճառելուց հետո: Դուրս գրված գումարների հետագա հավաքագրումը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում է որպես ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստներին կատարած մասհանումների վերադարձ հավաքագրման ժամանակաշրջանում:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը. Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Բանկը չի փոխանցում և պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Բանկը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունն այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Բանկը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Բանկը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև գրավով ապահովված փոխառությունը՝ ստացված մուտքերի համար:

Ֆինանսական ակտիվն ամբողջությամբ ապաճանաչելիս հաշվեկշռային արժեքի և ստացված հատուցման այլ համապարփակ ֆինանսական արդյունքում նախկինում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե Բանկի շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ Բանկը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Բանկը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող», կամ որպես «այլ ֆինանսական պարտավորություններ»:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար, կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Բանկի կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, բանկի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը* ստանդարտը, թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Արժեթղթերի հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխատվության գործարքներ. սովորական գործունեության ընթացքում Բանկը կնքում է ֆինանսական ակտիվների վաճառքի և հետգնման (ռեպո), ինչպես նաև ֆինանսական ակտիվների գնման և հետվաճառքի (հակադարձ ռեպո) պայմանագրեր: Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրերն օգտագործվում են Բանկի կողմից որպես գանձապետական կառավարման տարր:

Ռեպո համաձայնագիրն իրենից ներկայացնում է վճարի կամ այլ հատուցման դիմաց ֆինանսական ակտիվի փոխանցում մեկ այլ կողմի և համապատասխան պարտավորություն՝ հետ գնելու այդ ֆինանսական ակտիվն ապագայում փոխանակման համար օգտագործված կանխիկ կամ այլ հատուցման գումարը գումարած տոկոսը: Այս պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործարքներ:

Բանկը կնքում է արժեթղթերի հետգնման պայմանագրեր և արժեթղթերի փոխառության պայմանագրեր, ըստ որոնց այն ստանում կամ փոխանցում է գրավի առարկան՝ շուկայում ընդունված պրակտիկայի համաձայն: Հետգնման գործարքների ստանդարտ պայմաններով Հայաստանի Հանրապետությունում գրավառուն իրավունք ունի վաճառել կամ վերագրավադրել գրավի առարկան՝ պայմանով, որ դրա դիմաց կվերադարձնի համարժեք արժեթղթեր՝ գործարքի փակման ամսաթվին:

Արժեթղթերի փոխանցումը կոնտրագենտներին միայն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե դրա հետ միասին փոխացվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները, ներառյալ փոխառու միջոցները, ենթակա (սուբորդինացված) պարտավորությունները և այլ ֆինանսական պարտավորությունները, սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

<u>Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը.</u> Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Բանկի պարտավորությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

<u>Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր.</u> ֆինանսական երաշխավորության պայմանագիրն այնպիսի պայմանագիր է, որի արդյունքում այդ պայմանագիրը տրամադրողը պարտավորվում է կատարել որոշակի վճարումներ, պայմանագիրը ստացողին փոխհատուցելով այն կորուստները, որը վերջինս կրում է որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի համաձայն սահմանված ամսաթվին վճարումներ չկատարելու արդյունքում:

Բանկի կողմից տրամադրված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը սկզբնապես չափվում են դրանց իրական արժեքով, և եթե չեն դասակարգվում որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, հետագայում չափվում են հետևյալ երկու մեծություններից առավելագույնով.

- ՀՀՄՍ 37. *Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ* ստանդարտի համաձայն որոշված պայմանագրով նախատեսված պարտավորության գումարի, և
- Ի սկզբանե ճանաչված գումարի՝ նվազեցված, ըստ անհրաժեշտության, հասույթի ճանաչման քաղաքականության համաձայն ճանաչված՝ կուտակված արժեզրկման չափով

Ածանցյալ ֆինանսական գործիքներ. իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն արտարժութային ռիսկը կառավարելու նպատակով կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով, այդ թվում՝ արտարժույթի սվոփեր և արտարժույթի փոխանակման պայմանագրեր: Նման ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող և դրանց հաշվառումն իրականացվում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք չափվում են իրական արժեքով: Կախված գործիքի շուկայական կամ պայմանագրային արժեքից, ինչպես նաև մի շարք այլ գործոններից, իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշումներով կամ գնային մոդելներով: Ածանցյալ ֆինանսական գործիքները համարվում են ակտիվներ, եթե դրանց իրական արժեքը դրական է և պարտավորություններ, եթե դրանց արժեքը բացասական է: Գործարքների շահույթը և վնասը վերոնշյալ գործիքների դեպքում գրանցվում են համապարփակ եկամտի մասին հաշվետվություններում՝ որպես իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների (պարտավորությունների) գործարքներից առաջացած զուտ օգուտ կամ վնաս: Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ներառվում են օգուտում/վնասում:

Բանկը որպես վարձակալ. գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. դրամական միջոցներն և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, թղթակցային հաշիվների մնացորդները, որոնք զերծ են սահմանափակումներից և ժամկետային ավանդները, որոնց մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը, որոնք կարճ ժամկետում կարող են փոխարկվել կանխիկի և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Թանկարժեք մետաղներ. ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի թանկարժեք մետաղների բորսայի գնանշումների վրա: Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ/կորուստ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

Առգրավված ակտիվներ. որոշակի հանգամանքներում, ակտիվներն առգրավվում են ժամկետանց վարկերի գծով գրավադրված գույքի վրա արգելանքի կիրառման դեպքում: Առգրավված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և վաճառքի ինքնարժեքից նվազագույնով:

Հիմնական միջոցներ. հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան: Հիմնական միջոցները վերագնահատվել են տարվա ընթացքում:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է զրոյացնելու ակտիվների արժեքը՝ դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով հետևյալ օգտակար ծառայության ժամկետներով՝

Հիմնական միջոցների դասը	Օգտակար ծառայություն (տարիներ)
Շենքեր	50
Համակարգիչներ	3-5
Մեքենաներ	8
Վարձակալված ակտիվների բարելավումներ	20
Այլ	8

Վարձակալված ակտիվների բարելավումներն ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և օգտակար ծառայության ժամկետից նվազագույնով, եթե առկա չէ ողջամիտ համոզվածություն այն մասին, որ Բանկը կստանա ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում կամ կերկարաձգի վարձակալության ժամկետը:

Հիմնական միջոցների տարրն ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրսբերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում ֆինանսական արդյունքում:

2016 թվականին Բանկը սկսել է վերագնահատման մոդելը կիրառել շինությունների նկատմամբ, որոնք վերագնահատվում են 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ. որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում. ոչ նյութական ակտիվներն ապաճանաչվում են դրանք օտարելիս, կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուդվիլից. յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Բանկը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար, արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի որոշվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Բանկը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության տեսանկյունից առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել:

Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է. օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով տոկոսադրույք մինչ հարկումը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ, քան հաշվեկշռային արժեքը, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչ փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչ վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ներդրումներ ասոցացված ընկերություններում. ասոցացված ընկերությունը կազմակերպություն է, որտեղ Բանկն ունի նշանակալի ազդեցություն, բայց չի վերահսկում նրան առանձին կամ համատեղ՝ ներդրման օբյեկտի ֆինանսական և գործառնական քաղաքականության գծով որոշումներ ընդունելու միջոցով: Ներդրման օբյեկտի ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև գործունեության արդյունքներում ներդրողի բաժնեմասը ֆինանսական հաշվետվություններում արտացոլվում են բաժնեմասնակցության մեթոդով, բացի այն դեպքերից, երբ ներդրումը դասակարգվում է վաճառքի համար մատչելի:

Ասոցացված ընկերություններում ներդրումները հաշվառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սկզբնական արժեքով, և ճշգրտվում ասոցացված ընկերության զուտ ակտիվներում Բանկի մասնակցության փոփոխությանը համապատասխան, հաշվի առնելով առանձին ներդրումների արժեքի արժեզրկումից կորուստները: Բանկի բաժնեմասը գերազանցող՝ ասոցացված ընկերության վնասները չեն ճանաչվում:

Ներդրման ամսաթվով ասոցիացված ընկերության զուտ ակտիվների իրական արժեքը գերազանցող ներդրման մասը ճանաչվում է որպես գուդվիլ: Ասոցացված ընկերությունում ձեռքբերման ամսաթվի դրությամբ զուտ որոշելի ակտիվների իրական արժեքում բանկի ունեցած մասնակցությունից ցածր ձեռքբերման արժեքի տարբերությունը (ձեռքբերման գծով զեղչը) կրեդիտագրվում է շահույթում կամ վնասում՝ ձեռքբերման ժամանակահատվածում:

Այն դեպքում, երբ Բանկը գործարքի մեջ է մտնում Բանկի հետ ասոցացված ընկերության հետ, շահույթները կամ վնասները մարվում են Բանկի՝ տվյալ ասոցացված կազմակերպությունում ունեցած մասնակցության չափով: Կորուստները կարող են վկայել փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին և այդ դեպքում համապատասխան արժեզրկման գծով պահուստավորում է պահանջվում:

Հարկում

Շահութահարկի գծով ծախսն իրենից ներկայացնում է ընթացիկ հարկի գծով պարտավորության և հետաձգված հարկի հանրագումարը:

Ընթացիկ հարկ. ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը նախքան հարկումը տարբերվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Բանկի ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ. հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորություններն, ընդհանուր առմամբ, ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով՝ կապված հիմնական միջոցների և հաճախորդներին տրված վարկերի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության մարման ժամանակային բաշխումը, կամ հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի մարվի տեսանելի ապագայում: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, կապված վերը նշված ներդրումների հետ, ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը և ժամանակավոր տարբերությունը կմարի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, ինչը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել, կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Բանկը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր. ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Գործունեության հետ կապված հարկեր. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ ևս, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է Բանկի գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

Պահուստներ. պահուստները ճանաչվում են, երբ Բանկն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Բանկից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Եթե ակնկալվում է, որ որևէ երրորդ կողմ ամբողջությամբ, կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ կազմակերպության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ. պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, բայց դրանք բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Արտարժույթ. Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկի գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները (տարրերը) վերահաշվարկվում են այդ օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող՝ արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, վերահաշվարկվում են իրական արժեքի սահմանման օրվա փոխարժեքով: Արտարժույթով հաշվարկված սկզբնական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում:

Դրամային հոդվածների գծով առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ դրանց առաջացման ժամանակաշրջանում:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Բանկի կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջում հետևյալն են՝

	Միջին փոխարժեք		Ստորոտ փոխարժեք	
	2017 թ.	**2016 թ.**	**2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	482.63	480.45	484.10	483.94
ՀՀ դրամ/1 ԵՎՐՈ	546.15	531.86	580.10	512.20
ՀՀ դրամ/1 ռուբլի	8.28	7.20	8.40	7.88

Գրավ. Բանկը որպես հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց ընդունում է գրավ, երբ դա նպատակահարմար է համարվում: Գրավը հիմնականում լինում է հաճախորդի ակտիվների նկատմամբ կոշտ գրավի տեսքով և Բանկին պահանջի իրավունք է տալիս այս ակտիվների նկատմամբ հաճախորդի առկա և ապագա պարտավորությունների դիմաց:

Բաժնետիրական կապիտալ. բաժնետիրական կապիտալի համալրումները ճանաչվում են սկզբնական արժեքով: Թողարկված նոր բաժնեմասերին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորումներից, նվազեցվում են սեփական կապիտալից՝ առանց շահութահարկի:

Սեգմենտների ներկայացում. գործառնական սեգմենտը Բանկի բաղադրիչն է, որը ներգրավված է ձեռնարկատիրական գործունեություններում, որոնցից այն կարող է վաստակել հասույթներ և կրել ծախսեր (ներառյալ Բանկի այլ բաղադրիչների հետ գործառնություններին վերաբերող հասույթները և ծախսերը): Գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները կանոնավոր կերպով վերանայվում են Բանկի գլխավոր գործառնական որոշում կայացնողի կողմից՝ սեգմենտին միջոցների բաշխման վերաբերյալ որոշում կայացնելու և դրա գործունեության արդյունքները գնահատելու նպատակով: Գործառնական սեգմենտի գծով առկա է առանձին ֆինանսական տեղեկատվություն:

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ՝ ըստ ՖՀՄՍ 8 «Գործառնական սեգմենտներ» ստանդարտի պահանջների: Ղեկավարությունն առանձին հիմունքով չի ուսումնասիրում Բանկի բաղադրիչների գործառնական արդյունքները: Բանկի ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում, իսկ իր հասույթի և շահույթի մեծ մասը Բանկը ստանում է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող և Հայաստանի Հանրապետության հետ կապված գործառնություններից: Գլխավոր գործառնական որոշում կայացնողը, որը Բանկի դեպքում հանդիսանում է Խորհուրդը, միայն ստանում և ուսումնասիրում է Բանկին՝ որպես մեկ ամբողջությանը վերաբերող տեղեկատվությունը:

3. Կարևոր հաշվապահական դատողությունների և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները

Բանկի հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Բանկի ղեկավարությանն անհրաժեշտ է լինում կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին, կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Անորոշության գնահատման չափանիշների հիմնական աղբյուրները. ստորև ներկայացվում են ապագային վերաբերող հիմնական ենթադրությունները և ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատումներից բխող անորոշության այլ հիմնական աղբյուրները, որոնք կրում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների՝ հաջորդող ֆինանսական տարում էական ճշգրտումների առաջացման զգալի ռիսկ:

Վարկերի արժեզրկում. Բանկը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Բանկի վարկերի արժեզրկման պահուստները սահմանվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու համար: Բանկը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին կատարվող մասհանումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Բանկի կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Բանկը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բանկը կիրառում է անհատական և խմբային գնահատումների համադրություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման պահուստին մասհանումները որոշելիս: Անհատական գնահատումները կիրառվում են այն վարկերի և դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված նշանակալի են: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց մնացորդը սեփական կապիտալի 0.2%-ից ավելին է կազմում, առանձին վերցված համարվում են նշանակալի: Բանկն օգտագործում է ղեկավարության գնահատումը՝ գնահատելու համար արժեզրկումից կորուստների գումարներն այն դեպքում, երբ վարկառուն ունի ֆինանսական դժվարություններ և առկա են սակավաթիվ պատմական տվյալներ՝ կապված համանման վարկառուների հետ:

Առանձին վերցված նշանակալի վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք արժեզրկված չեն, ինչպես նաև բոլոր այն վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք անհատապես չեն գնահատվել, ներառվում են խմբային հիմունքով գնահատվող վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ: Խմբային հիմունքով գնահատվող վարկերն և դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ նմանատիպ վարկային ռիսկի բնութագրիչների և կետանցվածության կարգավիճակի և գնահատվում համապատասխանաբար: Բանկը ապագա դրամական հոսքերում փոփոխությունները գնահատում է՝ ելնելով նախկին ցուցանիշներից, հաճախորդների նախկին վարքագծից, տվյալ խմբի վարկառուների կողմից վճարումների կատարման իրավիճակի վատթարացման դիտարկելի տվյալներից, ինչպես նաև տնտեսական պայմաններից, որոնք առնչություն ունեն խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Ղեկավարությունն օգտագործում է գնահատականներ՝ ելնելով վնասների գծով առկա փորձից այն ակտիվների գծով, որոնք ունեն վարկային ռիսկին բնորոշ հատկանիշներ և առկա է վարկերի խմբին համանման արժեզրկման հայտանիշ: Բանկը հիմնվում է ղեկավարության դատողության վրա՝ վարկերի խմբի գծով դիտարկելի տվյալները ճշգրտելու համար այնպես, որ դրանք արտացոլեն պատմական տվյալներում չարտացոլված ընթացիկ հանգամանքները: Խմբային հիմունքով գնահատման մեթոդոլոգիայի խնդիրն է՝ ապահովել, որ արժեզրկումից կորստի պահուստը արտացոլի կորստի պատճառ հանդիսացող իրադարձությունները, որոնք արդեն տեղի են ունեցել, սակայն դեռ չեն գնահատվել անհատական հիմունքով:

Ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստավորումը որոշվում է՝ ելնելով ներկա տնտեսական և քաղաքական հանգամանքներից: Բանկը հնարավորություն չունի կանխատեսելու հանգամանքների փոփոխությունները Հայաստանում և դրանց հնարավոր ազդեցությունները ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների պահուստի համարժեքության վրա ապագա ժամանակաշրջաններում:

2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերն կազմում էին համապատասխանաբար՝ 105,821,678 և 76,594,142 հազար ՀՀ դրամ, իսկ արժեզրկումից կորուստների հատկացումը՝ համապատասխանաբար 1,605,120 և 1,546,483 հազար ՀՀ դրամ:

4. Ֆինանսական հաշվետվությունների նոր և վերանայված միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ների) կիրառումը

ՖՀՄՍ-ների փոփոխություններ, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների վրա

Ընթացիկ տարում ընդունվել են հետևյալ նոր և բարեփոխված ստանդարտները և մեկնաբանությունները: Այդ փոփոխությունների կիրառումը որևէ էական ազդեցություն չի ունեցել Բանկի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների բացահայտումների վրա:

- Փոփոխություններ ՀՀՄՍ 7 ստանդարտում. *Բացահայտման նախաձեռնություն*
- ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2014-2016 թթ. ցիկլ. փոփոխություններ ՖՀՄՍ 12 ստանդարտում

Փոփոխություններ ՀՀՄՍ 7 ստանդարտում. Բացահայտման նախաձեռնություն

Բանկն առաջին անգամ այս փոփոխությունները կիրառել է այս ընթացիկ տարում: Փոփոխությունները պահանջում են կազմակերպությանը տրամադրել բացահայտումներ, որոնք հնարավորություն են տալիս ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին գնահատել ֆինանսական գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխությունները, ներառյալ՝ դրամական և ոչ դրամական փոփոխությունները:

Բանկի՝ ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունները բաղկացած են փոխառություններից (ծան. 13) և որոշակի ֆինանսական պարտավորություններից: Այդ հոդվածների բացման և փակման հաշվեկշիռների համադրումը ներկայացված է ծան. 25-ում: Փոփոխությունների անցումային դրույթներին համապատասխան, Բանկը նախորդ ժամանակաշրջանի համար չի բացահայտում համեմատական տեղեկատվություն: Բացի 25-րդ ծանոթագրությում ներկայացված լրացուցիչ բացահայտումից, այդ փոփոխությունների կիրառումը չի ազդել Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 2014-2016 թթ. տարեկան բարելավումների ցիկլ. Փոփոխություններ ՖՀՄՍ 12 ստանդարտում

2014-2016 թվականների ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումների մեջ ներառված ՖՀՄՍ 12-ի փոփոխությունները Բանկն առաջին անգամ կիրառել է ընթացիկ տարում: Այս փաթեթում ընդգրկված մյուս փոփոխությունները դեռևս պարտադիր ուժ չունեն և Բանկի կողմից ավելի վաղ կիրառության մեջ չեն դրվել (տես հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած նոր և վերանայված ՖՀՄՍ-ների ցանկը):

ՖՀՄՍ 12-ի փոփոխությունը հստակեցնում է, կազմակերպությունը կարող է դուստր ձեռնարկություններում, ասոցացված կամ համատեղ ձեռնարկումներում՝ որպես վաճառքի համար դասակարգված շահաբաժինների (կամ օտարման խմբում ներառված, որը դասակարգված է) մասով չներկայացնել ամփոփ ֆինանսական տվյալներ: Փոփոխությամբ հաստատվում է, որ ՖՀՄՍ 12-ում այդ տվյալների ներկայացման պահանջի զիջումը միակ զիջումն է, որը վերաբերում է նման շահաբաժիններին:

Այս փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն չի ունեցել Բանկի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բանկը որևէ հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտ, փոփոխություն կամ մեկնաբանություն վաղաժամկետ չի կիրառել:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ. Բանկը դեռևս չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք հրապարակվել են, սակայն դեռևս չեն գործում:

- ՖՀՄՍ 9. *Ֆինանսական գործիքներ*[1]
- ՖՀՄՍ 15. *Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ (և առնչվող պարզաբանումները)* [1]
- ՖՀՄՍ 16. *Վարձակալություն*[2]
- ՖՀՄՄԿ 22. Արտարժույթով գործարքները և կանխավճարներ
- ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2015-2017 թթ. ցիկլ [2]

[1]Գործում է 2018թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:
[2]Գործում է 2019թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ

2009թ. նոյեմբերին հրապարակված ՖՀՄՍ 9 նոր պահանջներ է սահմանել ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման համար: ՖՀՄՍ 9 փոփոխվել է 2010թ. հոկտեմբերին՝ ներառելով ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման պահանջներ, ինչպես նաև՝ 2013թ. նոյեմբերին՝ սահմանելով հեջավորման ընդհանուր հաշվառման նոր պահանջներ: 2014թ. հուլիսին թողարկվեց ՖՀՄՍ 9-ի լրամշակված տարբերակը, որում հիմնականում ներկայացված են ա) ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահանջները, բ) ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման գծով սահմանափակ թվով փոփոխություններ՝ ներկայացնելով «այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող իրական արժեք» հասկացությունը որոշակի պարզ պարտքային գործիքների գծով:

ՖՀՄՍ 9-ի հիմնական պահանջները հետևյալն են՝

- **Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը.** ՖՀՄՍ 9-ի շրջանակում բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները պետք է գնահատվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, և պայմանագրով նախատեսված դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չվճարված մասի նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում, սկզբնական ճանաչումից հետո սովորաբար չափվում են ամորտիզացված արժեքով: Բիզնես մոդելում պահվող պարտքային գործիքները, որոնց նպատակն իրագործվում է թե պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրման և թե ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով, և որոնք ունեն ֆինանսական ակտիվին բնորոշ պայմանագրային պայմաններ, ըստ որոնց առաջանում են դրամական հոսքերի որոշակի ժամկետներ, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա վրա կուտակված տոկոսի մարում՝ որպես կանոն չափվում են իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Բոլոր այլ պարտքային և կապիտալ ներդրումները չափվում են իրենց իրական արժեքով: Ավելին, ՖՀՄՍ 9-ի համաձայն, կազմակերպությունները կարող են անփոփոխ որոշում կայացնել հետագա փոփոխությունները ներկայացնելու սեփական կապիտալում (որը չի պահվում բիզնես միավորման մեջ առքուվաճառքի կամ պայմանագրային գումարում ձեռք բերողի կողմից ճանաչվելու նպատակով, որի նկատմամբ կիրառվում է ՖՀՄՍ 3-ը) ներդրման իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ընդ որում շահույթում կամ վնասում ճանաչելով միայն շահութաբաժինների տեսքով եկամուտը:
- **Արժեզրկում.** ինչ վերաբերում է ֆինանսական ակտիվների արժեզրկմանը, ՖՀՄՍ 9-ով պահանջվում է «Ակնկալվող վարկային վնասի» մոդելը ֆինանսական ակտիվների արժեզրկման չափման նպատակով՝ ի հակադրություն ՀՀՄՍ 39-ով նախատեսված հաշվեգրված վարկային վնասի մոդելի: Ակնկալվող վարկային վնասի մոդելով պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը հաշվառի ակնկալվող վարկային վնասները և այդ ակնկալվող վարկային վնասներում տեղի ունեցած փոփոխությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արտացոլելու համար վարկային ռիսկում սկզբնական ճանաչման պահից ի վեր տեղի ունեցած փոփոխությունները: Այլ կերպ ասած՝ վարկային պատահարի տեղի ունենալն այլևս անհրաժեշտ պայման չէ վարկային վնաս ճանաչելու տեսանկյունից:

Բանկը ՖՀՄՍ 9-ը կսկսի կիրառել վերջինիս ընդունման ամսաթվից սկսած՝ 2018 թվականի հունվարի 1-ից, կիրառելով այն հետադարձ կերպով և ճանաչելով սույն ստանդարտի սկզբնական կիրառման կուտակային ազդեցությունը՝ որպես 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ չբաշխված շահույթների բացման հաշվեկշռի ճշգրտում: Մենք շարունակում ենք գնահատել այս ուղենիշի ազդեցությունը մեր ֆինանսական հաշվետվությունների վրա: Ակնկալում ենք, որ ՖՀՄՍ 9-ի ակնկալվող վարկային կորուստների մոդելի կիրառումը կհանգեցնի համապատասխան պարտավորությունների գծով կրեդիտային կորուստների ավելի վաղ ճանաչման և կբարձրացնի այդ ապրանքների համար ճանաչված կորուստների գծով պահուստների գումարը:

ՖՀՄՍ 15 Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ

2014 թ. մայիսին հրապարակվեց ՖՀՄՍ 15-ը, որը միասնական համընդհանուր մոդել է սահմանում կազմակերպությունների կողմից հաճախորդների հետ պայմանագրերից գոյացած հասույթի հաշվառման համար: ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ մտնելուց հետո կփոխարինի ներկայումս գործող հասույթի ճանաչման ուղեցույցը, այդ թվում՝ ՀՀՄՍ 18 Հասույթ, ՀՀՄՍ 11 Կառուցման պայմանագրեր և դրանց հարակից մեկնաբանությունները:

ՖՀՄՍ 15-ի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ կազմակերպությունը պետք է ճանաչի հասույթը՝ խոստացված ապրանքների կամ ծառայությունների՝ հաճախորդին փոխանցման փաստը ներկայացնելով այն գումարով, որն կազմակերպությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների դիմաց: Մասնավորապես, ստանդարտը ներկայացնում է որոշակի հիմունքներով մշակված հինգ քայլից բաղկացած մոդել, որը կիրառելի է հաճախորդների հետ ունեցած բոլոր պայմանագրերի գծով:

Մոդելում ներկայացված են հետևյալ հինգ քայլերը՝

- հաճախորդի հետ ունեցած պայմանագրի սահմանում,
- պայմանագրի կատարման պարտավորությունների սահմանում,
- գործարքի գնի որոշում,
- գործարքի գնի բաշխում պայմանագրի կատարման պարտավորությունների նկատմամբ,
- հասույթի ճանաչում այն ժամանակ (կամ այն բանից հետո), երբ կազմակերպությունը բավարարում է պայմանագրի կատարման պարտավորությունը:

Ըստ ՖՀՄՍ 15-ի, կազմակերպությունը ճանաչում է հասույթը այն ժամանակ, կամ այն բանից հետո, երբ պայմանագրի կատարման պարտավորությունը բավարարված է, այսինքն՝ երբ տվյալ կատարման պարտավորությանն առնչվող ապրանքների կամ ծառայությունների վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին: ՖՀՄՍ 15-ում ավելի նկարագրական ուղեցույց է ավելացվել նաև այնպիսի թեմաների մասով, ինչպիսիք են՝ հասույթի ճանաչման պահը, փոփոխական հատուցման հաշվառումը, պայմանագրի կատարման և ձեռքբերման հետ կապված ծախսերը և մի շարք այլ հարակից հարցեր: ՖՀՄՍ 15-ով պահանջվում են նաև հասույթի գծով ավելի ընդլայնված բացահայտումներ:

Բանկի ղեկավարությունը գնահատել է հիմնական եկամտային հոսքերը և սահմանել, որ կատարողականի մասով պարտավորությունները կկատարվեն ժամանակի ընթացքում և եկամտի ճանաչման ներկա մեթոդը կշարունակի բավարարել ՖՀՄՍ 15-ի պահանջները:

ՖՀՄՍ 16 Վարձակալություն

ՖՀՄՍ 16-ում ներկայացվում է վարձակալական ձեռնարկումների և հաշվապահական մոտեցումների սահմանման համապարփակ մոդել՝ նախատեսված վարձակալի և վարձատուի համար: ՖՀՄՍ 16-ն ուժի մեջ մտնելուց հետո կփոխարինի վարձակալության վերաբերյալ գործող ուղեցույցը, ներառյալ ՀՀՄՍ 17-ի Վարձակալություն և առնչվող մեկնաբանությունները:

ՖՀՄՍ 16-ում վարձակալությունը և ծառայության մատուցման պայմանագրերը տարբերակվում են՝ ելնելով այն բանի, թե արդյոք սահմանված ակտիվը վերահսկվում է հաճախորդի կողմից: Գործառնական վարձակալության (արտահաշվեկշռային) և ֆինանսական վարձակալության (հաշվեկշռային) տարբերությունները վերացվում են վարձակալի հաշվապահական հաշվառման նպատակով, և այն փոխարինվում է այնպիսի մոդելով, որտեղ օգտագործման իրավունքով ակտիվը և համապատասխան պարտավորությունը պետք է ճանաչվեն վարձակալների կողմից՝ բոլոր վարձակալությունների համար, բացառության կարճաժամկետ վարձակալությունը և ցածրարժեք ակտիվների վարձակալությունը:

Օգտագործման իրավունքով ակտիվը սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով՝ հանած կուտակային մաշվածությունը և արժեզրկման կորուստները, որոնք ճշգրտվում են վարձակալության պարտավորությունների ցանկացած վերագնահատման համար: Վարձակալության պարտավորությունը սկզբնապես չափվում է այդ ամսաթվին չվճարված վարձակալական վճարների ներկա արժեքով: Ըստ այդմ, վարձակալության պարտավորությունը ճշգրտվում է ըստ տոկոսային և վարձակալական վճարների, ինչպես նաև վարձակալության փոփոխությունների ազդեցության, ի թիվս մնացածի: Ավելին, դրամական հոսքերի դասակարգման վրա նույնպես ազդեցություն կլինի, քանի որ գործառնական վարձակալության վճարներն ըստ ՀՀՄՍ 17 ստանդարտի, ներկայացվում են որպես գործառնական դրամական հոսքեր, մինչդեռ, ըստ ՖՀՄՍ 16-ի մոդելի, վարձակալական վճարները կառանձնացվեն մայր գումարի և տոկոսային բաժնի, որը կներկայացվի համապատասխանաբար որպես ֆինանսավորման և գործառնական դրամական հոսքեր:

Ի հակադրություն վարձակալության հաշվապահական հաշվառման, ՖՀՄՍ 16-ը զգալի կերպով խթանում է ՀՀՄՍ 17 ստանդարտի՝ վարձակալի հաշվապահական հաշվառման պահանջները և շարունակում վարձատուից պահանջել վարձակալությունը դասակարգել որպես ֆինանսական կամ գործառնական վարձակալություն: Ավելին, ՖՀՄՍ 16 ստանդարտով պահանջվում են մեծածավալ բացահայտումներ:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի 109,280 հազար ԱՄՆ դոլար գումարի չափով չդադարեցվող գործառնական վարձակալությամբ պարտավորությունները: Այս վարձակալությունների հետագա վճարումների համար ՀՀՄՍ 17-ով որևէ օգտագործման իրավունքով ակտիվի կամ պարտավորության ճանաչում չի պահանջվում: Ծանոթագրություն 22-ում որոշ տեղեկություններ բացահայտված են որպես գործառնական վարձակալության պարտավորություն: Նախնական գնահատմամբ, դրանք համապատասխանում են ՖՀՄՍ 16-ի «վարձակալության» սահմանմանը, ուստի Բանկն օգտագործման իրավունքով ակտիվը և համապատասխան պարտավորությունը կճանաչի բոլոր վարձակալությունների համար, եթե դրանք իրենցից կարճաժամկետ վարձակալություն կամ ցածրարժեք ակտիվների վարձակալություն չեն ներկայացնում՝ ըստ ՖՀՄՍ 16-ի:

Օգտագործման իրավունքով ակտիվի և վարձակալության համապատասխան պարտավորությունը ֆինանսական հաշվետվություններում ճանաչելու նոր պահանջը նշանակալի ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա և ղեկավարությունը ներկայում գնահատում է այդ ազդեցությունը: Սակայն նպատակահարմար չէ դրա ֆինանսական ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում կատարել, քանի դեռ Բանկի ղեկավարությունը դրա ֆինանսական ազդեցության ուսումնասիրությունը չի ավարտել:

ՖՀՄՄԿ 22. Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ

ՖՀՄՄԿ 22-ը սահմանում է, թե ինչպես պետք է որոշել «գործարքի ամսաթիվը»՝ փոխարժեքը որոշելու նպատակով, որը կօգտագործվի ակտիվի, ծախսի կամ եկամտի սկզբնական ճանաչման ժամանակ, երբ այդ միավորի համար վճարումը նախապես վճարվել է կամ ստացվել է արտարժույթով և հանգեցրել ոչ դրամային ակտիվի կամ պարտավորության ճանաչմանը (օրինակ, չփոխհատուցված ավանդ կամ հետաձգված եկամուտ):

Մեկնաբանությամբ պարզաբանվում է, որ գործարքի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ անձը կատարում է կանխավճարի ստացման կամ վճարման արդյունքում առաջացած ոչ դրամային ակտիվի կամ ոչ դրամային պարտավորության սկզբնական ճանաչումը: Եթե կանխավճարները կատարվել են կամ ստացվել են բազմակի անգամ, մեկնաբանությամբ պահանջվում է սահմանել յուրաքանչյուր կանխավճարի ստացման կամ վճարման ամսաթիվը:

Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է Ստանդարտի վաղաժամկետ կիրառումը: Կազմակերպությունները կարող են կիրառել մեկնաբանությունը հետադարձ կամ հեռանկարային հիմունքներով: Հատուկ անցումային դրույթները կիրառվում են հեռանկարային կիրառման դեպքում: Բանկի ղեկավարությունը չի նախատեսում, որ այս ՖՀՄՄԿ-ի կիրառումը զգալի ազդեցություն կունենա Բանկի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ-ների 2015-2017 թթ. տարեկան բարելավումների ցիկլ

ՖՀՄՍ-ների 2015-2017 թթ. տարեկան բարելավումների ցիկլով փոփոխություններ են կատարվում մի քանի ստանդարտների մեջ:

ՖՀՄՍ ստանդարտ 3-ում նշվում է, որ երբ կազմակերպությունը ձեռք է բերում իրենից համատեղ գործունեություն ներկայացնող բիզնեսի նկատմամբ վերահսկողությունը, նա վերագնահատում է այդ բիզնեսում նախկինում վաճառքի համար պահվող տոկոսները: ՖՀՄՍ 11-ում կատարված փոփոխությամբ հստակեցվում է, որ երբ կազմակերպությունը ձեռք է բերում իրենից համատեղ գործունեություն ներկայացնող բիզնեսի նկատմամբ վերահսկողությունը, նա չի վերագնահատում այդ բիզնեսում նախկինում վաճառքի համար պահվող տոկոսները:

ՀՀՄՍ 12-ի փոփոխություններով հստակեցվում է, որ շահաբաժինների վրա շահութահարկի ազդեցությունը (այսինքն՝ շահույթի տեղաբաշխում) պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում, անկախ հարկի առաջացման եղանակից:

ՀՀՄՍ 23-ի փոփոխություններով հստակեցվում է, որ եթե փոխառությունը մնում է չմարված մինչև համապատասխան ակտիվի նպատակային օգտագործումը կամ վաճառքը, ապա այդ պարտավորությունը դառնում է կազմակերպության փոխառությամբ վերցրած միջոցների մասը, երբ հաշվարկվում է ընդհանուր փոխառությունների կապիտալացման տոկոսադրույքը:

Բոլոր փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Բանկի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը նշանակալի ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

5. Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստները

	2017 թ.	2016 թ.
Տոկոսային եկամուտ.		
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ՝		
- Հաճախորդներին տրված վարկեր	11,310,262	9,408,361
- Հակադարձ հետգնման պայմանագրեր	307,528	337,872
- Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	354,394	139,121
- Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ	8,593	-
- Այլ տոկոսային եկամուտ	31,608	11,469
Ընդամենը տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	**12,012,385**	**9,896,823**
Իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	2,109,590	1,463,126
Ընդամենը տոկոսային եկամուտ՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով	**2,109,590**	**1,463,126**
Ընդամենը տոկոսային եկամուտ	**14,121,975**	**11,359,949**
Տոկոսային ծախս.		
Տոկոսային ծախս ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով՝		
- Ընթացիկ հաշիվներ և ավանդներ հաճախորդներից	3,252,389	2,946,861
- Ավանդներ և մնացորդներ բանկերում	2,095,587	1,228,814
- Հետգնման պայմանագրեր	853,694	658,428
- Ստորադաս փոխառություն	734,976	612,305
- Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից	286,481	237,627
- Վարկեր միջազգային ֆինանսական հաստատություններից	17,219	156,891
- Թողարկված պարտատոմսեր	15,962	-
- Այլ տոկոսային ծախս	25,329	15,153
Ընդամենը տոկոսային ծախս	**7,281,637**	**5,856,079**
Զուտ տոկոսային եկամուտ՝ նախքան տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստները	**6,840,338**	**5,503,870**

6. Կոմիսիոն եկամուտներ և ծախսեր

	2017 թ.	2016 թ.
Հաշվարկային փոխանցումների վճար	1,612,892	1,181,605
Ինկասացիոն գործառնություններ	210,939	152,409
Վճարային քարտերով գործառնություններ	115,224	106,232
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	98,957	31,890
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններ	2,656	6,839
Այլ կոմիսիոն եկամուտներ	-	1,010
Ընդամենը կոմիսիոն եկամուտներ	**2,040,668**	**1,479,985**
Վճարային քարտերով գործառնություններ	157,504	138,988
Հաշվարկային փոխանցումների վճար	141,362	163,333
Արտարժույթով և արժեթղթերով գործարքներ և գործառնություններ	40,450	39,666
Թղթակցային հաշիվների սպասարկման վճար	5,373	5,024
Այլ կոմիսիոն ծախսեր	47,297	18,678
Ընդամենը կոմիսիոն ծախսեր	**391,986**	**365,689**

7. Զուտ արտարժութային եկամուտ

	2017 թ.	2016 թ.
Արտարժույթի փոխարկումից օգուտ	276,643	659,504
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ օգուտ/(վնաս)	769,643	(57,559)
Ընդամենը զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից	**1,046,286**	**601,945**

8. Այլ եկամուտ

	2017 թ.	2016 թ.
Ստացված տույժեր և տուգանքներ	365,300	404,075
Թանկարժեք մետաղների առքուվաճառքից օգուտ	17,711	33
Եկամուտ դրամաշնորհներից	240	507
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ	-	82,573
Այլ եկամուտ	94,817	53,325
Ընդամենը այլ եկամուտներ	**478,068**	**540,513**

9. Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ

	2017 թ.	2016 թ.
Հաճախորդներին տրված վարկեր (ծան. 15)	(155,678)	(569,311)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ (ծան. 14)	-	5,049
Ընդամենը տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից (կորուստներ)/ հակադարձումներ	**(155,678)**	**(564,262)**

10. Անձնակազմի գծով ծախսեր

	2017 թ.	2016 թ.
Աշխատավարձ և այլ վճարներ	3,815,344	3,511,314
Ընդամենը անձնակազմի գծով ծախս	**3,815,344**	**3,511,314**

11. Այլ ծախսեր

	2017 թ.	2016 թ.
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	700,914	499,397
Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսեր	585,536	420,831
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	584,034	414,859
Ինկասացիոն ծառայությունների գծով ծախսեր	345,000	300,537
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	264,505	231,657
Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	172,232	104,876
Անվտանգության գծով ծախսեր	138,742	88,285
Ապահովագրության գծով ծախսեր	112,136	97,125
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	98,972	116,468
Պլաստիկ քարտերի գծով կատարված ծախսեր	82,936	62,138
Խորհրդատվական և մասնագիտական ծառայությունների ծախսեր	79,246	-
Գրասենյակային ծախսեր	77,498	72,200
Գործուղման ծախսեր	77,241	47,949
Հիմնական միջոցների օտարումից վնասներ	17,969	-
Այլ գործառնական ծախսեր	356,821	294,240
Ընդամենը այլ ծախսեր	**3,693,782**	**2,750,562**

12. Շահութահարկի գծով ծախսեր

	2017 թ.	2016 թ.
Ընթացիկ տարվա հարկի գծով ծախս	483,684	219,370
Նախորդ տարիների հարկի գծով ծախս	-	-
Հետաձգված հարկի գծով (օգուտ)/ծախս	1,575	(33,828)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**485,259**	**185,541**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016 թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունները մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջ են բերում ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 20% հիմնական դրույքաչափը:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը:

	2017 թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)	2016 թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	**2,035,656**		**775,912**	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	407,131	20	155,182	20
Չհարկվող եկամուտ վաճառքի համար մատչելի ակտիվների գործարքներից	(69,209)	(3)	(66,177)	(9)
Չնվազեցվող ծախսեր	362,724	-	216,925	27
Արտարժույթի փոխարկումից (օգուտ)/վնաս	(209,257)	10	(120,389)	(16)
Այլ չհարկվող եկամուտ և արտոնություններ	-	-	-	-
Ընթացիկ տարում ճանաչված ճշգրտում նախորդ տարվա ընթացիկ հարկերի գծով	(6,100)	-	-	-
Շահութահարկի գծով ծախս	**485,259**	**23**	**185,541**	**23**

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	104,967	22,909	-	127,876
Հաճախորդներին տրված վարկեր	77,825	25,678	-	103,503
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	**182,792**	**48,587**	**-**	**231,379**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(340,918)	-	(69,209)	(410,127)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(16,976)	-	-	(16,976)
Պայմանական պարտավորություններ	(13,805)	2,818	-	(10,987)
Հիմնական միջոցներ	(836,315)	(52,980)	-	(889,295)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	**(1,208,014)**	**(50,162)**	**(69,209)**	**(1,327,385)**
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	**(1,025,222)**	**(1,575)**	**(69,209)**	**(1,096,006)**

	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	106,406	(1,439)	-	104,967
Հաճախորդներին տրված վարկեր	31,958	45,867	-	77,825
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	**138,364**	**44,428**	**-**	**182,792**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(3,856)	-	(337,062)	(340,918)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(14,476)	(2,500)	-	(16,976)
Պայմանական պարտավորություններ	(11,005)	(2,800)	-	(13,805)
Հիմնական միջոցներ	(3,583)	(5300)	(827,432)	(836,315)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	**(32,920)**	**(10,600)**	**(1,164,494)**	**(1,208,014)**
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	**105,444**	**33,828**	**(1,164,494)**	**(1,025,222)**

13. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Թղթակցային հաշիվներ բանկերում	1,369,519	13,197,181
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	25,017,857	10,044,520
Կանխիկ դրամական միջոցներ	9,437,455	8,818,128
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**35,824,831**	**32,059,829**

2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր նվազագույն պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրավված դրամային և արտարժույթով որոշ միջոցների համար Կենտրոնական բանկի կողմից սահմանած կարգի համաձայն: Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը կարող է հանգեցնել ՀՀ կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: ՀՀ ԿԲ-ում ունեցած դրամական միջոցների, այլ դրամական տեղաբաշխումների, թղթակից հաշիվների ավանդների և պարտադիր պահուստների համար Բանկը տոկոսներ չի ստանում:

Դրամական միջոցներից և դրանց համարժեքներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

14. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր և ավանդներ	10,210,590	10,807,394
Վարկային քարտերով վճարումների ավանդ ՀՀ ԿԲ-ում	1,520,000	1,520,000
Բաժնետիրական կապիտալի համալրման նպատակով ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներ, ծան. 30	557,158	-
Վճարային համակարգերով ստացվելիք գումարներ	124,640	503,187
Այլ կազմակերպություններում դեպոնացված գումարներ	64,060	183,901
Բանկերում դեպոնացված գումարներ	-	82,402
Ֆինանսական կազմակերպություններից ստացման ենթակա այլ գումարներ	559,920	255,023
	13,036,368	**8,253,897**
Նվազեցում՝ արժեզրկման պահուստների գծով	-	-
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**13,036,368**	**8,253,897**

2017 և 2016 թթ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ «պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ» տողում ներառված են Բանկի կողմից տրամադրված երաշխիքային գումարները՝ 53,869 հազար ՀՀ դրամ գումարով VISA վճարահաշվարկային համակարգով, 70,772 հազար ՀՀ դրամ Armenian Card վճարահաշվարկային համակարգով գործառնություններ իրականացնելու նպատակով (2016 թ.՝ համապատասխանաբար 53,726 հազար ՀՀ դրամ գումարով և 75,454 հազար ՀՀ դրամ գումարով):

Ավանդային հաշիվները ՀՀ ԿԲ-ում իրենցից ներկայացնում են Արքա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ: ՀՀ դրամով տրված վարկերի միջին տոկոսադրույքը կազմում է 14,65%, ԱՄՆ դոլարով՝ 6.24%, (2016 թ.՝ ՀՀ դրամով՝ 14.8 %, ԱՄՆ դոլարով՝ 6.4%):

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով արժեզրկման կորուստների հատկացումների շարժը հետևյալն է.

	Ընդամենը
2017 թ. հունվարի 1-ի դրությամբ	**-**
Տարվա հակադարձում	-
2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

15. Հաճախորդներին տրված վարկեր

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր	97,252,824	64,138,385
Օվերդրաֆտ	8,568,854	12,455,757
	105,821,678	**76,594,142**
Նվազեցում՝ վարկերի արժեզրկման պահուստների գծով	(1,605,120)	(1,546,483)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	**104,216,558**	**75,047,659**

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 19.6% ՀՀ դրամով վարկերի համար (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 20.58%) և ԱՄՆ դոլարով, եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով վարկերի համար՝ 11.8% (2016 թ.՝ 12.8%):

2017 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կենտրոնացում երրորդ անձանց տրամադրված վարկերի գծով 22,100,509 հազար ՀՀ դրամ (համախառն վարկային պորտֆելի 26.80%) ընդհանուր գումարով, (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14,986,273 հազար ՀՀ դրամ կամ համախառն վարկային պորտֆելի 24.90%): Այդ վարկերի համար ձևավորվել է 198,500 հազար ՀՀ դրամի չափով պահուստ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 149,863 հազար ՀՀ դրամ):

Վարկերն ըստ ոլորտների ներկայացված են ստորև.

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սպառողական	39,931,510	23,870,621
Առևտուր	31,065,800	9,622,131
Արտադրություն	14,183,657	11,343,639
Շինարարություն	6,149,163	4,161,999
Հիփոթեքային	5,841,516	4,866,215
Գյուղատնտեսություն	947,885	1,381,248
Այլ ճյուղեր	7,702,147	21,348,289
	105,821,678	**76,594,142**
Նվազեցում՝ արժեզրկման պահուստների գծով	(1,605,120)	(1,546,483)
Ընդամենը վարկեր	**104,216,558**	**75,047,659**

Վարկերն ըստ աշխարհագրական համակենտրոնացման ներկայացված է ծան. 35-ում: Վճարման ենթակա վարկերի որակական վերլուծությունը ներկայացված է ստորև.

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Համախառն վարկեր	Արժեզրկման գծով պահուստ	Զուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
Սպառողական				
Ոչ ժամկետանց	39,566,982	482,999	39,083,983	1.2%
Ժամկետանց՝			-	
- 1-ից 30 օր	96,550	10,186	86,364	10.5%
- 31-ից 60 օր	63,057	6,306	56,751	10.0%
- 61-ից 90 օր	64,732	7,800	56,932	12.0%
- 91-ից 180 օր	85,621	21,764	63,857	25.4%
- 180 օրից ավել	54,568	28,608	25,960	52.4%
Ընդամենը	**39,931,510**	**557,663**	**39,373,847**	**1.4%**
Առևտուր				
Ոչ ժամկետանց	30,192,722	356,392	29,836,330	1.2%
Ժամկետանց՝			-	
- 1-ից 30 օր	13,293	1,363	11,930	10.3%
- 31-ից 60 օր	-	-	-	0.0%
- 61-ից 90 օր	-	-	-	0.0%
- 91-ից 180 օր	520	125	395	24.0%
- 180 օրից ավել	859,265	256,762	602,503	29.9%
Ընդամենը	**31,065,800**	**614,642**	**30,451,158**	**2.0%**
Արտադրություն				
Ոչ ժամկետանց	14,183,657	141,837	14,041,820	1.0%
Ժամկետանց՝			-	
- 1-ից 30 օր	-	-	-	0.0%
- 31-ից 60 օր	-	-	-	0.0%
- 61-ից 90 օր	-	-	-	0.0%
- 91-ից 180 օր	-	-	-	0.0%
- 180 օրից ավել	-	-	-	0.0%
Ընդամենը	**14,183,657**	**141,837**	**14,041,820**	**1.0%**
Շինարարություն				
Ոչ ժամկետանց	6,149,163	61,492	6,087,671	1.0%
Ժամկետանց՝				-
- 1-ից 30 օր	-		-	0.0%
- 31-ից 60 օր	-	-	-	0.0%
- 61-ից 90 օր	-	-	-	0.0%
- 91-ից 180 օր	-	-	-	0.0%
- 180 օրից ավել	-	-	-	0.0%
Ընդամենը	**6,149,163**	**61,492**	**6,087,671**	**1.0%**

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Հիփոթեքային				
Ոչ ժամկետանց	5,743,500	65,914	5,677,586	1.1%
Ժամկետանց՝				
- 1-ից 30 օր	3,108	373	2,735	12.0%
- 31-ից 60 օր	17,044	2,045	14,999	12.0%
- 61-ից 90 օր	-	-	-	0.0%
- 91-ից 180 օր	34,054	7,826	26,228	23.0%
- 180 օրից ավել	43,810	26,286	17,524	60.0%
Ընդամենը	**5,841,516**	**102,444**	**5,739,072**	**1.8%**
Գյուղատնտեսություն				-
Ոչ ժամկետանց	947,681	18,670	929,011	2.0%
Ժամկետանց՝				
- 1-ից 30 օր	-	-	-	0.0%
- 31-ից 60 օր	-	-	-	0.0%
- 61-ից 90 օր	204	24	180	11.8%
- 91-ից 180 օր	-	-	-	0.0%
Ընդամենը	**947,885**	**18,694**	**929,191**	**2.0%**
Այլ ոլորտներ				
Ոչ ժամկետանց	7,646,388	97,366	7,549,022	2.8%
Ժամկետանց՝				0.0%
- 1-ից 30 օր	18,586	1,875	16,711	10.1%
- 31-ից 60 օր	2,920	292	2,628	10.0%
- 61-ից 90 օր	8,410	997	7,413	11.9%
- 91-ից 180 օր	16,873	3,374	13,499	20.0%
- 180 օրից ավել	8,970	4,444	4,526	49.5%
Ընդամենը	**7,702,147**	**108,348**	**7,593,799**	**1.4%**
ԸՆԴԱՄԵՆԸ	**105,821,678**	**1,605,120**	**104,216,558**	**1.5%**

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Համախառն վարկեր	**Արժեզրկման գծով պահուստ**	**Զուտ վարկեր**	**Համախառն վարկերի արժեզրկման պահուստ**
Սպառողական				
Ոչ ժամկետանց	23,053,833	325,568	22,728,265	1.4%
Ժամկետանց՝				
- 1-ից 30 օր	129,580	13,406	116,174	10.3%
- 31-ից 60 օր	157,642	17,365	140,277	11.0%
- 61-ից 90 օր	109,617	11,994	97,623	10.9%
- 91-ից 180 օր	294,984	63,569	231,415	21.5%
- 180 օրից ավել	124,965	63,267	61,698	50.6%
Ընդամենը	**23,870,621**	**495,169**	**23,375,43**	**22.1%**
Առևտուր				
Ոչ ժամկետանց	10,504,517	135,022	10,369,495	1.3%
Ժամկետանց՝				
- 1-ից 30 օր	18,619	2,038	16,581	10.9%
- 31-ից 60 օր	134,692	31,637	103,055	23.5%
- 61-ից 90 օր	19,639	3,687	15,952	18.8%
- 91-ից 180 օր	77,498	17,734	59,764	22.9%
- 180 օրից ավել	588,674	211,709	376,965	36.0%
Ընդամենը	**11,343,639**	**401,827**	**10,941,812**	**2.9%**
Արտադրություն				
Ոչ ժամկետանց	9,606,897	96,069	9,510,828	1.0%
Ժամկետանց՝				
- 1-ից 30 օր	4,287	514	3,773	12.0%
- 31-ից 60 օր	10,947	1,314	9,633	12.0%
- 61-ից 90 օր	-	-	-	0.0%
- 91-ից 180 օր	-	-	-	0.0%
- 180 օրից ավել	-	-	-	0.0%
Ընդամենը	**9,622,131**	**97,897**	**9,524,234**	**1.0%**
Շինարարություն				
Ոչ ժամկետանց				
Ժամկետանց՝	4,866,215	48,662	4,817,553	1.0%
- 1-ից 30 օր				
- 31-ից 60 օր	-	-	-	0.0%
- 61-ից 90 օր	-	-	-	0.0%
- 91-ից 180 օր	-	-	-	0.0%
- 180 օրից ավել	-	-	-	0.0%
Ընդամենը	**4,866,215**	**48,662**	**4,817,553**	**1.0%**
Հիփոթեքային				
Ոչ ժամկետանց	4,102,821	49,611	4,053,210	1.2%
Ժամկետանց՝				
- 1-ից 30 օր	14,447	1,445	13,002	10.0%
- 31-ից 60 օր	10,096	1,192	8,905	11.8%
- 61-ից 90 օր	5,175	517	4,658	10.0%
- 91-ից 180 օր	8,980	2,038	6,942	22.7%
- 180 օրից ավել	20,480	12,288	8,192	60.0%
Ընդամենը	**4,161,999**	**67,091**	**4,094,909**	**1.6%**
Գյուղատնտեսություն	1,381,248	27,396	1,353,853	2.0%
Ոչ ժամկետանց				0.0%
Ժամկետանց՝	-	-	-	0.0%
- 1-ից 30 օր	-	-	-	0.0%
- 31-ից 60 օր	-	-	-	0.0%
- 61-ից 90 օր	-	-	-	0.0%
- 91-ից 180 օր	-	-	-	0.0%
Ընդամենը	**1,381,248**	**27,396**	**1,353,853**	**2.0%**
Այլ ոլորտներ				
Ոչ ժամկետանց	21,185,869	357,729	20,828,140	1.7%
Ժամկետանց՝				
- 1-ից 30 օր	27,719	2,884	24,835	10.4%
- 31-ից 60 օր	38,751	4,162	34,589	10.7%
- 61-ից 90 օր	8,986	1,154	7,832	12.8%
- 91-ից 180 օր	24,780	5,202	19,578	21.0%
- 180 օրից ավել	62,184	37,311	24,873	60.0%
Ընդամենը	**21,348,289**	**408,442**	**20,939,847**	**1.9%**
ԸՆԴԱՄԵՆԸ	**76,594,142**	**1,546,483**	**75,047,659**	**2.01%**

Ստորև ներկայացված է 2017 և 2016 թթ. վարկերի արժեզրկման փոփոխությունների վերլուծությունը:

	Սպառողական	Առևտուր	Արտադրություն	Շինարարություն	Հիփոթեքային	Գյուղատնտեսություն	Այլ	Ընդամենը
2017 թ. հունվարի 1-ի դրությամբ	**495,168**	**401,827**	**97,897**	**48,662**	**67,091**	**27,396**	**408,442**	**1,546,483**
Տարվա ծախս	79,800	33,709	3,800	8,500	4,900	8,900	16,069	155,678
Դուրսգրված գումարներ	(293,898)	(234,399)	(23,090)	(2,388)	(1,413)	(38,900)	(360,801)	(954,889)
Վերականգնումներ	276,593	413,505	63,230	6,718	31,866	21,298	44,638	857,848
2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**557,663**	**614,642**	**141,837**	**61,492**	**102,444**	**18,694**	**108,348**	**1,605,120**
Անհատական արժեզրկում	19,987	374,737	-	-	4,976	-	-	399,700
Խմբային արժեզրկում	537,676	239,905	141,837	61,492	97,468	18,694	108,348	1,205,420
Անհատապես արժեզրկված վարկերը մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուսին մասնահանումները	**91,187**	**547,312**	**-**	**-**	**8,621**	**-**	**-**	**647,120**
Արժեզրկման պահուստին մասնահանումներ	**(19,987)**	**(374,737)**	**-**	**-**	**(4,976)**	**-**	**-**	**(399,700)**
Անհատապես արժեզրկված վարկերը անհատապես գնահատված արժեզրկման պահուսին մասնահանումներից հետո	**71,200**	**172,575**	**-**	**-**	**3,645**	**-**	**-**	**247,420**

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	Սպառողական	Առևտուր	Արտադրություն	Շինարարություն	Հիփոթեքային	Գյուղատնտեսություն	Այլ	Ընդամենը
2016 թ. հունվարի 1-ի դրությամբ	**333,412**	**265,398**	**96,984**	**42,690**	**46,202**	**45,579**	**172,126**	**1,002,391**
Տարվա ծախս	158,500	331,809	29,894	13,500	5,780	13,500	16,928	569,311
Դուրսգրված գումարներ	(259,908)	(196,500)	(29,800)	(7,860)	-	(31,683)	(18,590)	**(544,341)**
Վերականգնումներ	263,164	1,120	819	332	15,709	-	237,978	**519,122**
2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**495,168**	**401,827**	**97,897**	**48,662**	**67,091**	**27,396**	**408,442**	**1,546,483**
Անհատական արժեզրկում	14,565	342,000	-	-	7,550	-	-	**364,115**
Խմբային արժեզրկում	480,603	59,827	97,897	48,662	59,541	27,396	408,442	**1,182,368**
Անհատապես արժեզրկված վարկերը մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստին մասնահանումները	**94,615**	**680,500**	**-**	**-**	**10,680**	**-**	**-**	**787,795**
Արժեզրկման պահուստին մասնահանումներ	**(14,587)**	**(342,000)**	**-**	**-**	**(7,550)**	**-**	**-**	**(364,137)**
Անհատապես արժեզրկված վարկերը անհատապես գնահատված արժեզրկման պահուստին մասնահանումներից հետո	**80,028**	**338,500**			**3,130**			**421,658**

Սույն ֆինանսական հաշվետվությունների թողարկման ամսաթվի դրությամբ դատական գործընթացը դեռևս ընթացքում էր: Ղեկավարությունն ակնկալում է, որ հետագա հայցադիմումները ևս կմերժվեն և գրավը իրավական փաստաթղթերով կձևակերպվի որպես Բանկի սեփականություն: Վարկի գումարի չմարված մնացորդը 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում 613,800 հազար ՀՀ դրամ՝ նախքան արժեզրկման գծով պահուստին մասնահանումը՝ 204,087 հազար ՀՀ դրամ գումարով:

Գրավի առարկայի վերլուծությունը դիտարկվում է ծան. 35-ում: Առգրավված ակտիվները ներկայացված են ծան. 22-ում:

16. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային գործիքներ		
ՀՀ պետական արժեթղթեր	1,532,076	2,379,734
Ոչ պետական արժեթղթեր	414,930	416,305
	1,947,006	**2,796,039**
Կապիտալի գործիքներ		
ՀՀ-ում գործող ընկերությունների բաժնետոմսեր	89,085	83,216
ՀՀ-ից դուրս գործող ընկերությունների բաժնետոմսեր	-	-
	89,085	**83,216**
Ընդամենը Բանկի կողմից պահվող	2,036,091	**2,879,255**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր, ծան 19		
Պարտքային գործիքներ		
ՀՀ պետական արժեթղթեր	19,619,097	13,169,605
Ոչ պետական արժեթղթեր	-	-
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	**19,619,097**	**13,169,605**
Ընդամենը վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	**21,655,188**	**16,048,860**

Պետական պարտքային արժեթղթերն իրենցից ներկայացնում են Հայաստանի ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր տարեկան արժեկտրոնային ֆիքսված տոկոսադրույքով, որը տատանվում է 9%-ի և 14-ի միջակայքում (2016 թ.՝ տարեկան 8 – 13%) և որն ուժի մեջ է 2018 – 2036 թթ. (2016 թ.՝ 2016 – 2036 թթ.): Այս գործիքների իրական արժեքը չափվում է օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի զեղչատոկոս: Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների բաժնետոմսերի գծով բաժնային գործիքներն իրենցից ներկայացնում են չգնանշված ընկերություններում բաժնային գործիքներ՝ հաշվառված ինքնարժեքով և ճշգրտված արժեզրկումից կորուստներով, քանի որ դրանց իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Այսպիսի ներդրումների համար շուկա չկա և Բանկը մտադիր է դրանք պահել երկարաժամկետ կտրվածքով: Տես՝ ծան. 19 հաշվետու ժամանակաշրջանում ճանաչված լրացուցիչ բաժնային գործիքների վերաբերյալ:

Վաճառքի համար մատչելի ակտիվներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

17. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Բանկն ունի գործարքներ հետգնման և հակադարձ հետգնման համաձայնագրերով: Ռեպո համաձայնագրերով փոխատվություն տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Բանկի կողմից ստացած կանխիկ դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Բանկի կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Բանկի սահմանմամբ այդ արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել: Այս գործարքներն իրականացվում են այն պայմաններով, որոնք ընդունված են ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառության ու վարկային գործունեության ժամանակ, ինչպես նաև այնպիսի փոխանակման գործարքներում, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես միջնորդ:

Հակադարձ հետգնման պայմանագրեր

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հակադարձ հետգնման պայմանագրեր ֆինանսական ոլորտում գործող կազմակերպությունների հետ 4,296,862 հազար ՀՀ դրամ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,552,427 հազար ՀՀ դրամ): 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս հակադարձ հետգնման պայմանագրերով որպես գրավ ստացված ակտիվների իրական արժեքը, որոնք իրենցից ներկայացնում են պետական պարտքային արժեթղթեր, կազմում էր 1,491,589 հազար ՀՀ դրամ (2016 թ՝ 4,649,693 հազար ՀՀ դրամ): Բանկը պարտավոր է վերադարձնել համարժեք գումարի արժեթղթեր: Միջին տոկոսադրույքը կազմում է 6.75 % (2016 թ.՝ 6.9%):

Հետգնման պայմանագրեր

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետգնման պայմանագրերով փոխանցված և գրավադրված՝ վաճառքի համար մատչելի սեփական ֆինանսական ակտիվների իրական արժեքը	19,619,097	13,169,605
Հակադարձ հետգնման պայմանագրերով որպես գրավ ստացված վերագրավադրված ակտիվների իրական արժեքը	1,491,589	4,649,693
Ընդամենը հետգնման պայմանագրերով փոխանցված և գրավադրված ֆինանսական ակտիվներ	**21,110,686**	**17,819,298**
Հարակից պարտավորությունների հաշվեկշռային արժեք	**20,511,989**	**13,224,755**

2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեքում ներառված հարակից պարտավորությունները հետգնման պայմանագրերի գծով իրենցից ներկայացնում են ՀՀ կենտրոնական բանկի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ ստորագրված հետգնման պայմանագրեր: Միջին տոկոսադրույքը կազմում է 6.24% (2016 թ.՝ 6.32%):

18. Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Փոխադ-րամիջոց	Համա-կարգչային սարք.	Կապիտալ ներդրումներ վարձակալ-ված հիմնական միջոցներում	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք կամ վերագնահատված գումար						
1 հունվարի 2016 թ.	**4,061,091**	**554,230**	**1,827,596**	**174,147**	**1,431,256**	**8,048,320**
Ձեռքբերում միացմամբ	438,624	42,887	115,208	8,577	319,398	924,694
Ավելացումներ	573,090	198,110	202,763	33,297	117,094	1,124,354
Փոխանցում	-	-	(904)	-	904	-
Վերագնահատում	4,137,161	-	-	-	-	4,137,161
Օտարումներ	(2,350,351)	(160,030)	(2,060)	-	(96,151)	(2,608,592)
31 դեկտեմբերի 2016 թ.	**6,859,615**	**635,197**	**2,142,603**	**216,021**	**1,772,501**	**11,625,937**
Ավելացումներ	650,220	178,689	384,310	65,520	254,588	1,533,327
Օտարումներ	-	(99,328)	(134,836)	(6,418)	(86,755)	(327,337)
Փոխանցում	14,339	-	4,721	(13,039)	(6,021)	-
31 դեկտեմբերի 2017 թ.	**7,524,174**	**714,558**	**2,396,798**	**262,084**	**1,934,313**	**12,831,927**
Կուտակված մաշվածություն						
1 հունվարի 2016 թ.	**1,400,250**	**183,151**	**1,358,654**	**57,353**	**915,126**	**3,914,534**
Ձեռքբերում միացմամբ	68,146	22,359	93,694	3,142	246,471	433,812
Մաշվածության ծախս	129,534	62,924	166,914	10,777	114,748	484,897
Օտարումներ	(1,479,913)	(91,257)	(2,048)	-	(71,150)	(1,644,368)
31 դեկտեմբերի 2016 թ.	**118,017**	**177,177**	**1,617,214**	**71,272**	**1,205,195**	**3,188,875**
Մաշվածության ծախս	172,568	74,881	176,559	8,286	143,340	575,634
Օտարումներ	-	(33,266	(121,348)	(6,099)	(76,566)	(237,279)
31 դեկտեմբերի 2017 թ.	**290,585**	**218,792**	**1,672,425**	**73,459**	**1,272,969**	**3,527,230**
Զուտ հաշվեկշռային արժեք						
31 դեկտեմբերի 2017 թ.	**7,233,589**	**495,766**	**724,373**	**188,625**	**662,344**	**9,304,697**
31 դեկտեմբերի 2016 թ.	**6,741,598**	**458,020**	**525,389**	**144,749**		**8,437,062**
1 հունվարի, 2016 թ.	**2,660,841**	**371,079**	**468,942**	**116,794**	**516,130**	**4,133,786**

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 1,655,628 հազար ՀՀ դրամ (2016 թ.՝ 1,180,752 հազար ՀՀ դրամ):

Բանկի շինությունները նշված են իրենց վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է իրական արժեքը՝ վերագնահատման ամսաթվի դրությամբ, հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Բանկի շինությունների իրական արժեքի գնահատումները սահմանվել են 2016 թվականի մարտի 31-ին, որը գրեթե համապատասխանում է հաշվետու շրջանի սկզբի իրական արժեքին: Գնահատումը կատարվել է Բանկի հետ առնչություն չունեցող անկախ գնահատողի կողմից: Շենք-շինությունների վերագնահատված արժեքը սահմանվել է համաձայն շուկայական և եկամտային մոտեցումների:

Շուկայական մոտեցումը հիմնվում է համեմատելի գույքի գնահատման օրվա դրությամբ հասանելի շուկայական գնի վրա: Կիրառվել են հետևյալ ճշգրտումները՝ արտացոլելու տվյալ գույքի և համեմատելի գույքի տարբերությունները. վաճառքի գին-հայտարարված գին հարաբերակցություն (-15%), տարածքի ճշգրտում (մինչև - 20%), ներքին հարդարման աստիճան և բանկի սարքավորումների ճշգրտում (5-10%):

Եկամտային մոտեցման դեպքում կիրառվել է ուղղակի կապիտալացման մեթոդը: Եկամտային մոտեցմամբ շինությունների արժեքի սահմանման համար կիրառվել են հետևյալ ենթադրությունները. բոլոր շինությունների զբաղվածությունն ընդունվել է 90 տոկոս, գործառնական ծախսերը՝ շինությունների արդյունավետ համախառն եկամտի 20 տոկոսը, իսկ կապիտալացման տոկոսադրույքը հաշվարկվել է 7.75%:

Շինությունների վերագնահատված արժեքին նպատակով իրական արժեքի որոշումն իրենից ներկայացնում է մակարդակ 3-ի գնահատումները:

19. Ոչ նյութական ակտիվներ

	Լիցենզիաներ	Համակարգ-չային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2016 թ. հունվարի 1-ի դրությամբ	**132,814**	**37,544**	**14,407**	**184,765**
Ձեռքբերում միացմամբ	14,406	85,822	16,468	**116,696**
Ավելացումներ	7,243	-	44,762	**52,005**
Օտարումներ	(300)	(1,261)	-	**(1,561)**
2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**154,163**	**122,105**	**75,637**	**351,905**
Ավելացումներ	100,707	28,050	-	**128,757**
Օտարումներ	-	-	-	**-**
2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**254,870**	**150,155**	**75,637**	**480,662**
Կուտակված ամորտիզացիա				
2016 թ. հունվարի 1-ի դրությամբ	**69,381**	**23,958**	**8,310**	**101,649**
Ամորտիզացիայի գծով ծախս	14,062	4,653	1,839	**20,554**
Օտարումներ	(300)	(1,261)	-	**(1,561)**
2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**83,143**	**27,350**	**10,149**	**120,642**
Ամորտիզացիայի գծով ծախս	26,648	9,234	3,020	**38,902**
2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	109,791	36,584	13,169	**159,544**
Զուտ հաշվեկշռային արժեք 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**145,079**	**113,571**	**62,468**	**321,118**
Զուտ հաշվեկշռային արժեք 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**71,020**	**94,755**	**65,488**	**231,263**
Զուտ հաշվեկշռային արժեք 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ	**63,433**	**13,586**	**6,097**	**83,116**

20. Այլ ակտիվներ

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատակիցներին տրված հատուցումներ	**57,782**	**37,609**
Ստացվելիք գումարներ	92,271	37,550
Այլ ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով մասհանումներ	(21,558)	(376)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**128,495**	**74,783**
Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտք	1,164,906	645,728
Առգրավված ակտիվներ	358,961	492,847
Նյութեր	292,446	178,469
Թանկարժեք մետաղներ	18,356	443
Այլ ակտիվներ	134,395	118,559
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**1,969,064**	**1,436,046**
Նվազեցված՝ արժեզրկման պահուստ	-	-
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	**1,969,064**	**1,436,046**
Ընդամենը այլ ակտիվներ	**2,097,559**	**1,510,859**

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

	Ընդամենը
2016 թ. հունվարի 1-ի դրությամբ	**3,367**
Տարվա հակադարձում	(3,550)
Վերականգնումներ	759
2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**376**
Տարվա ծախս	21,182
Վերականգնումներ	-
2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**21,558**

Կանխավճարները հիմնական շենքում լրացուցիչ հարկի շինարարության և վերանորոգման համար կատարված կանխավճարներն են:.

21. ՀՀ կենտրոնական բանկից և կառավարությունից ստացված վարկեր

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից	4,397,941	2,982,513
Վարկեր ՀՀ կառավարությունից	13,686	6,487
Ընդամենը վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և կառավարությունից	**4,411,627**	**2,989,000**

ՀՀ ԿԲ-ից և ՀՀ Կառավարությունից ստացված վարկերը ներկայացնում են վարկեր ստացված գերմանա-հայկական հիմնադրամի «Փոքր և միջին բիզնեսի վարկային ծրագրի» ֆինանսավորման շրջանակներում, «Վերականգնվող էներգետիկա» և «Բնակարանային ֆինանսավորում» ծրագրերի շրջանակներում ներգրավված միջոցները:

2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարությունից ստացված վարկերը ներառում են վարկեր ստացված գերմանա-հայկական հիմնադրամի «Փոքր և միջին բիզնեսի վարկավորման ծրագրի» ֆինանսավորման շրջանակներում ներգրավված միջոցները:

ՀՀ ԿԲ-ից և կառավարությունից ստացված վարկերի արժույթը ՀՀ դրամն է: Տարեկան ֆիքսված տոկոսադրույքը տատանվում է 5,5%-ից 9% միջակայքում, ժամկետայնությունը՝ 2018 հունվարից մինչև 2020 թ. դեկտեմբերը:

22. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր և ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	14,110,282	13,663,835
Ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	590,503	260,230
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	18,967	13,732
Այլ	102,986	68,265
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**14,822,737**	**14,006,062**

2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը և ավանդներն իրենցից ներկայացնում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից ստացված վարկեր և ավանդներ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորություններն արտահայտված են ՀՀ դրամով, եվրոյով և ԱՄՆ դոլարով, տարեկան ֆիքսված տոկոսադրույքը տատանվում է 0,5%-ից 12.8% միջակայքում, ժամկետայնությունը՝ 2018 թ. հունվարից մինչև 2026 թ. դեկտեմբերը (տես՝ ծան. 35-ը):

23. Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկերը և ավանդները ներառում են Միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (MSME Bonds S.A.-ի), INCOFIN CVBA-ի, ԲլյուՕրչարդ Մայքրոֆայնենս հիմնադրամ ՍՊԸ-ի (BlueOrchard Microfinance Fund LLC), Global Impact Investments Sarl-ի, Finethic S.C.A-ի, ԱՁԲ-ի, GLS այլընտրանքային ներդրումներ - Mikrofinanzfonds-ի (GLS Alternative Investments – Mikrofinanzfonds), Symbiotics գլոբալ ֆինանսական ներառումի (Symbiotics Global Financial Inclusion) և Symbiotics - SEB IV Մայքրոֆայնենս հիմնադրամի (Symbiotics - SEB IV Microfinance Fund) կողմից ստացված վարկերը:

2017 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկերի և ավանդների նկատմամբ միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը ՀՀ դրամով փոխառությունների գծով կազմում է 9,1% (2016 թ.՝ 8.2%), ԱՄՆ դոլարով, եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 6.7%՝ (2016 թ.՝ 6.50 %):

2017 թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար Բանկը չի ունեցել միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների մայր գումարի կամ տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016 թ.՝ նույնը):

Ընդհանուր առմամբ, 2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի և ֆինանսական որոշակի սահմանված պայմաններ ունեցող վարկերը, ներառյալ հաշվեգրված տոկոսները, ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	Արժույթ	Ժամկետ	Անվանա-կան դրույք %	2017 թ. դեկտեմ-բերի 31	Անվանա-կան դրույք %	2016 թ. դեկտեմբերի 31
MSME BSA	ԱՄՆ դոլար	1-3 տարի	6.2%	4,840,471	6.2%	4,799,148
INCOFIN CVBA	ԱՄՆ դոլար	1-2 տարի	6.5%	1,490,474	6.5%	2,881,211
ԲյուՕրչարդ Մայքրոֆայնենս հիմնադրամ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	1-3 տարի	"Libor 6m+4.8%"	1,621,477	Libor 6m+4.8%	2,397,415
GII	ԱՄՆ դոլար	1-3 տարի	4.5%	2,424,534	4.5%	2,395,841
ԲյուՕրչարդ Մայքրոֆայնենս հիմնադրամ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	1 տարի	-	-	Libor 6m+5.5%	719,689
FNSCA	ԱՄՆ դոլար	1-3 տարի	4.5%	481,739	4.5%	479,158
ՎՀԵԲ	ՀՀ դրամ	1 տարի	-	-	8.20%	336,877
Ասիական զարգացման բանկ	ԱՄՆ դոլար	1 տարի	-	-	Libor 6m+6%	78,552
GII	ԱՄՆ դոլար	1-4 տարի	5.0%	1,446,438	-	-
Ասիական զարգացման բանկ	ԱՄՆ դոլար	1 տարի	Libor6 +2.55%	67,974	-	-
Ասիական զարգացման բանկ	ԱՄՆ դոլար	1 տարուց պակաս	Libor6 +2.55%	24,298	-	-
GLS այլընտրանքային ներդրումներ - Mikrofinanzfonds	ԱՄՆ դոլար	1-3 տարի	6.0%	489,474	-	-
Symbiotics գլոբալ ֆինանսական ներառում	ՀՀ դրամ	1-4 տարի	10.5%	505,999	-	-
Symbiotics SEB IV Մայքրոֆայնենս հիմնադրամ	ՀՀ դրամ	1-4 տարի	10.5%	2,023,997	-	-
INCOFIN CVBA	ԱՄՆ դոլար	1-4 տարի	5.0%	4,879,879	-	-
Ընդամենը				**20,296,754**		**14,087,891**

Բանկը պարտավոր է համապատասխանություն ապահովել վերոնշյալ փոխառու միջոցների գծով առկա ֆինանսական դրույթների հետ: Այդ դրույթները ներառում են սահմանված դրույքաչափերը, վարկ/կապիտալ հարաբերակցությունը և ֆինանսական գործունեությանն առնչվող մի շարք այլ տվյալներ: Բանկի կողմից չի արձանագրվել այս դրույթներից որևէ մեկի խախտում 2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Բացառություն են կազմում հետևյալը.

Մեկ կողմի գծով ռիսկի ենթարկվածության գործակիցը՝ ԲյուՕրչարդ Մայքրոֆայնենս հիմնադրամ ՍՊԸ-ն՝ 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և ՎՀԵԲ՝ 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: ԲյուՕրչարդ Մայքրոֆայնենս հիմնադրամ ՍՊԸ-ի նշված դրույթի հետ կապված Բանկը ստացել է արտոնություն 2017 թ. սեպտեմբերի 22-ին:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի իրացվելիության վիճակի վերլուծության նպատակով Բանկը միջազգային ֆինանսական հաստատություններից բոլոր փոխառությունները ներառել է ցպահանջ կատեգորիայում, քանի որ այդ հաստատությունների հետ ունեցած պայմանագրերը ներառում են պարտավորությունների փոխադարձ չկատարման մասին դրույթներ (տես ծան. 35): Ղեկավարության հաստատուն համոզվածությունն այնպիսին է, որ նշված վարկերն ամբողջությամբ կմարվեն ըստ իրենց պայմանագրով նախատեսված ժամկետների:

24. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Իրավաբանական անձ հաճախորդներ		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	21,622,825	13,200,858
Ժամկետային ավանդներ	9,854,852	7,288,150
	31,477,677	**20,489,008**
Ֆիզիկական անձինք		
Ժամկետային ավանդներ	43,242,084	32,243,577
Ընթացիկ/ցպահանջ հաշիվներ	16,984,137	14,062,707
	60,226,221	**46,306,284**
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**91,703,898**	**66,795,292**

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական անձ հաճախորդների հանդեպ պարտավորությունները կազմում են 900,890 հազար ՀՀ դրամ գումարով ավանդներ (2016 թ.՝ 849,600 հազար ՀՀ դրամ), որոնք իրենցից ներկայացնում են վարկերի, ակրեդիտիվների, երաշխիքների և այլ հարակից գործիքների գծով ապահովվածություններ: Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի տասը ամենամեծ հաճախորդների ավանդների ընդհանուր գումարը կազմում է 19,851,054 հազար ՀՀ դրամ (2016 թ.՝ 15,380,037 հազար ՀՀ դրամ) կամ հաճախորդների միջոցների ընդհանուր գումարի 19% (2016 թ.՝ 17%):

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 6.8% (2016 թ.՝ 5.4%), ԱՄՆ դոլարով, եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար՝ 4.5% (2016 թ.՝ 4.7%):

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել իր հաճախորդների նկատմամբ պարտավորությունների մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016 թ.՝ նույնպես):

25. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Պայմանա-կան գումար	Ակտիվ-ների իրական արժեք	Պարտավո-ություն-ների իրական արժեք	Պայմա-նական գումար	Ակտիվ-ների իրական արժեք	Պարտավո-ություն-ների իրական արժեք
Առևտրային ածանցյալ գործիքներ						
Արտարժութային սվոփեր	1,650,000	-	(7,706)	845,600	1,676	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	**1,650,000**	**-**	**(7,706)**	**845,600**	**1,676**	**-**

Արտարժութային սվոփի պայմանագրեր

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են արտարժույթի փոխանակման սվոփ պայմանագրերի գումարները հիմնական արտարժույթների կտրվածքով՝ 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ստորև ներկայացված արտարժույթով արտահայտված գումարները փոխարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքներով:

	Անվանական գումար	
	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ դրամի առք, ԱՄՆ դոլարի վաճառք	1,650,000	845,600
	1,650,000	**845,600**

26. Ստորադաս փոխառություն

	Արժույթ	Ժամկետայ-նություն	Անվանական դրույքաչափ, %	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Էդուարդ Սուքիասյան	ՀՀ դրամ	20/03/2025	14.00%	1,210,126	1,210,098
Խաչատուր Սուքիասյան	ՀՀ դրամ	17/04/2025	14.00%	1,512,658	1,512,623
Ռոբերտ Սուքիասյան	ՀՀ դրամ	28/04/2027	14.00%	1,008,438	-
Սարիբեկ Սուքիասյան	ԱՄՆ դոլար	05/04/2025	9.50%	1,704,052	1,703,462
Սարիբեկ Սուքիասյան	ԱՄՆ դոլար	04/04/2026	10.50%	974,327	973,989
				6,409,601	**5,400,172**

Ստորադաս փոխառության թողարկման արդյունքում ստացված գումարներն ուղղվել են Բանկի կապիտալի համալրմանը և ներառվել են Բանկի լրացուցիչ կապիտալում (տես նաև ծան. 34):

27. Այլ պարտավորություններ

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անհատների նկատմամբ պարտավորություններ	132,100	243,094
Վճարման ենթակա շահաբաժիներ	104,911	72,789
Վճարման ենթակա գումարներ	78,394	64,643
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	**315,405**	**380,526**
Աշխատակիցներին վճարվելիք հատուցումներ	558,840	524,833
Վճարման ենթակա հարկեր, բացի շահութահարկից	197,625	177,852
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	-	1,335
Ընդամենը ոչ ֆինանսական պարտավորություններ	**756,465**	**704,020**
Ընդամենը այլ պարտավորություններ	**1,071,870**	**1,084,546**

28. Սեփական կապիտալ

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 13,708,745 հազ. դրամ (2016 թ.՝ 4,631,333 հազ. դրամ): Համաձայն կանոնադրության, համալրված բաժնետիրական կապիտալը բաղկացած է թվով 1,852,533 հատ սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 2,500 դրամ անվանական արժեքով: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի թողարկման ենթակա կապիտալը բաղկացած է եղել 7,400 դրամ անվանական արժեքով 1,852,533 հատ հասարակ բաժնետոմսից (2016 թ՝. 1,852,533 հատ սովորական բաժնետոմս՝ 2,500 դրամ անվանական արժեքով):

2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Ընդամենը վճարված կապիտալի %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Ընդամենը վճարված կապիտալի %
Սարիբեկ Սուքիասյան	3,882,317	28.32%	1,450,533	31.3%
Խաչատուր Սուքիասյան	2,233,155	16.29%	637,734	13.8%
Ռոբերտ Սուքիասյան	1,957,409	14.28%	536,771	11.6%
Էդուարդ Սուքիասյան	1,461,352	10.66%	492,774	10.6%
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ	345,460	2,52%	350,129	7.6%
ԲՏԱ բանկի բաժնետերեր	-	-	1,102,965	23.82%
Այլ բաժնետերեր	3,829,052	27.93%	60,427	1.28%
	13,708,745	**100%**	**4,631,333**	**100%**

9,077,412 հազար դրամի չափով էմիսիոն եկամուտը Բանկը փոխանցել է բաժնային կապիտալին:

2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չուներ սեփականության իրավունքով իրեն պատկանող բաժնետոմսեր: Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի՝ Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բաժնետերերի միջև բաշխման ենթակա պահուստները հավասար են չբաշխված շահույթի գումարին՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Չբաշխվող պահուստներն իրենցից ներկայացնում են պահուստային ֆոնդը, որը ստեղծված է համաձայն կանոնակարգային պահանջների՝ բանկի ընդհանուր ռիսկերի, այդ թվում՝ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի և այլ պայմանական դեպքերի համար: Պահուստային ֆոնդը ձևավորվել է ըստ կանոնադրական պահանջների, որտեղ սահմանված է այս նպատակներով պահուստի ձևավորում՝ տեղական օրենսդրության համաձայն ձևակերպված բաժնետիրական կապիտալի ոչ պակաս, քան 15% -ի չափով:

Համաձայն 2017 թ. մայիսի 17-ին տեղի ունեցած Բանկի բաժնետերերի ժողովի, հայտարարվել են շահաբաժիններ մեկ բաժնետոմսի դիմաց 200 ՀՀ դրամ գումարով:

29. Թողարկված արժեթղթեր

	Արժույթ	Մարման ժամկետ	Արժեկտրոնի դրույքաչափ %	2017 թ. դեկտեմբերի 31	2016 թ. դեկտեմբերի 31
Թողարկված պարտքային արժեթղթեր	ՀՀ դրամ	29/12/2019	12%	100,100	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	ԱՄՆ դոլար	29/12/2019	5.75%	968,664	-
				1,068,764	**-**

30. ԲՏԱ բանկի միացում Բանկին

Համաձայն ՀՀ ԿԲ Խորհրդի 2016 թվականի մայիսի 6-ի N16BG որոշման, ըստ այդմ՝ նախնական հաստատման և 2016 թվականի օգոստոսի 18-ին կայացած Բաժնետերերի գլխավոր նիստում տեղի ունեցավ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի և «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ի միաձուլումը: Միաձուլման վերաբերյալ պայմանագիրը ստորագրվեց 2016 թվականի հունիսի 6-ին, իսկ ձեռքբերումն ու միացումը տեղի ունեցավ 2016 թվականի օգոստոսի 24-ին: Ձեռք բերված ակտիվներն ու պարտավորությունները ներկայացված են ստորև:

Ակտիվներ՝	**Օգոստոսի 23, 2016 թ.**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,186,727
Հակադարձ հետգնման պայմանագրեր	848,368
Վարկեր և կանխավճարներ հաճախորդներին	3,653,836
Հիմնական միջոցներ	490,882
Ոչ նյութական ակտիվներ	116,696
Այլ ակտիվներ	148,692
Ընդամենը ակտիվներ	**8,445,201**
Պարտավորություններ՝	
Պարտավորություններ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	415,471
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	2,268,100
Այլ պարտավորություններ	110,562
Ընդամենը պարտավորություններ	**2,794,133**
Ձեռք բերված զուտ ակտիվներ	**5,651,068**

Միացման արդյունքում կանոնադրական կապիտալն ավելացել է 1,102,965 հազար դրամով:

31. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային հարցեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտն աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Հաճախ հարկային մարմինները պահանջում են լրացուցիչ հարկեր այնպիսի գործարքների և հաշվապահական մեթոդների համար, որոնց գծով պահանջներ չեն ներկայացվել: Արդյունքում կարող են առաջանալ հավելյալ տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգմանն անմիջապես նախորդող 3 օրացուցային տարին: Որոշ հանգամանքներում հարկերի ստուգումը կարող է ընդգրկել ավելի վաղ ժամանակաշրջաններ: Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում և պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ղեկավարությունը նաև կարծում է, որ հիմնական պարտավորությունը, որը բխում է Բանկի դեմ հարուցված դատական հայցերից և բողոքներից, նշանակալի ազդեցություն չի ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ հետագա գործունեության վրա:

Վարկային պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին արտահաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ հաճախորդների կարիքները բավարարելու համար: Նշված ֆինանսական գործիքները ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ և չեն արտացոլվում հաշվեկշռում:

Այս պայմանագրային պարտավորությունների, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների անվանական կամ պայմանագրային գումարները դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն են.

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Չօգտագործված վարկային գծեր	6,013,484	5,749,194
Երաշխիքներ	2,144,644	2,003,652
Ընդամենը պայմանագրային պարտավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ	**8,158,128**	**7,752,846**

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով. Բանկը որպես վարձակալ

Բանկն իր բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով: Չեղարկման ոչ ենթակա գործառնական վարձակալություններով նախատեսված հետագա նվազագույն վարձակալության վճարների ընդհանուր գումարը հետևյալն է.

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Մինչև 1 տարի	400,438	496,792
1-5 տարի	2,245,170	1,627,266
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	**2,645,608**	**2,124,058**

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափերը հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը չի նախատեսում իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Այնուամենայնիվ, 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Բանկին սեփականության իրավունքով պատկանող գլխամասային շենքը և փոխադրամիջոցներն ապահովագրված են: Բանկն ունի նաև ապահովագրություն բանկային ընդհանուր պարտավորվածությունների, էլեկտրոնային,

համակարգչային հանցագործությունների և մասնագիտական պատասխանատվության համար: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Սկսած 2005 թ.-ից Բանկը հանդիսանում է ավանդների հատուցումը երաշխավորող պարտադիր համակարգի անդամ: Նշված համակարգը գործում է համաձայն օրենսդրության պահանջների և կանոնակարգվում է ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին օրենքով: Ապահովագրությունը մարում է Բանկի պարտավորությունները ֆիզիկական անձանց ավանդների գծով 10,000 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով (մինչև 5,000 հազար ՀՀ դրամ արտարժույթով ավանդների դեպքում) Բանկի սնանկացման և բանկային արտոնագրի հետկանչման դեպքում:

32. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա և դուստր ընկերությունների բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:
2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալի 69.55% (9,534,432 հազար ՀՀ դրամ) պատկանում է Սուքիասյաններին, որոնք հանդիսանում են Բանկի վերջնական վերահսկող: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին են պատկանում բաժնետոմսերի 2.52%-ը՝ գումարած մեկ բաժնետոմս:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Փոխկապակցված կողմերի հետ գործարքները, մնացորդները, եկամուտներն ու ծախսերը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

	2017 թ.		
	Բաժնե-տերեր	**Հիմնական ղեկավար անձնակազմ**	**Դուստր ընկերութ-յուններ և ընկերութ-յուններ, որտեղ Բանկն ունի ներդրում**
Հաճախորդներին տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	751,877	97,458	**-**
Տարվա ընթացքում տրված վարկեր	859,276	263,177	-
Տարվա ընթացքում վարկերի մարում	(635,605)	(153,418)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	**975,548**	**207,217**	**-**
Նվազեցված՝ արժեզրկումից կորուստ	(44,681)	(2,164)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր	**930,867**	**205,053**	**-**
Վարկերի գծով տոկոսային եկամուտ	74,641	16,325	-
Վարկերի գծով կորուստների արժեզրկման գծով մասնահանումներ/(վերականգնումներ)	(8,456)	(1,603)	-
Հաճախորդներին վճարման ենթակա գումարներ			
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	1,286,621	30,711	-
Տարվա ընթացքում ներդրված ավանդներ	26,183,083	4,368,046	-
Տարվա ընթացքում մարված ավանդներ	(26,508,687)	(3,274,719)	-
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**961,017**	**1,124,038**	-
Տոկոսային ծախս ավանդների գծով	23,926	59,366	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ հունվարի 1-ի դրությամբ	458,716	-	-
Ավելացումներ տարվա ընթացքում	9,115,903	-	-
Նվազումներ տարվա ընթացքում	(9,381,267)	-	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**193,352**	-	-
Տոկոսային ծախս	19,663	-	-
Ստորադաս փոխառություն			
Ստորադաս փոխառություն հունվարի 1-ի դրությամբ	**5,399,302**	**-**	-
Թողարկված տարվա ընթացքում	-	-	-
Ստորադաս փոխառություն դեկտեմբերի 31-ի դրությամբ	**6,409,601**	**-**	-
Տոկոսային ծախս	**-**	-	-
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ			
Հունվարի 1-ի դրությամբ	**-**	**-**	-
Ավելացումներ	-	**-**	-
Նվազեցումներ	-	**-**	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**-**	**-**	-
	-		
Հիմնական միջոցների ձեռքբերում	**41,933**	**-**	-
Տրամադրված երաշխիքներ	**69,439**	**-**	-
Այլ ծախսեր			
Կոմիսիոն և այլ միջնորդավճարների գծով եկամուտ	4,993	1,310	-
Գովազդային ծախսեր	46,978	-	-
Ապահովագրական ծախսեր	-	-	165,848
Ինկասացիոն ծախսեր	-	-	-
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	426,568	-	-
Գործուղման ծախսեր	23,475	-	-
Այլ ծախսեր	48,000	-	-

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2016 թ.		
	Բաժնե-տերեր	**Հիմնական ղեկավար անձնակազմ**	**Դուստր ընկերութ-յուններ և ընկերութ-յուններ, որտեղ Բանկն ունի ներդրում**
Հաճախորդներին տրված վարկեր			
Հունվարի 1-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	789,514	77,539	**-**
Տարվա ընթացքում տրված վարկեր	452,040	142,062	-
Տարվա ընթացքում վարկերի մարում	(489,677)	(163,022)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր, համախառն	**751,877**	**56,579**	**-**
Նվազեցված՝ արժեզրկումից կորուստ	(36,225)	(582)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա վարկեր	**715,652**	**55,997**	**-**
Վարկերի գծով տոկոսային եկամուտ	116,224	5,146	-
Վարկերի գծով կոուստների արժեզրկման գծով կորուսստներ/ (վերականգնումներ)	**(28,621)**	**205**	-
Հաճախորդներին վճարման ենթակա գումարներ			
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	1,191,290	238,029	-
Տարվա ընթացքում ներդրված ավանդներ	31,073,549	650,194	-
Տարվա ընթացքում մարված ավանդներ	(30, 978,218)	(857,512)	-
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,286,621**	**30,711**	-
Տոկոսային ծախս ավանդների գծով	46,563	684	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ հունվարի 1-ի դրությամբ	1,013,049	-	-
Ավելացումներ տարվա ընթացքում	6,063,223	-	-
Նվազումներ տարվա ընթացքում	(6,617,556)	-	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**458,716**	-	-
Տոկոսային ծախս	141,702	-	-
Ստորադաս փոխառություն			
Ստորադաս փոխառություն հունվարի 1-ի դրությամբ	**4,425,604**	**-**	-
Թողարկված տարվա ընթացքում	973,698	-	-
Ստորադաս փոխառություն դեկտեմբերի 31-ի դրությամբ	**5,399,302**	**-**	-
Տոկոսային ծախս	78,263	-	-
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճարներ			
Հունվարի 1-ի դրությամբ	**4,001,688**	**-**	-
Ավելացումներ	-	**-**	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	(4,001,688)	**-**	-
Հիմնական միջոցների ձեռքբերում	**31,796**	**-**	-
Տրամադրված երաշխիքներ	**96,788**	**-**	-
Այլ ծախսեր			
Կոմիսիոն և այլ միջնորդավճարների գծով եկամուտ	3,761	177	-
Գովազդային ծախսեր	23,683	-	-
Ապահովագրական ծախսեր	-	-	-
Ինկասացիոն ծախսեր	-	-	-
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	60,667	-	-
Գործուղման ծախսեր	10,472	-	-
Այլ ծախսեր	200	-	-

2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում տնօրենների և առանցքային ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրության չափը կազմել է 400,509 հազար ՀՀ դրամ (2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում՝ 366,982 հազար ՀՀ դրամ): Առանցքային ղեկավար անձնակազմը ներառում է Տնօրինության և Տնօրենների խորհրդի անդամներին:

33. Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Բանկը կատարել է իր ֆինանսական գործիքների գնահատում, ինչպես պահանջվում է ՖՀՄՍ 7 *Ֆինանսական գործիքները. Բացահայտումներ* ստանդարտով:

Գնանշված վաճառքի համար մատչելի ակտիվների գնահատված իրական արժեքները հիմնված են հաշվետվության օրվա դրությամբ շուկայական գների վրա առանց գործարքի ծախսերի նվազեցման: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են՝ օգտագործելով զեղչված դրամական հոսքերը և հաշվետու օրվա դրությամբ նմանատիպ գործիքների զեղչային դրույքները:

Իրական արժեքի գնահատումը մոտավորապես համապատասխանում է այն գումարին, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ, պատրաստակամ կողմերի միջև՝ «անկախ կողմերի միջև գործարքի» սկզբունքով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ գնահատումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես ակտիվների կամ պարտավորությունների անմիջապես վաճառքի գումար:

Բանկը չափում է ֆինանսական գործիքների իրական արժեքը ներկայացված ֆինանսական վիճակի հաշվետվությունում, օգտագործելով հետևյալ իրական արժեքի աստիճանակարգը, որն արտացոլում է գնահատման մեջ կիրառվող չափանիշների նշանակալիությունը.

- Մակարդակ 1. Համանման գնանշված գործիքի շուկայական արժեքը (չճշգրտված) ակտիվ շուկայում
- Մակարդակ 2. Գնահատման մեթոդներ հիմնված դիտարկելի չափանիշների վրա, ուղղակի (օր., ինչպես գները) կամ անուղղակի ձևով (օր., գներից բխող): Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ օգտագործելով ակտիվ շուկայում նման գնանշված գործիքների շուկայական արժեքը, շուկայում գնանշված համանման կամ նմանատիպ գործիքների շուկայական արժեքը, որոնք ենթադրվում են ավելի քիչ ակտիվ շուկա, կամ այլ գնահատման մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի չափանիշները ուղղակի կամ անուղղակի դիտարկելի են շուկայի տվյալներից:
- Մակարդակ 3. Գնահատման մեթոդներ, որոնք օգտագործում են նշանակալի ոչ դիտարկելի չափանիշներ: Այս մակարդակը ներառում է բոլոր գործիքները, որտեղ գնահատման մեթոդը ներառում է չափանիշներ, որոնք հիմնված չեն դիտարկելի տվյալների վրա և ոչ դիտարկելի չափանիշները ունեն նշանակալի ազդեցություն գործիքների գնահատման մեջ: Այս մակարդակը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են՝ հիմնվելով շուկայական գնի վրա, որտեղ նշանակալի ճշգրտումներ կամ ենթադրություններ են անհրաժեշտ գործիքների տարբերությունները արտացոլելու համար:

Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը՝ չափված իրական արժեքով շարունակական հիմունքով. Բանկի ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից մի քանիսը չափվում են իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին: Հետևյալ աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն այդ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքների որոշման վերաբերյալ (մասնավորապես գնահատման տեխնիկաները և ելակետային տվյալները).

Ֆինանսական ակտիվներ/ պարտավո-ություններ	Իրական արժեքը		Իրա-կան արժեքի հիերար խիան	Գնահատման տեխնիկա(ներ) և հիմնական ելակետային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի ելակետա-յին տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի ելակետա-յին տվյալների հարաբե-ռակցութ-յունը իրական արժեքին
	2017 թ. դեկտեմբեր ի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբեր ի 31-ի դրությամբ				
Հետգնման պայմանագրե-ով գրավադրված ոչ պետական արժեթղթեր	-	-	Մակար-դակ 2	Չեղչված դրամական հոսքեր Նախասահմանված դրամական հոսքերը զեղչված են այն դրույքաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը	կ/չ	կ/չ
Բանկի կողմից պահվող ՀՀ պետական արժեթղթեր	1,986,400	2,379,734	Մակար-դակ 2		կ/չ	կ/չ
Հետգնման պայմանագրե-ով գրավադրված ՀՀ պետական արժեթղթեր	19,619,097	13,169,605	Մակար-դակ 2	Չեղչված դրամական հոսքեր Նախասահմանված դրամական հոսքերը զեղչված են այն դրույքաչափով, որն արտացոլում է մինչև մարման ժամկետն ընկած շուկայի եկամտաբերությունը	կ/չ	կ/չ
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	1,676	Մակար-դակ 2	Ապագա դրամական հոսքերը գնահատված են հիմք ընդունելով գնահատված ֆորվարդային փոխարժեքները և պայմանագրերի ֆորվարդային դրույքաչափերը՝ զեղչված տարբեր գործընկերների վարկային ռիսկերը արտացոլող դրույքաչափով	կ/չ	կ/չ
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավո-ություններ	(7,706)	-	Մակար-դակ 2	Ապագա դրամական հոսքերը գնահատված են հիմք ընդունելով գնահատված ֆորվարդային փոխարժեքները և պայմանագրերի ֆորվարդային դրույքաչափերը՝ զեղչված տարբեր գործընկերների վարկային ռիսկերը արտացոլող դրույքաչափով	կ/չ	կ/չ

Իրական արժեքի գնահատումը մոտավորապես համապատասխանում է այն գումարին, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ, պատրաստակամ կողմերի միջև՝ «անկախ կողմերի միջև գործարքի» սկզբունքով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ գնահատումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես ակտիվների կամ պարտավորությունների անմիջապես վաճառքի գումար, ինչպես նաև այստեղ ներկայացված գնահատումները պարտադիր կերպով չեն արտացոլում այն գումարները, որոնք Բանկը կարող է ստանալ որոշակի գործիքի շուկայական փոխանակման արդյունքում: Անհրաժեշտ է տրամաբանորեն մեկնաբանել շուկայական տվյալները, գնահատված իրական արժեքը որոշելու համար: Հայաստանի Հանրապետության շուկան կարելի է բնութագրել որպես զարգացող, որտեղ տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալները: Շուկայի գնանշումները կարող են հնացած լինել կամ արտացոլել վաճառքի գործարքների կրճատում և արդյունքում չեն արտացոլի ֆինանսական գործիքների իրական արժեքները: Ղեկավարությունն օգտագործել է շուկայի ամբողջ հասանելի տեղեկատվությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատելիս:
Հաշվետու ժամանակահատվածում տեղի չեն ունեցել փոխանցումներ մակարդակ 1-ից 2:

Ակնկալվող դրամական հոսքերի զեղչման նպատակով օգտագործված տոկոսադրույքները հիմնված են պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի վրա հաշվետու ամսաթվի դրությամբ, գումարած գործիքի արժույթը, ժամկետայնությունը և գործընկերոջ վարկային ռիսկը հետևյալ կերպ՝՝

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	12.2%-26.1%	12.45%-27.3%

Բանկի՝ շարունակական հիմունքով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք և հաշվեկշռային արժեք

Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված են գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք պետք է ստացվեն՝ համանման վարկային ռիսկ և մնացած մարման ժամկետ ունեցող նոր գործիքների դեպքում զեղչվելով ընթացիկ տոկոսադրույքներից: Բացառությամբ ստորև նշված դեպքերի, ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

Ակտիվ շուկայում չգնանշված՝ ֆիքսված տոկոսադրույքով ավանդների և այլ փոխառությունների գնահատված իրական արժեքը հիմնված է դրանց զեղչված դրամական հոսքերի վրա՝ օգտագործելով համանման մարման ժամկետներով նոր պարտքերի գծով զեղչված տոկոսադրույքները: Բացառությամբ ստորև նշված դեպքերի, ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրանց իրական արժեքին:

	31 դեկտեմբերի, 2017 թ.		31 դեկտեմբերի, 2016 թ.	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
Հաճախորդներին տրված վարկեր	104,216,558	11, 890,599	77,314,109	77,008,679
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(91,703,898)	(91,400,093)	(66,795,292)	(66,682,700)
Վարկեր և ավանդներ միջազգային ֆինանսական կազմակերպություններից	(20,296,754)	(20,906,754)	(14,087,895)	(14,908,504)
Վարկեր ֆինանսական հաստատություններից	(14,822,737)	(15,600,809)	(14,006,062)	(14,200,508)
Ստորադաս փոխառություն	(6,409,601)	(7,405,773)	(5,401,172)	(5,830,809)
Թողարկված պարտքային արժեթղթեր	(1,068,764)	(1,068,764)	-	-

34. Կապիտալի ռիսկի կառավարում

Բանկը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Բանկի գործունեության անընդհատության սկզբունքը, միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրաված և սեփական միջոցների հավասարակշռության օպտիմալացման ճանապարհով:

Բանկի կապիտալի կառուցվածքը բաղկացած է պարտքից և բաժնետիրական կապիտալը տնօրինողներին բաշխման ենթակա սեփական կապիտալից, որն իրենից ներկայացնում է թողարկված կապիտալը, պահուստները և չբաշխված շահույթը, ինչպես բացահայտված է սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունում:

Տնօրինությունը վերանայում է կապիտալի կառուցվածքը կիսամյակային կտրվածքով: Բանկի կապիտալի համարժեքությունը սահմանվում և վերահսկվում է՝ օգտագործելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված սահմանաչափերը: Որպես նման վերանայման մի մաս, Բանկը դիտարկում է կապիտալի ինքնարժեքը և կապիտալի յուրաքանչյուր դասին առնչվող ռիսկերը: Խորհրդի առաջարկությունների հիման վրա Բանկն իր ընդհանուր կապիտալի կառուցվածքը կառուցում է շահութաբաժինների վճարման, նոր բաժնետոմսերի թողարկման, ինչպես նաև պարտքի թողարկման միջոցով: Ի լրումն, Բանկը կառավարում է իր կապիտալը՝ պայմանագրային պահանջների իրականացման համար:

ՀՀ կենտրոնական բանկը Բանկի համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, Բանկը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովի 30,000,000 հազար ՀՀ դրամ նվազագույն բաժնետիրական կապիտալ (2016 թ. դեկտեմբերի 31-ին՝ 5,000,000 հազար ՀՀ դրամ), իսկ կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը՝ 12% (2016 թ. դեկտեմբերի 31-ին՝ 12%):

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Բանկի կանոնակարգային կապիտալի հարաբերակցությունը՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքների:

	2017 թ. դեկտեմբերի 31 աուդիտ չարված	**2016 թ. դեկտեմբերի 31 աուդիտ չարված**
Հիմնական կապիտալ	25,298,570	21,661,334
Լրացուցիչ կապիտալ	8,500,076	8,500,076
Ընդհանուր կապիտալ	33,798,645	**30,161,410**
Ռիսկով կշռված ակտիվներ	160,789,654	**124,862,421**
Ընդհանուր կապիտալը՝ ռիսկով կշռված ակտիվներում տոկոսային արտահայտությամբ (ընդհանուր կապիտալի հարաբերակցություն)	**21.04%**	**24.16%**
Համապատասխանություն նվազագույն բաժնետիրական կապիտալի և ընդհանուր կապիտալի պահանջներին	**Տարվա ընթացքում խախտումներ չեն արձանագրվել**	**Տարվա ընթացքում խախտումներ չեն արձանագրվել**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն յուրաքանչյուր ակտիվի և պայմանագրային կողմի հետ առնչվող վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման, և հաշվի առնելով ցանկացած ընդունելի ապահովվածությունը և երաշխիքները: Համանման մոտեցում է ձևավորված նաև չճանաչված պայմանագրային պարտավորությունների գծով՝ որոշակի ճշգրտումներ կատարելով հնարավոր կորուստների պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

Կանոնակարգային կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների համաձայն: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որն ընդգրկում է վերագնահատման պահուստները:

35. Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, որը ենթադրում է ռիսկայնության աստիճանների որոշակի համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, ընդ որում գործառնական ռիսկերը գործունեության ընթացքում անխուսափելի են: Այդուհանդերձ, Բանկի նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության՝ ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցության միջոցով՝ նվազագույնի հասցնելով Բանկի ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է ախտորոշել, բացահայտել, գնահատել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Բանկը պարբերաբար վերանայում է ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, արտաքին միջավայրում տեղի ունեցած փոփոխություններն արտացոլելու և առկա լավագույն փորձին համապատասխանեցնելու համար:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկման պատասխանատու մարմիններն են.

Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար: Խորհուրդը տրամադրում է սկզբունքներ ռիսկի ամբողջական կառավարման համար, ինչպես նաև քաղաքականություն՝ հատուկ բնագավառների վերաբերյալ, ինչպիսիք են փոխարժեքային (արտարժութային) ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, վարկային ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի անխափան իրականացման և վերահսկման համար: Վարչությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման խնդիրների լուծման համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունած համապատասխան որոշումների կատարումը:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարումն իրականացվում է «Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության» (ՌՌԿՎ) կողմից՝ ըստ Տնօրենների խորհրդի հաստատած քաղաքականության: ՌՌԿՎ կողմից գնահատվում, բացահայտվում, վերլուծվում և հեջավորվում են ռիսկերը՝ գործառնական ստորաբաժանումների հետ սերտ համագործակցության միջոցով: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ինչպես նաև ռիսկերի կառավարման հետ կապված գործընթացների ներդրման և իրականացման համար:

Ներքին աուդիտ

Ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկերի կառավարման անկախ գնահատման և հսկողության ընդհանուր միջավայրի համար: Բանկի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի ստուգման է ենթարկվում ներքին աուդիտի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում կառավարման համապատասխան մարմիններին:

Ռիսկերի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերի գնահատման մեթոդով հաշվի է առնվում ինչպես սպասվող կորուստը, որն իրենից ներկայացնում է գործունեության ընթացքում կորուստների հնարավոր միջին մակարդակ, այնպես էլ հնարավոր անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են սպասվող միջին մակարդակը գերազանցող կորուստներ: Բանկը նաև մոդելավորում է քիչ հավանական, սակայն պոտենցիալ էական ազդեցություն ունեցող «վատթարագույն դեպքերը»:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերն արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին ոլորտների վրա:

Գործունեության առանձին տեսակների գծով ստացվող տեղեկատվությունն ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվության հիման վրա կազմված հաշվետվությունները պարունակում են տեղեկություններ վարկային ռիսկի չափի, վարկային ցուցանիշների կանխատեսվող մակարդակի, ռիսկի սահմանված սահմանաչափերի, դրանցից բացառությունների, VaR գնահատականի, իրացվելիության ցուցանիշների և ընդհանուր ռիսկի մակարդակի փոփոխության վերաբերյալ: Բանկի վարչությունը յուրաքանչյուր ամիս ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ըստ ոլորտների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար: Յուրաքանչյուր օր անց է կացվում ղեկավարության կարճատև խորհրդակցություն, անհրաժեշտության դեպքում Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկի մակարդակը, ներդրումները, իրացվելիությունը և ռիսկերին վերաբերող այլ ընթացիկ հարցեր:

Ռիսկերի նվազեցում

Ռիսկերի նվազեցման գործընթացն իրենից ներկայացնում է ռիսկերի առաջացման հնարավորությունը, կամ դրա ազդեցությունը նվազեցնելու, կամ այդ երկու գործոնների մեղմման ուղղությամբ ձեռնարկվող լրացուցիչ միջոցառումների իրականացում: Իր ընդհանուր ռիսկերի կառավարման գործընթացի շրջանակներում Բանկն օգտագործում է ածանցյալ և այլ գործիքներ: Բանկն ակտիվորեն օգտագործում է գրավի միջոցները՝ վարկային ռիսկը նվազեցնելու ուղղությամբ (ավելի մանրամասն՝ տես ստորև):

Ռիսկի համակենտրոնացումներ

Ռիսկի համակենտրոնացումներն առաջանում են, երբ մի շարք փոխառուներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը ծավալվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ փոխառուների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի համակենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա: Համակենտրոնացումների բարձր մակարդակից խուսափելու նպատակով Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ ուղղված դիվերսիֆիկացված պորտֆելի պահպանմանը, ինչպես նաև իրականացվում է համակենտրոնացումների հաստատված սահմանաչափերի պահպանման անընդհատ մոնիտորինգ և կառավարում:

Վարկային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված պարտատիրոջ կողմից պարտավորության չկատարելու հետ, ինչը կարող է Բանկին կորուստներ պատճառել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Վարկային ռիսկի կառավարումը և հսկողությունը իրականացվում է Բանկի ՌՈԿՎ և վարկային ստորաբաժանման կողմից, որի վերաբերյալ հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և վարչությանը:

Բանկի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցները:

Վարկային ռիսկի առավելագույն չափը. Բանկի վարկային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է թե՛ անհատական ռիսկերից, թե՛ ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին, նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,824,831	32,059,829
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,036,368	5,987,447
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,296,862	4,552,427
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	1,676
Հաճախորդներին տրված վարկեր	104,216,558	77,314,109
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
- Բանկի կողմից պահվող	2,036,091	2,879,255
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	19,619,097	13,169,605
Այլ ակտիվներ	138,742	74,783
	179,168,549	**136,039,131**

Բանկի վարկային ռիսկի գնահատման վերլուծությունում հաշվանցման ազդեցությունը էական չէ: Բանկն ունի վարկերի դիմաց ապահովվածության նպատակով հաճախորդներից ստացված անշարժ գույքի, ակտիվների գծով այլ արժեթղթերի, երաշխիքների տեսքով ստացված գրավներ: Դրանց արժեքների գնահատականը հիմնված է փոխառության պահին գնահատված գրավի արժեքի հիման վրա, և որպես կանոն չեն վերանայվում, բացառությամբ այն դեպքերի, երբ վարկն առանձին վերցրած համարվում է արժեզրկված: Վարկային ռիսկի գծով ստացված գրավները քննարկվում ստորև այս ծանոթագրությունում:

Որպես կանոն, գրավ չի պահվում ածանցյալ ֆինանսական գործիքներով առկա հայցերի, արժեթղթերում ներդրումների, բանկերին տրված վարկերի մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ արժեթղթերը պահվում են որպես հակադարձ հետգնման և արժեթղթերի փոխառությունների գործառնությունների մաս:

Վարկային ռիսկի առավելագույն չափի համակենտրոնացումը

Բանկը համակարգում է իր ստանձնած վարկային ռիսկի մակարդակը, սահմանափակելով մեկ փոխառուի կամ վարկառուների խմբերի հաշվով ստանձնած ռիսկի գումարը, ինչպես նաև արդյունաբերության ճյուղերը (և աշխարհագրական հատվածները): Վարկային ռիսկի սահմանափակումները վարկառուի և վարկավորման տեսակի (ըստ ոլորտի, ըստ տարածաշրջանի) հաստատվում և վերանայվում են վարչության կողմից: Փաստացի ռիսկերի և դրանց սահմանաչափերի միջև համեմատությունը ենթարկվում է մոնիտորինգի օրական կտրվածքով:

Ըստ անհրաժեշտության, և վարկերի մեծամասնության դեպքում, Բանկը ձեռք է բերում գրավ, ինչպես նաև կորպորատիվ և անհատական մակարդակի երաշխիքներ: Սակայն, վարկերի մի տարատեսակ է ֆիզիկական անձանց վարկավորումը, որտեղ նման գործիքները հնարավոր չէ կիրառել: Նման ռիսկերը վերահսկվում են շարունակական հիմունքներով և ենթակա է տարեկան կամ ավելի հաճախակի վերանայման:

Վարկը տրամադրելու պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկի չօգտագործված մասը վարկերի, երաշխիքների կամ ակրեդիտիվների տեսքով: Վարկային ռիսկը արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում սահմանվում է որպես գործընկերոջ կողմից պայմանագրային ժամկետների և պայմանների պահպանման անկարողության հետևանքով կորուստների հավանականություն: Ինչ վերաբերում է վարկ տրամադրելու պարտավորությունների գծով վարկային ռիսկին, Բանկը ենթարկվում է վնաս կրելու ռիսկի՝ ընդհանուր չօգտագործված պարտավորությունների չափով: Սակայն, հավանական վնասի չափն ավելի պակաս է քան ընդհանուր չօգտագործված պարտավորությունների չափը, քանի որ վարկավորման պարտավորությունների ստանձնումը պայմանավորված է հաճախորդների կողմից վարկավորման որոշակի չափանիշներին պահպանմամբ: Բանկը պայմանական պարտավորությունների նկատմամբ կիրառում է նույն վարկային քաղաքականությունը, ինչ որ հաշվեկշռային ֆինանսական գործիքների նկատմամբ, այսինքն՝ վարկի տրամադրման ընթացակարգերի պահպանում՝ կիրառելով ռիսկի մեղմման սահմանաչափեր և ընթացիկ մոնիտորինգի միջոցառումներ: Բանկը իրականացնում է արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների մոնիտորինգ, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները, ընդհանուր առմամբ, պարունակում են ավելի մեծ վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Վերանայված վարկեր և կանխավճարներ

Վարկերը և կանխավճարները, ընդհանուր առմամբ, վերանայվում են հաճախորդների հետ շարունակական փոխհարաբերությունների շրջանակներում, կամ վարկառուի դրության անբարենպաստ փոփոխության արդյունքում: Վերջինի դեպքում, վերանայումը կարող է հանգեցնել մարման ժամկետի կամ մարման ժամանակացույցի երկարաձգման, համաձայն որի, Բանկն իրապես անբարենպաստ վիճակում գտնվող վարկառուներին առաջարկում է զեղչային տոկոսադրույքներ: Արդյունքում՝ տվյալ ակտիվը շարունակում է մնալ ժամկետանց և անհատապես արժեզրկված, ընդ որում՝ տոկոսի և մայր գումարի վճարումը թույլ չի տալիս վերականգնել ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը: Այլ դեպքերում, վերանայումը կհանգեցնի նոր պայմանագրի ստորագրման, որն ըստ էության կդիտվի որպես նոր վարկ:

2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված՝ վերանայված վարկերի հաշվեկշռային արժեքը կազմել է 3,568,988 հազար ՀՀ դրամ և 2,356,513 հազար ՀՀ դրամ, համապատասխանաբար:

Աշխարհագրական համակենտրոնացում

Բանկի ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական համակենտրոնացումը 2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև՝

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Հայաստանի Հանրապետություն	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,273,763	427,141	123,927	**35,824,831**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,019,238	-	17,130	13,036,368
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,296,862	-	-	4,296,862
Հաճախորդներին տրված վարկեր	104,216,558	-	-	104,216,558
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Բանկի կողմից պահվող	2,036,091	-	-	**2,036,091**
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	19,619,097	-	-	**19,619,097**
Այլ ֆինանսական ակտիվներ	138,742	-	-	**138,742**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**178,600,351**	**427,141**	**141,057**	**179,168,549**

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Հայաստանի Հանրապետություն	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18,866,142	3,160,794	10,032,893	**32,059,829**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,396,938	296,983	293,526	**5,987,447**
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,552,427	-	-	**4,552,427**
Հաճախորդներին տրված վարկեր	77,314,109	-	-	**77,314,109**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ				
- Բանկի կողմից պահվող	2,879,255	-	-	**2,879,255**
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	13,169,605	-	-	**13,169,605**
Այլ ֆինանսական ակտիվներ	682,761	-	-	**682,761**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**122,861,237**	**3,457,777**	**10,326,419**	**136,645,433**

Բանկի համար վարկային ռիսկ գոյացնող գործընկերները չունեն արտաքին վարկանշում: Բանկն օգտագործում է ներքին գործընթացներ և քաղաքականություն՝ գործընկերների վարկանշման և համապատասխան ռիսկի «ախորժակը» որոշելու համար:

Ռիսկի սահմանաչափերի վերահսկման և մեղմացման քաղաքականություններ

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ վարկառուի կամ վարկառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Ըստ արդյունաբերության ճյուղերի և երկրների վարկային ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Բանկի խորհրդի կողմից:

Մեկ վարկառուի, ներառյալ ֆինանսական կազմակերպությունների գծով վարկային ռիսկի չափը, նա և սահմանափակված է Բանկի Խորհրդի կողմից սահմանված լրացուցիչ սահմանաչափերով հաշվեկշռային և արտահաշվեկշռային ռիսկերի համար, ինչպես նաև առևտրային գործարքների, օրինակ՝ արտարժութային ֆորվարդի պայմանագրերի, օրական սահմանաչափերով: Ընթացիկ ռիսկերի ենթարկվելու իրական սահմանաչափերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Վարկային ռիսկի ենթարկվելը նաև կառավարվում է վարկառուների և հնարավոր վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծությունների և, անհրաժեշտության դեպքում, վարկի տրամադրման սահմանաչափերի փոփոխման միջոցով:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և մեղմիչ մի քանի այլ միջոցներ:

Գրավ

Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում և հիմնական միջոցներից մեկն է համարվում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի համար գրավի հիմնական տեսակներն են.

- հիպոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույք,
- կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, պաշարները և այլ հիմնական միջոցներ,
- ֆինանսական գործիքներ՝ պարտքային և բաժնային արժեղթեր
- դրամական միջոցներ և ոսկյա իրեր

Կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են, ֆիզիկական անձանց գծով վերաձևակերպվող վարկային գծերը հիմնականում չեն ապահովվում: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվների ապահովման միջոց հանդիսացող գրավների տեսակները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական կազմակերպություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Գրավի նախնական գնահատումը տեղի է ունենում վարկային հաստատման գործընթացի ընթացքում, երբ Բանկը հավաքում է տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս կատարել հիմնավորված գնահատում: Գրավի առարկայի արժեքը այն գնահատված գումարն է, որով այն կարող է վաճառվել է գնահատման ամսաթիվը՝ ճշգրտված արժեքի նվազեցմամբ: Արժեքի նվազեցմամբ չափվում է այն ռիսկը, որ Բանկը չի կարողանա վաճառել գրավի առարկան ակնկալվող շուկայական արժեքին հավասար գնով: Անշարժ գույքի և հիմնական միջոցների համար նման նվազեցումը սովորաբար տատանվում է շուկայական արժեքի 20%-ից 40%-ի միջակայքում: Ղեկավարությունն իրականացնում է գրավի շուկայական արժեքների մոնիտորինգ և պահանջում ապահովման հավելյալ միջոց՝ հիմնական համաձայնագրին համապատասխան, ինչպես նաև հետևում է ստացված ապահովման միջոցների շուկայական արժեքին՝ վարկի արժեզրկման պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Վարկերի ապահովվածություն՝		
Անշարժ գույքի գրավով	51,419,873	39,418,215
Երաշխիքով	15,150,615	10,999,615
Ոսկու գրավով	7,843,060	7,353,619
Փոխադրամիջոցներով (մեքենաներով)	1,469,296	3,780,323
Կանխիկով	874,675	1,023,456
Նյութերով	43,402	843,556
Սարքավորումներով	928	123,692
Ոսկու ստանդարտացված ձուլակտորներով	3,889	1,567
Այլ գրավով	10,186,828	98,296
Չապահովված վարկերով	18,829,112	15,218,253
	105,821,678	**78,860,592**
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(1,605,120)	(1,546,483)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և կանխավճարներ	**104,216,558**	**77,314,109**

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ, որ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում, մինչև վարկերը չգնահատվեն որպես անհատապես արժեզրկված:

Վարկերին առնչվող պայմանական պարտավորություններ

Այս գործիքների հիմնական նպատակը անհրաժեշտության դեպքում հաճախորդներին միջոցներ տրամադրելն է: Երաշխիքները և ակրեդիտիվները ենթակա են նույն պարտքային ռիսկին, ինչ վարկերը: Ապրանքային և թղթային ակրեդիտիվները՝ Բանկի գրավոր հավաստումներն են հաճախորդների անունից, որոնք թույլ են տալիս երրորդ անձանց գումարներ ստանալ բանկից հատուկ պայմանների կատարման դեպքում, ապահովված են դրանց հետ կապված ապրանքների առաքմամբ և հետևաբար դրանք ավելի ապահով են, քան ուղղակի տրամադրվող վարկերը: Վարկի տրամադրման պայմանական պարտավորություններն իրենցից ներկայացնում են վարկային գծերի չօգտագործած մասերը: Վարկի երկարաձգման պարտավորությունների գծով վարկային ռիսկի առկայության դեպքում Բանկի հնարավոր կորուստները կկազմեն ընդամենը չօգտագործված վարկային գծերին համարժեք գումար:

Սակայն հնարավոր վնասի իրական գումարն ավելի փոքր է, քան չօգտագործված վարկային գծերի ընդհանուր գումարը, քանի որ վարկային պարտավորությունները տրամադրվում են վարկառուների կողմից վարկերի տրամադրման որոշակի ստանդարտների պահպանման դեպքում: Բանկը հետևում է պարտավորությունների մարման ժամկետներին, քանի որ երկարաժամկետ պարտավորությունները պարունակում են ավելի բարձր վարկային ռիսկ, քան կարճաժամկետ պարտավորությունները:

Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Արժեզրկման գնահատումը Բանկը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման գծով պահուստի անհատական գնահատում

Բանկը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի համապատասխան պահուստի չափն անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները և սպասվող շահաբաժինների վճարումները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չկանխատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման գծով պահուստի խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով (ներառյալ վարկային քարտերը, հիպոթեքները և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին: Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը հնարավոր է առաջանա պորտֆելում, նույնիսկ եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա:

Արժեզրկման կորուստները գնահատվում են հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և որպես անհատապես արժեզրված վարկ բացահայտվելու մոտավոր ժամկետը, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները և վերականգնումները:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների արժեզրկման գնահատումը և պահուստավորումն իրականացվում է նույն կերպ՝ ինչ վարկերինը:

Բանկն իրականացնում է բազմաթիվ գործարքներ, որոնց պայմանագրային կողմերը չեն վարկանշված միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից: Ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է Բանկի ներքին վարկանիշների համաձայն:

Բանկի կողմից մշակվել է վարկառուների վարկանշման մեթոդաբանություն՝ կորպորատիվ վարկառուների վարկանիշերը գնահատելու նպատակով: Այս մեթոդը թույլ է տալիս հաշվարկել և շնորհել/հաստատել վարկառուի վարկանիշը և վարկի դիմաց գրավի վարկանիշը: Համակարգը հիմնված է սքորինգային մոդելի վրա՝ պայմանավորված փոխառուի հիմնական կատարողական

ցուցանիշներով, որոշված ուղենիշների անբավարար օբյեկտիվության դեպքում աննշան փորձագիտական ճշգրտումների հնարավորությամբ: Այս մեթոդը ապահովում է վարկանիշի շնորհում հետևյալ չափանիշների խմբերի հիման վրա. փոխառուի շուկայական ցուցանիշները, գուդվիլը, վարկային պատմությունը, տեղեկատվության թափանցիկությունը և վստահելիությունը, բիզնեսի և գործարար միջավայրի վերաբերյալ տեղեկատվությունը, Բանկի և վարկառուի հարաբերությունները, վարկառուի ֆինանսական վիճակը, ձեռնարկատիրական գործունեությունը և տրամադրված գրավը: Ֆինանսական վիճակը և ձեռնարկատիրական գործունեությունը ամենակարևոր չափանիշներն են: Հետևաբար, սքորինգի մոդելը նախատեսում է վարկառուի և վարկի ընդհանուր գնահատման մոտեցում:

Վարկառուի սքորինգային գնահատման մոդելը մշակվել է Բանկի կողմից՝ փոքր և միջին բիզնեսի վարկերի գնահատման և որոշումների կայացման նպատակով: Սքորինգային մոդելը մշակվել է ստանդարտ վարկատեսակների համար և ներառում է վարկառուների հիմնական ցուցանիշները, ինչպիսիք են՝ ֆինանսական վիճակը, վարկառուի հետ հարաբերությունները, կառավարման որակը, նպատակային օգտագործումը, գտնվելու վայրը, վարկային պատմությունը, գրավը, և այլն:

Վարկառուի չափորոշիչների վրա հիմնված սքորինգային գնահատումը վարկավորման որոշումների կայացման գործընթացի հիմնական գործոններից մեկն է:

Անհատ վարկառուների գնահատման մեթոդաբանությունը հիմնված է հետևյալ չափանիշների վրա՝ կրթական մակարդակը, զբաղվածությունը, ֆինանսական վիճակը, վարկային պատմությունը, վարկառուին սեփականության իրավունքով պատկանող գույքը: Ձեռք բերված տեղեկությունների հիման վրա հաշվարկվում է վարկի առավելագույն սահմանաչափը: Վարկի առավելագույն սահմանաչափը հաշվարկվում է՝ կիրառելով վարկառուի պարտքային ծանրաբեռնվածության հարաբերակցությունը:

Բանկը կիրառում է ներքին մեթոդաբանություններ որոշակի կորպորատիվ վարկերի և մանրածախ վարկերի խմբերի համար: Այս սքորինգային մեթոդները մշակված են կոնկրետ վարկատեսակների համար և կիրառվում են վարկի ընթացքի տարբեր փուլերում: Որպես հետևանք, հնարավոր չէ կատարել վարկատեսակների խաչաձև սքորինգային համեմատություն, որը կհամապատասխաներ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաճախորդների վարկերի մնացորդին: Այդպիսով, ավելի մանրամասն տեղեկատվություն չի ներկայացվում:

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերը, որոնք, ըստ գործընկերների կողմից խախտումների ցուցանիշների վերաբերյալ պատմական տվյալների, չեն համարվում ժամկետանց կամ արժեզրկված:

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Սպառողական	0.28%	0.34%
Առևտուր	-	-
Արտադրություն	-	-
Շինարարություն	-	-
Հիփոթեքային	-	-
Գյուղատնտեսություն	0.08%	0.08%
Այլ ոլորտներ	0.12%	0.18%

Հաճախորդներին տրված վարկերի որակական վերլուծությունն, ըստ դրանց կատարողականի, ներկայացված է ծան. 17-ում:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի, գնահատվում են ըստ միջազգային վարկանիշային գործակալությունների կողմից տրված ընթացիկ վարկանիշերի, եթե դրանք առկա են:

Ժամկետանց, սակայն չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը, որոնց գծով վճարումներն ուշացված են միայն մի քանի օրով: Ժամկետանց վարկերի հիմնական մասը չի համարվում արժեզրկված: Ժամկետանց, սակայն անհատապես չարժեզրկված վարկերի ժամկետանց օրերի վերլուծությունն ըստ դասերի ներկայացվում է ծան. 17-ում:

Անհատապես արժեզրկված վարկեր

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մինչև անհատապես գնահատված արժեզրկման պահուստներով զտելը հաճախորդներին տրամադրված անհատապես արժեզրկված վարկերը կազմում են 785,795 հազար ՀՀ դրամ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 647,120 հազար ՀՀ դրամ): Տես՝ ծան. 16: Տարվա ընթացքում արժեզրկված վարկերի գծով հաշվեգրված տոկոսը կազմում է 87,039 հազար դրամ:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, երբ Բանկի շահույթները, կապիտալը կամ նրա՝ իր գործունեության նպատակներին հասնելու կարողությունը վատթարանում են՝ շուկայական տոկոսադրույքներում և գներում փոփոխությունների կամ դրանց անկայունության պատճառով: Շուկայական ռիսկն ընդգրկում է Բանկի՝ տոկոսադրույքի և արժութային հնարավոր ռիսկերը: Փոփոխություններ տեղի չեն ունեցել Բանկի ռիսկերի գնահատման մոտեցումներում կամ ռիսկի աստիճանում, ինչպես նաև ռիսկերի կառավարման և չափման մեթոդներում:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հնարավորությունն է Բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա: Տոկոսադրույքի ռիսկը ծագում է Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքերի և նրանց իրական արժեքի վրա տոկոսադրույքների փոփոխությունների ուղղակի ազդեցության հնարավորությունից: Բանկի Տնօրենների խորհուրդը սահմանել է տոկոսադրույքների միջև տարբերությունների սահմանաչափ ժամկետային կտրվածքով: Դիրքերը վերահսկվում են և հեջավորման ռազամվարություն է օգտագործվում դրանց ռիսկայնությունը ընդունելի շրջանակներում պահելու համար:

Գնային ռիսկ

Գնային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի շուկայական գների փոփոխության արդյունքում անկախ նրանից, թե փոփոխությունները հետևանք են առանձին արժեթղթին կամ դրա թողարկողին յուրահատուկ գործոնների, թե շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող գործոնների: Բանկը ենթարկվում է իր ապրանքների կամ ծառայությունների շուկայական գների փոփոխության ռիսկին, որոնք ենթակա են թե՛ ընդհանուր, թե՛ յուրահատուկ շուկայական տատանումների:

Բանկը կառավարում է գնային ռիսկն այն պոտենցիալ կորուստների պարբերաբար գնահատման միջոցով, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից, ինչպես նաև սահմանելով և պահպանելով համապատասխան վնասների կանխարգելման սահմանաչափեր և միջակայքերի (մարժաներ) և գրավի պահանջներ: Բանկի չտրամադրված վարկային պարտավորվածությունների գծով հնարավոր վնասների գումարը հավասար է այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարին: Այնուամենայնիվ, վնասի հավանական գումարը ավելի փոքր է քան այդ գումարը, քանի որ պարտավորվածությունների մեծ մասը պայմանական են՝ կախված մի շարք պայմաններից, որոնք սահմանված են վարկային պայմանագրերում:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս զուտ տոկոսային եկամտի և կապիտալի զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի մասին հաշվետվությունում, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով: Շահույթի կամ վնասի զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի և կապիտալի վրա՝ 2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով: Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի կամ սվոփի իրացման ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգայունության վերլուծությունը հիմնված է եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժի ենթադրության վրա, մինչդեռ մարման ժամկետայնության վերլուծությունը ցույց է տալիս զգայունություն ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

	2017 թ.			
Արժույթ	**Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում**	**Զուտ տոկոսային եկամտի զգայունություն**	**Կապիտալի զգայունություն**	**Ընդամենը**
ՀՀ դրամ	100	-	(220,567)	**(220,567)**
ԱՄՆ դոլար	100	(42,125)	-	**(42,125)**
ՀՀ դրամ	(100)	-	220,567	**220,567**
ԱՄՆ դոլար	(100)	42,125	-	**42,125**

	2016 թ.			
Արժույթ	**Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում**	**Զուտ տոկոսային եկամտի զգայունություն**	**Կապիտալի զգայունություն**	**Ընդամենը**
ՀՀ դրամ	100	-	(220,567)	**(220,567)**
ԱՄՆ դոլար	100	(23,589)	-	**(23,589)**
ՀՀ դրամ	(100)	-	220,567	**220,567**
ԱՄՆ դոլար	(100)	23,589	-	**23,589**

Արժութային ռիսկ

Արժութային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով, որը գնահատվում է յուրաքանչյուր առանձին արտարժույթի, ինչպես նաև արտարժույթով պահվող ակտիվների և պարտավորությունների ամբողջ պորտֆելի համար: Յուրաքանչյուր արժույթի դիրքի մասով Բանկը սահմանաչափեր է հաստատել: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար: Հետևյալ աղյուսակները ցույց են տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա:

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Բանկի վրա առ 31 դեկտեմբերի 2017 թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,901,286	5,301,299	863,948	298,400	459,898	35,824,831
Իրական արժեքով ֆինանսական ակտիվներ՝ շահույթի կամ վնասի միջոցով	-	-	-	-	-	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,685,883	11,168,357	30,009	152,119	-	13,036,368
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,296,862	-	-	-	-	4,296,862
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	53,384,410	45,599,407	5,231,062	1,679	-	104,216,558
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ						
- Բանկի կողմից պահվող	1,937,530	98,561	-	-	-	2,036,091
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	19,619,097	-	-	-	-	19,619,097
Այլ ֆինանսական ակտիվներ	138,742	-	-	-	-	138,742
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**109,963,810**	**62,167,624**	**6,125,019**	**452,198**	**459,898**	**179,168,549**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	**-**
Հետգնման պայմանագրեր	7,706	-	-	-	-	7,706
Թողարկված պարտքային արժեթղթեր	100,100	968,664	-	-	-	1,068,764
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	4,411,627	-	-	-	-	4,411,627
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,822,737	-	-	-	-	14,822,737
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր	-	15,689,094	4,607,660	-	-	20,296,754
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	91,205,090	235,096	21,338	242,374	-	91,703,898
Այլ ֆինանսական պարտավորություններ	315,404	-	-	-	-	315,404
Ստորադաս փոխառություններ	3,747,051	2,662,550	-	-	-	6,409,601
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**114,609,715**	**19,555,404**	**4,628,998**	**242,374**	**-**	**139,036,491**
Հաշվեկշռային բաց դիրք	(4,656,150)	42,612,220	1,496,021	209,824	459,898	40,121,812
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ						
Համախառն մարվող արժութային սվոփեր	730,079	(722,372)	-	-	-	7,706
Բաց դիրք	(3,926,071)	41,889,848	1,496,021	209,824	459,898	40,114,106

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Բանկի վրա առ 31 դեկտեմբերի 2016 թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Այլ արժույթ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11,699,402	14,937,009	4,286,951	918,001	218,466	**32,059,829**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,676	-	-	-	-	**1,676**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,475,928	2,861,303	159,209	491,007	-	**5,987,447**
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,552,427	-	-	-	-	**4,552,427**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	35,601,523	41,333,572	538,796	38,482	-	**77,512,373**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ						
- Բանկի կողմից պահվող	2,879,255	-	-	-	-	**2,879,255**
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	13,169,605	-	-	-	-	**13,169,605**
Այլ ֆինանսական ակտիվներ	69,706	3,388	2,157	2	-	**75,253**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**58,748,444**	**59,135,272**	**4,987,113**	**1,447,492**	**218,466**	**104,176,360**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	**-**
Հետգնման պայմանագրեր	13,224,755	-	-	-	-	**13,224,755**
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	2,989,000	-	-	-	-	**2,989,000**
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,962,440	7,486,463	235,019	322,140	-	**14,006,062**
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր	336,877	13,751,014	-	-	-	**14,087,891**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26,766,504	34,553,476	4,746,775	690,723	37,814	**66,795,292**
Այլ ֆինանսական պարտավորություններ	130,936	125,358	3,562	120,652	20	**380,528**
Ստորադաս փոխառություններ	2,722,721	2,677,451	-	-	-	**5,400,172**
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**52,133,233**	**58,593,762**	**4,985,356**	**1,133,515**	**37,834**	**116,883,700**
Հաշվեկշռային բաց դիրք	**18,278,680**	**541,510**	**1,757**	**313,977**	**180,632**	**19,316,556**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ						
Համախառն մարվող արժութային սվոփեր	1,676	-	-	-	-	**1,676**
Բաց դիրք	**18,280,356**	**541,510**	**1,757**	**313,977**	**180,632**	**19,318,232**

Արտարժույթի ռիսկի զգայունություն

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Բանկի զգայունությունը ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի, ռուբլու փոխարժեքի 10% աճի կամ նվազման հանդեպ: Տվյալ 10%-ն իրենից ներկայացնում է այն զգայունության տոկոսը, որն օգտագործվում է արտարժութային ռիսկը հիմնական ղեկավար անձնակազմին ներկայացնելիս և արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն է՝ ըստ ղեկավարության գնահատականի: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն վճարման ենթակա արտարժույթով գնանշված դրամական միավորները և ճշգրտում դրանց փոխարկումը ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 10% փոփոխության տեսանկյունից: Զգայունության վերլուծությունը ներառում է արտաքին վարկերը, որոնց դեպքում վարկի գնանշումը կատարված է վարկատուի կամ վարկառուի գործառնական արժույթից տարբեր արժույթով: Ստորև նշված դրական թիվը նշանակում է շահույթի կամ կապիտալի տարրի աճ այն դեպքերում, երբ ՀՀ դրամն արժեվորվում է ԱՄՆ դոլարի, եվրոյի, ռուբլու նկատմամբ 10%-ի չափով:

	2017 թ.			2016 թ.		
	Փոխարժեքի փոփոխություն	Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը		Փոխարժեքի փոփոխություն	Ազդեցություն շահույթի վրա նախքան հարկումը	
		Արժեվորում	Արժեզրկում		Արժեվորում	Արժեզրկում
ԱՄՆ դոլար	10%	72,900	(72,900)	10%	54,151	(54,151)
Եվրո	10%	309	(309)	10%	176	(176)
ՌԴ ռուբլի	10%	25,090	(25,090)	10%	31,398	(31,398)

Զգայունության վերլուծության սահմանափակումները. վերևում բերված աղյուսակում բերված է առանցքային ենթադրության փոփոխության ազդեցությունը այլ ենթադրությունների անփոփոխ պայմանների դեպքում: Իրականում ենթադրությունների, ինչպես նաև այլ գործոնների միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Հարկ է նաև նշել, որ այս զգայունությունները ոչ գծային են, և ավելի մեծ կամ փոքր ազդեցությունները չպետք է միջարկվեն (ինտերպոլյացիա) կամ արտարկվեն (էքստրապոլյացիա) այս արդյունքներից:

Զգայունության վերլուծությունում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ Բանկի ակտիվները և պարտավորությունները ակտիվորեն կառավարվում են: Ի լրումն, Բանկի ներկայիս ֆինանսական դիրքը կարող է տարբեր լինել այն ժամանակ, երբ որևէ իրական շուկայական շարժ տեղի ունենա: Օրինակ, Բանկի ֆինանսական ռիսկերի կառավարման ռազմավարությունը նպատակ ունի կառավարելու շուկայական տատանումների ազդեցությանը ենթակա լինելը: Երբ ներդրումային շուկաներն անցնում են զանազան շեմային մակարդակներից, Բանկի ղեկավարության արձագանքը կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ներդրումների վաճառքը, ներդրումային պորտֆելի բաշխվածության փոփոխությունը և այլ կանխարգելիչ միջոցառումներ: Հետևաբար, ենթադրությունների իրական փոփոխության ազդեցությունը կարող է որևէ ազդեցություն չունենալ պարտավորությունների վրա, մինչդեռ ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում են շուկայական արժեքով: Այս հանգամանքներում, ակտիվների և պարտավորությունների տարբեր չափման հիմունքները կարող են հանգեցնել Բանկի կանոնադրական կապիտալի տատանումների:

Զգայունության վերլուծության այլ սահմանափակումները ներառում են հիպոթետիկ շուկայական շարժերի կիրառումը պոտենցիալ ռիսկերը ներկայացնելու նպատակով, որոնք ընդամենը ներկայացնում են Բանկի տեսակետը մոտակա ժամանակների շուկայական հնարավոր փոփոխությունների վերաբերյալ և չեն կարող կանխատեսվել որևէ հավաստիությամբ, ինչպես այն ենթադրությունը, որ բոլոր տոկոսադրույքները շարժվում են համանմանորեն:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիությունը Բանկի ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ և սահմանված ժամկետներում կատարման հնարավորությունն է:

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Բանկն ի վիճակի չի լինի ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջները բնականոն և արտասովոր պայմաններում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի գրավների հասանելիությունը,

որն, անհրաժեշտության դեպքում, կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և դիվերսիֆիկացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ, Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է պահուստավորման նվազագույն պարտադիր ռեզերվը (տես ծան. 14-ը): Իրացվելիության ռիսկը գնահատվում և կառավարվում է տարբեր հնարավոր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ՝ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ իրավիճակների ծրագրի առկայությունը և վերահսկել իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական Բանկի պահանջներին համապատասխան:

Ստորև ներկայացվում է 2017 և 2016 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ մարմանը մնացած ժամկետների համաձայն: Մարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն, Բանկի կարծիքով, շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական հոսքերը Բանկի կողմից ավանդների պահպանման պատմությամբ: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, բացի բաժնային գործիքներից, ներկայացված են ցպահանջ և պակաս, քան մեկ ամիս կատեգորիաներում, քանի որ Բանկի ղեկավարությունը կարծում է, որ դրանք բարձր իրացվելի ակտիվներ են, որոնք կարող են վաճառվել ըստ պահանջի՝ ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների արտահոսքի պահանջն ապահովելու համար: Ավելին, հաշվի առնելով Բանկի կողմից պայմանագրային պահանջների խախտումները փոխառու միջոցների մասով (տես ծան. 25)

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	**1-3 ամիս**	**3 ամսից 1 տարի**	**Ընդամենը մինչև 1 տարի**	**1 -ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**	**Ընդամենը 1 տարուց ավել**	**Ընդամենը**
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,824,831	-	-	**35,824,831**	-	-	**-**	35,842,831
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	**-**	-	-	**-**	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,062,883	437,162	1,650,374	**9,150,419**	3,567,805	318,144	**3,885,948**	13,036,368
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,296,862	-	-	**4,296,862**	-	-	**-**	4,296,862
Հաճախորդներին տրված վարկեր	2,436,360	3,563,385	15,301,124	**21,300,869**	42,590,654	40,325,035	**82,915,689**	104,216,558
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	-	-	**-**	-	-	**-**	-
-Բանկի կողմից պահվող	-	364,623	1,195	**365,818**	1,037,870	632,403	**1,670,273**	2,036,091
-Հետգնման պայմանագրերով գրավադրված	-	-	-	**-**	10,311,852	9,307,245	**19,619,097**	19,619,097
Այլ ֆինանսական ակտիվներ	-	92,271	-	**92,271**	-	-	**-**	92,271
	49,620,936	4,457,441	16,952,693	**71,031,070**	57,508,181	50,582,827	**108,091,007**	179,140,078
Պարտավորություններ								
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ								
Հետգնման պայմանագրեր	-	-	20,511,989	**20,511,989**	-	-	**-**	**20,511,989**
ՀՀ Կենտրոնական բանկից և կառավարությունից ստացված վարկեր	2,980	78,900	1,833,744	**1,915,624**	2,496,003	-	**2,496,003**	**4,411,627**
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	135,964	1,298,058	2,270,403	**3,704,426**	10,242,259	876,052	**11,118,312**	**13,946,685**
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	59,398	567,078	991,862	**1,618,338**	18,295,698	382,718	**18,678,416**	**19,914,036**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	57,571,597	2,043,161	11,305,543	**70,920,302**	15,025,023	5,758,573	**20,783,596**	**91,703,898**
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	104,911	210,493	**315,404**	-	-	**-**	**315,404**
Ստորադաս փոխառություններ	-	-	-	**-**	-	6,409,601	**6,409,601**	**6,409,601**
	57,769,940	4,092,109	37,124,034	**98,986,082**	46,058,984	7,017,343	**59,485,927**	**157,213,240**
Զուտ դիրք	(8,159,251)	365,332	(20,171,341)	**(27,965,258)**	11,449,197	-	48,605,080	**21,916,591**
Կուտակային տարբերություն	-	-	-	**-**	-	-	-	

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	Ընդամենը մինչև 1 տարի	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը 1 տարուց ավել	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	32,059,553	276	-	**32,059,829**	-	-	**-**	**32,059,829**
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1,676	-	-	**1,676**	-	-	**-**	**1,676**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,440,587	211,805	732,653	**4,385,045**	-	1,602,402	**1,602,402**	**5,987,447**
Հակադարձ հետգնման պայմանագրեր	4,552,427	-	-	**4,552,427**	-	-	**-**	**4,552,427**
Հաճախորդներին տրված վարկեր	2,531,859	7,084,151	10,464,390	**20,080,400**	30,753,118	26,480,591	**57,223,709**	**77,314,109**
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ								
-Բանկի կողմից պահվող	-	-	-	**-**	**-**	2,879,255	**2,879,255**	**2,879,255**
-Հետգնման պայմանագրերով գրավադրված	13,169,605	-	-	**13,169,605**	-	-	**-**	**13,169,605**
Այլ ֆինանսական ակտիվներ	69,706	-	-	**69,706**	-	-	**-**	**69,706**
	55,825,413	**7,296,232**	**11,197,043**	**74,318,688**	**30,753,118**	**30,962,248**	**61,715,366**	**136,034,054**
Պարտավորություններ								
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ								
Հետգնման պայմանագրեր	-	13,224,755	-	**13,224,755**	-	-	**-**	**13,224,755**
ՀՀ Կենտրոնական բանկից և կառավարությունից ստացված վարկեր	30,288	5,527	909,980	**945,795**	2,043,205	-	**2,043,205**	**2,989,000**
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպ. նկատմամբ	5,310,710	1,095,625	5,300,125	**11,706,460**	1,506,214	793,388	**2,299,602**	**14,006,062**
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ	14,087,891	-	-	**14,087,891**	-	-	**-**	**14,087,891**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	32,670,383	6,451,891	21,843,091	**60,965,365**	5,648,943	180,984	**5,829,927**	**66,795,292**
Այլ ֆինանսական պարտավորություններ	302,760	72,571	5,197	**380,528**	-	-	**-**	**380,528**
Ստորադասված փոխառություն	38,502	-	-	**38,502**	-	5,361,670	**5,361,670**	**5,400,172**
	52,440,534	**20,850,369**	**28,058,393**	**101,349,296**	**9,198,362**	**6,336,042**	**15,534,404**	**116,883,700**
Զուտ դիրք	3,384,879	**(13,554,137)**	**(16,861,350)**	**(27,030,608)**	**21,554,756**	**24,626,206**	**46,180,962**	**19,150,354**
Կուտակային տարբերություն	**3,384,879**	**(10,169,258)**	**(27,030,608)**	**(27,030,608)**	**(5,507,914)**	**19,150,354**	**19,150,354**	

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հիմնվելով պայմանագրով նախատեսված՝ չզեղչված մարման պարտավորությունների վրա:

	Պահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	-	-	20,511,989	-	-	**20,511,989**
ՀՀ Կենտրոնական բանկից և կառավարությունից ստացված վարկեր	2,980	78,900	1,833,744	2,890,424	-	**4,806,048**
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	135,964	1,298,058	2,270,403	10,800,560	1,209,580	**14,504,985**
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և	59,398	567,078	991,862	19,980,468	499,800	**22,098,606**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	57,571,597	2,043,161	11,305,543	16,500,498	6,200,446	**93,621,245**
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	104,911	210,493	-	-	**315,404**
Ստորադաս փոխառություններ	-	-	-	-	6,800,590	**6,800,590**
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**57,769,939**	**4,092,108**	**37,124,034**	**50,171,950**	**13,500,836**	**162,658,657**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	-	-	-	-	-	-
Արտահոսք	-	-	-	-	-	-

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հիմնվելով պայմանագրով նախատեսված՝ չզեղչված մարման պարտավորությունների վրա:

	Պահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1 -ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր	-	13,224,755	-	-	-	**13,224,755**
ՀՀ Կենտրոնական բանկից և կառավարությունից ստացված վարկեր	13,179	5,552	912,506	2,051,276	-	**2,982,513**
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,310,710	1,095,625	5,300,125	1,506,214	793,388	**14,006,062**
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և	14,087,891	-	-	-	-	**14,087,891**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	32,670,383	6,451,891	21,843,091	5,648,943	180,984	**66,795,292**
Այլ ֆինանսական պարտավորություններ	302,760	72,571	5,197	-	-	**380,528**
Ստորադաս փոխառություններ	38,502	-	-	-	5,361,670	**5,400,172**
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**52,423,425**	**20,850,394**	**28,060,919**	**9,206,433**	**6,336,042**	**116,877,213**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	845,600	-	-	-	-	**845,600-**
Արտահոսք	(845,600)	-	-	-	-	**(845,600)**

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկն իրենից ներկայացնում է ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ, որն առաջանում է Բանկի կողմից ֆինանսական գործիքներում ներգրվավվածությունից, այդ թվում՝ գործընթացների, տեխնոլոգիաների, ենթակառուցվածքների գծով և արտաքին գործոնների ազդեցությամբ, բացի վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերից, մասնավորապես՝ իրավական և կանոնակարգային պահանջների արդյունքում առաջացող ռիսկերը և համընդհանուր ընդունված կորպորատիվ վարքագծի ստանդարտները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկերն այնպես, որ ֆինանսական կորուստների և վնասի կանխարգելումը համահունչ լինի Բանկի գործնական համբավի և ընդհանուր ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարման մեթոդների մշակման և գործընթացների իրականացման համար հիմնական պատասխանատվությունը կրում է Բանկի գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունն ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում՝ գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների պահպանում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի կրճատում:

Բանկի ստանդարտներին համապատասխանությունն ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Այդ դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին: